Սահյանի բնութենապաշտության ժողովրդական ակունքների մասին իմանում ենք իր իսկ խոսքերից, երբ վերհիշելով մանկությունը՝ բանաստեղծը վկայում է, թե ինչպես են մեծերի պատմած առասպելական հեքիաթներն ազդել իր մանկական երևակայության վրա, և ինչպես են դրանք կենդանացել Մյունյաց բնապատկերների շքեղ տեսքից: «Որոտանի կիրճում» ակնարկում Համո Սահյանը մանկական հուշեր է վերապրում. «Ղարաբաղի թանձր խավարի մեջ, մեռնող տատրակի սրտի նման թրթռում էր ճրագի բոցը և այդ աղոտ բոցի տակ ալևոր պապս հեքիաթներ էր պատմում լուսավոր աշխարհի ու լույսի թագավորության մասին:

*Պատմում էր, թե ինչպես մի անգամ, անհիշելի ժամանակներում, երբ դեռ աշխարհում չկային Որոտնաբերդն ու Տաթևի վանքը, Ղամշա սարը հրաշքով շարժվել է տեղից, չոքել Որոտանի կիրճում, փակել գետի ճանապարհը»<sup>6</sup>:*

Առասպելական այս գրույցները սնել են բնության հրաշքով հիացող բանաստեղծական միտքը, դրանց գումարվել են նաև վառ երևակայությունը, բնությունը որպես անզուգական մի այլաբանություն ընկալելու և բանաստեղծության համար որպես պատկերավորման հիմք ընդունելու՝ մանկական տարիքից սկիզբ առած բուռն ցանկությունը, որի մասին խոստովանում է մեկ այլ առիթով: «Երբ ես դեռ փոքր էի, և մենք սպրում էինք խոր ձորի մեջ, մեզ համար արևի ճանապարհը կարճ էր, երկու, իրար շատ մոտիկ, հանդիպակաց սարերի գագաթից գագաթ ընկած մի անտեսանելի կամուրջ... Մի օր մենք որոշեցինք բարձրանալ սարը և տեսնել, թե ո՞ր է գնում արևը: Հեռու, շատ հեռու արևմուտքում մենք տեսանք երկնքի մեջ մտած մի սպիտակ գագաթ: Արևն իջել էր այդ հեռավոր գագաթի վրա, որը վառվում էր մայրամուտի գույներով: Պատկերը շլացուցիչ էր, տպավորությունը՝ անպատմելի: Ես ուզում էի այդ մասին պատմել մարդկանց... Հիմա ես գիտեմ, որ պոեզիան, ամեն ինչից դուրս նաև պատմում է մարդկանց, մեզ շրջապատող կյանքի ու բնության հրաշալի, հեքիաթային, հսկայական մետաֆորների մասին»<sup>7</sup>:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Ղազիյան, Համո Սահյանի քնարերգության ժողովրդական ակունքները // Պատմաբանասիրական հանդես, 2005, № 3, էջ 77-87:

<sup>6</sup> Համո Սահյան, Գրչի, խոսքի, խոճի կշիռը (կազմող՝ Շչոբու Դավթյան), Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2003, 273 էջ:

<sup>7</sup> Լևոն Մկրտչյան, Զրույցներ բանաստեղծի հետ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 157:

Ահա՛ մանուկ ժամանակ լսած առասպելական, հեքիաթային պատումներով և Սյունյաց շքեղ բնությունից ստացած տպավորություններով է սնվել Մահյանի քնարերգությունը, որտեղ չտեսնված մեծ տեղ ունեն բնությունն ու բնության մետաֆորները: Հետագայում Մահյանն ուղղակի և անուղղակի անդրադառնում է մանկական իր տպավորություններին, իր քնարերգության բազմաթիվ էջերում պատմում է հայրենի լեռների ու գետերի մասին, իսկ ամենաշատը՝ ձորում ծվարած Սյունյաց գյուղերի ու մարդկանց, որոնք ձուլվում են բնությանը, դառնում նրա մի մասնիկը: Պատահական չէ, որ բանաստեղծություններից մեկում Մահյանն իրեն «ձորի պոետ» է անվանում (էջ 48):

**Մարի, ձորի, ծառի այլաբանական պատկերումները**

Մահյանական բնապատկերում մեծ տեղ են գրավում Սյունյաց լեռները. Գյազբեկ-Արամազդ, Մավվարդ-Աղոթարան, Մեծ Իշխանիկ և այլն: Լեռների իմաստավորումը բազմաշերտ է. նրանք և՛ ուղղակի պատմության հավերժական, դարավոր վկաներն են, և՛ բանահյուսական ակունքներից սերող անձնավորված հսկաներ: Անշուշտ, անձնավորված լեռների պատմությունները Սյունյաց հարուստ ավանդույթներից են սերում: Այսպես. «Սյունիք» բանաստեղծության մեջ Սյունյաց սարերը եղբայրներ են, որ տոհմով հավիտենությունից են գաղթել (էջ 72): Մահյանական այս պատկերը ուղղակիորեն կապվում է Հայկական լեռնաշխարհի ստեղծման մասին ավանդազրույցներին, ըստ որոնց՝ հայոց լեռները հսկա եղբայրներ են եղել, որ մի օր մոռացել են կապել իրենց գոտիները և կերպափոխվել են լեռների<sup>8</sup>: Մահյանը ստեղծում է անձնավորված լեռների նաև իր սեփական առասպելները: «Գյազբեկ» (էջ 82) բանաստեղծության մեջ Սյունյաց Բարգուշատի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը՝ Արամազդ-Գյազբեկը, ներկայանում է որպես հոգածու էակ, որը երկինքը քամում և մարդկանց տներն է տանում (էջ 82): Գյազբեկ-Արամազդը Մահյանի պոեզիայում ամենից հաճախ հիշատակվող լեռն է, որի հանդեպ մի անսահման քնքշանք, կարոտ ու հիացմունք է տածում բանաստեղծը, նրա փեշերի ծաղկահամ ջրերը, նրա լանջերի մայրական կաթի ու հայրական շնչի հոտը լեռան անձնավորումը կապում են սեփական արմատներին (էջ 83-84):

Ամպը քաշեմ,  
Կուրծքը բանամ Գյազբեկիս,  
Մոր կաթի հոտ,  
Մոր հոտ առնեմ, մանկանամ:

Փարվեմ-փովեմ  
Հասակն ի վեր Գյազբեկիս,  
Հոր շնչի հոտ,  
Հոր հոտ առնեմ, մարդանամ (էջ 84):

<sup>8</sup> Տե՛ս Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 10:

Քնարական զեղեցիկ տողերին առասպելական հնագույն պատկերացումներ են միահյուսվում: Բանաստեղծություններից մեկում ի հայտ է գալիս **վիհ-թոնիր-ների** պատկերը, որոնց մեջ հայր թխել է քարից հունցած իր ճակատագրի հացը:

Դու քար ես հունցել, քար ես գնդել  
Օրհասիդ խառն ու դառն օրերին,  
Ճակատագրիդ հացն ես թխել  
Վիհ-թոնիրներիդ թեժ կողերին (էջ 55):

Անշուշտ պատկերն անմիջականորեն հիշեցնում է հրաբխային թոնիր-լեռնագագաթների առասպելական պատկերացումները<sup>9</sup>, որոնք գիտակցաբար թե ենթագիտակցաբար ազդել են Սահյանի բանաստեղծական պատկերի վրա:

Լեռան պատկերը Սահյանի բնապատկերներում նաև ժամանակի այլաբանությունն է՝ օրվա, տարվա, դարի, մարդու կյանքի ժամանակի: Սարն ի վեր բարձունքը ժամանակի վերընթացն է, սարի ստորոտը՝ մահն ու ավարտը: Այսպես, յուրաքանչյուր օր սկսվում է սարն ի վեր վերելքով և ավարտվում ձորն ընկնելով:

Կակաչների բուքի միջով  
Քայլում է օրը,  
Ճիգով սարն է ելնում, ճիգով  
Ընկնում է ձորը (էջ 47):

Այստեղ ևս Սահյանն ակամա լեռան պատկերի առասպելական ընկալում է արտահայտում: Նույնպիսի մի վերելք է մարդու կյանքի ճանապարհը. մի լեռ, որի ոտքի տակ կիրճ է, վերելքը՝ ճերմակ ձիավոր, որը մարդկային տենչերի արտահայտությունն է, և ահա երազած լեռնագագաթը և վիհի անխուսափելի անկումը մարդու կյանքի այլաբանությունն են դառնում:

Լեռան ոտքի տակ կիրճ է վիհավոր,  
Լեռան բարձունքը՝ ճերմակ ձիավոր...  
.....  
-Թե՛ չեն դառնալու ոտքերս՝ թներ,  
Վա՛ր նայեմ, թե՛ վեր... (էջ 3):

Ի դեպ, լեռան այլաբանությունը՝ կապված մարդու կյանքի ժամանակին, բավական տարածված է գրականության մեջ: Այն ուշագրավ պատկերում է գտել Հովհ.Թումանյանի «Իմ լեռան ետև» բանաստեղծության մեջ: Լ. Շանթի

<sup>9</sup> Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 232:

«Կայսր» դրամայում նույնպես այն մարդու կյանքի, վերելքի, պայքարի ու անվերջ ձգտման այլաբանությունն է:

Մահյանի պոեզիայում լեռան բարձունքին հակադրվում է լեռան ստորոտի, կիրճի, ձորի պատկերավորումը՝ որպես անկման և մահվան այլաբանություն: Կիրճի, ձորի այսպիսի ընկալումն ակնհայտ է նաև վիշապ-ձոր պատկեր-խորհրդանիշում («Վիշապ է ձորն, արմանք-գարմանք, // Բերանը փակ է» էջ 46): Վերջին պատկերը դարձյալ շատ հարազատ է ժողովրդական առասպելական մտածողությանը, որը հարուստ է լեռան ստորոտում ապրող կործանիչ վիշապների առասպելներով: Մուօ ձորի պատկերը մահվան իմաստաբանությամբ ի հայտ է գալիս այլ բանաստեղծություններում ևս:

Ստվերները կախ են ընկել,  
Ուշ է, մայրամուտ է,  
Միրտս ինչ-որ վախ է ընկել,  
**Տատնա ձորը** մուօ է (էջ 138):

Մաբերն ու ձորերն ընդհանրապես հոսող ժամանակի, ուրախ և տխուր օրերի հերթագայության այլաբանական պատկերավորումն են դառնում Մահյանի պոեզիայում՝ տիեզերական դարի ու ժամանակի կառուցիկ ամբողջականությունն ապահովող:

Մավարդա սար է, Գյազբելա սար է,  
Իշխանասար:  
Տարի կա դառ է, տարի կա վառ է,  
Տարի կա՝ սառ:  
Չորգորա ձոր է, Որտոնա ձոր է  
Ու Տատնա ձոր:  
Տարի կա դար է, տարի կա օր է,  
Տարի կա՝ չոր... (էջ 141)

Մարի այլաբանական պատկերը առասպելաբանության մեջ ի հայտ է գալիս աշխարհի կառուցվածքի մասին ժողովրդական ըմբռնումներում: Մարը, ինչպես և ծառը, այն առանցքն է, որն իր ստորոտով կապվում է անդրաշխարհին ու մահվանը, իսկ գագաթով ձգվում դեպի երկինք՝ աստվածային ոլորտ: Պատահական չէ, որ հունական դիցարանում աստվածների գտնվելու վայրը Օլիմպոս լեռան բարձունքն է, իսկ հայոց առասպելներում սրբազան լեռ է Մասիսը<sup>10</sup>: Սրբազան լեռան, նրա վրա հանգրվանած նավի, նավից դուրս եկող ծառի և ծառի

<sup>10</sup> Տե՛ս **Ա. Պետրոսյան**, Մասիս/Արարատը՝ հայոց Օլիմպոս և նրա առասպելները // Լրաբեր հասարակական գիտությունների, 2020, № 2, էջ 158-178:

վրայի թռչնաձագի պատկերը, որոնք առկա են հայկական միջնադարյան բազմատարբերակ ծիսերգերում, քննության առարկա են դարձել բանագիտական աշխատություններում<sup>11</sup>: Այս պատկերը աշխարհի առանցքի առասպելական նկարագիրն է՝ հայ բանահյուսական ակունքներից սերող: Գիտակցաբար թե ալկանա Մահյանը խաղարկում է առասպելական այս պատկերացումները «Գիշեր» բանաստեղծության մեջ, որում Մահյանի քնարական հերոսը բարձրանում է Սյունյաց Աղոթարան լեռը ու ծառ է դառնում:

Բռնած գիշերի թանձր փեշերից,  
Գիշերի միջով, գիշերով լցված,  
Գագաթն եմ հասել Աղոթարանիս:  
Հասել, ծառացել ու ծառ եմ դարձել,  
Եվ արմատներ եմ արձակել հողում,  
Եվ սաղարթներ եմ տարածել հողին,  
Եվ Ծիր-Կաթինի փոշոտ, մշուշոտ  
Հարդն եմ շաղ տվել իմ սաղարթներին (էջ 154):

Բերված բանաստեղծության մեջ ուշագրավ է նախ և առաջ Մահյանի ընտրությունը. հիշատակվողը սովորական մի սար չէ, այլ Աղոթարանը, որը սրբազան լեռ է եղել: Ըստ Լիսիցյանի՝ հայերը աղոթելիս իրենց հայացքները այս լեռանն են դարձրել<sup>12</sup>: Բացի այդ, սարը բարձրացող քնարական հերոսը ծառի է փոխակերպվում, այնպիսի մի ծառի, որի սաղարթը երկնքում է, իսկ արմատները շոշափում են հավիտենության փեշերը: Ինչպես սարը, այնպես էլ ծառը աշխարհի առանցքն են նախնական առասպելական պատկերացումներում: Ավելին, ծառի պատկերն առասպելաբանության մեջ շատ ավելի հարուստ իմաստաբանություն ունի. այն աշխարհի մանրակերտն է, տարածության և ժամանակի ցուցիչը<sup>13</sup>:

Բլրի վրա աճած ծառին պատվաստվելով՝ նրան միաձուլվելու մոտիվը առկա է Մահյանի մեկ այլ բանաստեղծության մեջ ևս, որտեղ բանաստեղծը պատգամում է իր աճյունը թաղել մի հին կոճղի փչակում՝ ծլարձակվելու, վերընձյուղվելու հույսով:

Դագաղիս համար  
Դուք ծառ չկտրեք:  
Ինձ մի հին կոճղի  
Փչակում դրեք,-  
Անտառի եզրին,

<sup>11</sup> Տե՛ս **Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 25-27:

<sup>12</sup> Տե՛ս **Ստ. Լիսիցյան**, Ջանգեգուրի հայերը, Եր., 1969, էջ 279:

<sup>13</sup> Տե՛ս **Топоров В. Н.** Древо мировое // Мифы народов мира, М., 1992, էջ 398-406:

Բլուրի վրա:  
 Որ գնամ գտնեմ  
 Արմատը նրա  
 Արմատը գրկեմ...  
 Եվ ի՞նչ իմանաս,  
 Գուցե թե մի օր  
 Դեպի լույս աշխարհ  
 Մի շյուղ արձակեմ (էջ 158):

Ուշագրավ է, որ «Գիշեր» բանաստեղծության մեջ երկինք մեկնված մարդ-ծառը Ծիր-Կաթինին է հասնում: Աղոթարան սարի և Ծիր-Կաթինի միաձուլման պատկերներ առկա են նաև Սահյանի մյուս բանաստեղծություններում («Ծիր-Կաթինն իր երկրորդը՝ ձեր / Ջրում պիտի ճարի, / Աղոթարան սարի լճեր, / Աղոթարան սարի» (էջ 87):

Սրբազան Աղոթարան լեռան և հայոց Վահագն աստծո անվանն առնչվող առասպելական համաստեղծության զուգորդումը, կարծում ենք, ևս պատահական չէ: Լեռան և համաստեղծության ուշագրավ զուգահեռ ենք տեսնում մեկ այլ բանաստեղծության մեջ, որտեղ բանաստեղծը խաղարկում է երկնային հարդի առասպելական մոտիվը՝ այս անգամ կապված Գյազբեյ-Արամազդին:

Քիչ է մնում, թե մանկանամ,  
 Ելնեմ նորից Գյազբեյ գնամ,  
 Քունս տանի, մի քիչ ննջեմ,  
**Երազիս մեջ երկինքն հնձեմ\*:**

Ճիպոտ անեմ լեռան քամին,  
 Քշեմ, էլ բան չհարցնեմ,  
 Հարդից ջոկեմ աստղ ու լուսին,  
 Ու տուն բերեմ լուսը լուսին<sup>14</sup>:

Տիեզերական պատկերը՝ Գյազբեյում քնելու, երկինքը հնձելու և երկնային հարդը երկիր բերելու՝ աստղերից ջոկելու, հայոց երկնային առասպելի գեղեցիկ ներհյուսմամբ է ստեղծում Սահյանը: Երկինքը որպես ցորենի արտ հնձելու պատկերը համահունչ է հայոց հանելուկներում ի հայտ եկող աստղազարդ երկնքի՝ որպես հնձվելու պատրաստ արտի պատկերումներին<sup>15</sup>: Քննարկվող պատկերների վերլուծությունը փաստում է, որ Սահյանը քաջաձանոթ է եղել հայ առասպելաբանությանը:

\* Բանաստեղծություններում ընդգծումներն իմն են –Ն.Վ.:

<sup>14</sup> **Համո Սահյան**, Քարե պատարագ, Եր., «Նաիրի», 1999, էջ 364:

<sup>15</sup> Տե՛ս **Ս. Հարությունյան**, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1965, էջ 8:

### **Ցորենի առասպելը Սահյանի բանաստեղծություններում**

Հարուստ աշխարհ են բացահայտում նաև ցորեն-հասկի առասպելի արծարծումները Սահյանի բանաստեղծական աշխարհում: Հացի պաշտամունքը Սահյանի պոեզիայում հետևողականորեն զարգացող մոտիվ է: ***Ցորեն-հասկ-Աստված*** նշանային դրսևորումները եզակի չեն մնում և կրկնվում են բանաստեղծությունից բանաստեղծություն: Ժողովրդական նախաքրիստոնեական առասպելներում և ավանդագրույցներում ցորենը մի երիտասարդ պատանի է, որը մեռնում է, թաղվում հողում, այնուհետև կտրատվում, սրատվում, չարչարվում, իսկ վերջում մատուցվում մարդկանց՝ դառնալով կերակուր՝ «հոգու հոգի»<sup>16</sup>: Այս պաշտամունքը վերապրում է քրիստոնեական առասպելում, որում մեռնող-հառնող Աստված՝ Քրիստոսը, հացաբույսի մարմնացումն է: Նա չարչարվում է հանուն մարդկանց, մեռնում, թաղվում, այնուհետև հարություն առնում և մատուցվում մարդկանց որպես սուրբ նշխար: Սահյանական պատկերումները զուգահեռվում են այս ընկալումներին:

*Պիտի հավատամ իմաստուն **հասկին,**  
Որ մեռնելով է աշխարհը պահում,  
Եվ ինքն աշխարհից ոչինչ չի շահում*<sup>17</sup>:

*Երկրպագում եմ սուվերը **հասկի,**  
Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը  
Հասկի սուվերում ննջած մրջյունը*<sup>18</sup>:

Էլի ցորենն է աշխարհի հիմքը,  
***Փառք տանք ցորենին և օրհնաբանենք***  
***Ցորենի մահով մահը խափանենք,***  
Էլի ցորենն է աշխարհի հիմքը:

Մայրը՝ հողն է սուրբ, հայրը՝ երկինքը,  
Հող դարձնենք քարը և ցորեն ցանենք:  
Էլի ցորենն է աշխարհի հիմքը,  
Փառք տանք ցորենին և օրհնաբանենք<sup>19</sup>:

Այս արծարծումներում անթաքույց դրսևորվում են հեթանոսությունից սկիզբ առնող և քրիստոնեության մեջ շարունակվող հացի պաշտամունքի և ցորենի ա-

<sup>16</sup> Ցորենի հանելուկաշարի քննությունը տե՛ս Մ. **Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, էջ 357-365:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 401:

<sup>18</sup> **Համո Սահյան**, Դադի ծաղիկ, Եր., 1986, էջ 59:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 55:



ռասպելի հետքերը: Ակնհայտ է, որ ցորենի պաշտամունքի սահյանական ընկալումը խորապես սնվում է ժողովրդական ընկալումներից, պահպանում է ժողովրդական առասպելի այս հիմնաշերտը: Յորենի՝ որպես աստվածության պատկերումը («Սասվաճս ցորենին ասես»<sup>20</sup>), ցորեն-պատանու անձնավորումը բազմիցս տեսնում ենք Սահյանի բանաստեղծական աշխարհում («Ցերեկով նրանք արտ են քաղհանել, / Որ հասկի ոտքը փուշը չծակի», էջ 30):

Հասկի պատկերումներում Սահյանը ավելի խոր ակունքների է հասնում՝ անդրադառնալով աշխարհարարման առասպելին: Հայոց հավատալիքային աշխարհում աշխարհարարումը կապվում է ցորեն-հասկի առասպելին: Ըստ այդմ՝ նախապես երկինքն ու երկիրը իրար շատ մոտ են եղել, և նրանց միջև աճած ցորենը՝ արմատից հասկակալած, մինչև երկինք է հասել՝ դառնալով մի յուրօրինակ առանցք: Մարդկային մեղքի պատճառով հզոր մի ճայթյունով երկինքը հեռացել է երկրից, իսկ ցորենի հասկակալած մասը կրճատվել է<sup>21</sup>: Ուշագրավ է, որ ավանդագրույցի տարբերակներում ցորեն-հասկը հանդես է գալիս որպես մի տիեզերական առանցք՝ երկնքի և երկրի միջև ձգվող<sup>22</sup>:

Առասպելական այս ավանդագրույցը ուշագրավ գուգահեռ ունի Համո Սահյանի «Հասկը» բանաստեղծության մեջ: Ազգագրագետ Գոհար Ստեփանյանն իրավացիորեն այս բանաստեղծության մեջ տեսնում է աշխարհարարման հայկական առասպելի առարկայացումը: Ըստ նրա, այս բանաստեղծությունը կարծես «...քննարկվող առասպելի պոետիկ առարկայացումը լինի. այստեղ է և՛ ծնունդը, և՛ երկրին խոնարհված երկինքը, և՛ դեպի երկինք ձգվող ու երկրի՝ հողի մեջ ընկղմվող հասկը»<sup>23</sup>:

Ես աշխարհ եկա,  
Երբ հին աստվածներն արդեն չկային  
Եվ աստվածություն չկար աշխարհում,  
Խոնարհվել էր խոր  
Խոնավ երկինքը խոնարհ աշխարհին,  
Եվ բարակ-բարակ անձրև էր շաղում:  
  
Կանգնել էր դաշտում հասկը ցորենի  
Եվ խոնավ, խոնավ իր կոպերի տակ  
Հավիտենության խորհուրդն էր պահում  
Եվ շիկացնում էր նա կամաց-կամաց  
Իր հատիկների արևները հում:

<sup>20</sup> Համո Սահյան, Երկեր երկու հատորով, հ. 2, Եր., 1984, էջ 373:

<sup>21</sup> Տե՛ս Մտ. Լիսիցյան, Լեոնային Ղարաբաղի հայերը // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Եր., 1981, էջ 66:

<sup>22</sup> Ավանդության տարբերակների քննությունը՝ աշխարհարարման առասպելի համատեքստում տե՛ս Գ. Ստեփանյան, Նոր տարուց վերջին զանգ. Տոնական պրակտիկաներ, հիշողություն և վերակազմում, Եր., 2020, էջ 38-44:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 43-44:

Կանգնել էր դաշտում հասկը ցորենի  
 Աստվածավայել իր շշուկներով,  
 Իր մեծությունն էր տանում երբեմնի  
 Աստվածաբնակ երկինքներն ի վեր,  
 Իր աստվածային բեղիկներն ի վար  
 Հողին ու քարին  
 Օրհնություններ ու սարսուռ էր շաղում<sup>24</sup>:

Հին աստվածների կործանմանը հաջորդող՝ ցորեն-աստվածության այս պատկերումը կարելի է մեկնաբանել և՛ որպես Մահյանի բնապաշտության ևս մեկ ապացույց, և՛ քրիստոնեական կրոնի գաղափարական առանցքի՝ հացի պաշտամունքի մի ինքնատիպ բանաստեղծականացում:

Ուշագրավ է դիտարկել նաև ցորենի անձնավորման հակառակ դրսևորումը Մահյանի պոեզիայում, երբ մարդն է ներկայացվում որպես ծիլ, որպես ցորեն: Բնության մարդկային կերպավորման, ոգեղենացման օրինակներ, անշուշտ, Մահյանի քնարերգության մեջ շատ կարելի է հանդիպել: Մա անիմիստական մտածողության հիմնական սկզբունքն է, որտեղ մարդ-բնությունն փոխակերպումներն օրինաչափ են: Ինչպես ցորենն է մարդկային կերպար ստանում, այնպես էլ մարդը ծիլ է տալիս բույսի պես («*Ծիլ ենք տալիս հողից / Եվ սնվում ենք, աշխարհ, մենք քո հողով*», էջ 146): Եվ ինչպես ցորենը, այնպես էլ մարդն ի վերջո հողի գիրկն է վերադառնում, մարդու առաջ էլ «*վերջին դուռը բացողը*» հողն է (էջ 146):

Այս առումով խոսուն է բանաստեղծական պատկերը, որտեղ աշխարհը որպես ցանված արտ է պատկերվում («*Աշխարհն ասես արտ է ցանած- / Սպասում ենք՝ հասկահանի*»<sup>25</sup>): Մարդ-հասկ այս պատկերավորումը ևս ունի իր խոր արմատները առասպելական աշխարհում, և պատահական չէ, որ հոգեառ հրեշտակը ժողովրդական պատկերացումներում գերանդիով է պատկերվում, որը հնձում է մարդկային կյանքերը՝ ցորենի արտի պես:

Նշանային մեկ այլ ուշագրավ դրսևորում է *ցորեն-խոսք-նշխար* իմաստաբանության դրսևորումը Մահյանի պոեզիայում:

Չուզեցի ոչ փառք, ոչ իշխանություն,  
 Չապրեցի անվերջ գցել-բռնելով...  
 Եղա թափառող մի նշխարատուն-  
 Կրունկի վրա բացված դռներով:

<sup>24</sup> **Համո Մահյան**, Երկեր երկու հատորով, հ. 2, էջ 71-72:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 339:

Եվ նշխարներս բաշխեցի նրանց,  
 Ովքեր գիտեին գինը նշխարի...  
 Եվ ինձ աշխարհից ոչինչ չմնաց,  
 Մնաց բաշխվելու բերկրանքն աշխարհի<sup>26</sup>:

Բանաստեղծը՝ որպես նշխարատուն, բանաստեղծությունը՝ որպես նշխար: Այս պատկերացումը նոր չէ, իհարկե: Խոսքի պաշտամունքի հնագույն առասպելներում բանաստեղծը այն քուրմ-արարիչն է, որ աստվածային խոսքը բաշխում է մարդկանց՝ որպես սրբություն<sup>27</sup>: Քրիստոնեական կրոնում ևս խոսքի պաշտամունքը ավելի քան առանցքային է մնում, քանի որ Քրիստոսը ինքը՝ խոսքն է, որ տրված է մարդկանց, և որը բաշխվում է որպես հաց, որպես նշխար: Քրիստոսի կերպարում նույնանում են խոսքի ու հացի պաշտամունքը, և այս ուշագրավ հանգամանքը Մահյանի գրչով շատ յուրօրինակ արտահայտում է ստանում: Բանաստեղծի՝ որպես նշխարատան պատկերումը հազվադեպ դրսևորում է հայ բանաստեղծության մեջ, որի արմատները առասպելական հարուստ պատկերացումներ են միահյուսում: Խոսքի և ցորեն-բույսի այսպիսի զուգադրումը Մահյանի կողմից ամենևին պատահական չէ: Այս մասին են վկայում մոտիվի արտահայտումը նաև Մահյանի հետևյալ բանաստեղծական տողերում:

Մազարմատներ է արձակում բառը  
 Եվ ծիլ է տալիս դեպի լույս աշխարհ  
 Եվ քեզ է կանչում, մոլորված իմ գառ (էջ 115):

Ճիշտ է, այստեղ ցորենը չի հիշատակվում, սակայն արմատներ արձակող և ծլարձակող բառի պատկերը դարձյալ ուղղորդում է դեպի նույն առասպելը, որ քննարկեցինք վերը, իսկ գառան հիշատակումը քրիստոնեության ակնարկ է պարունակում հավանաբար:

### Եզրակացություն

Այսպիսով, ինչպես տեսանք, Համո Մահյանի բանաստեղծական աշխարհը լեցուն է բնության առասպելաբանաստեղծական պատկերավորումներով, որտեղ ակնհայտ են Մահյան բանաստեղծի՝ հայկական առասպելաբանության խոր իմացությունը և նախնական աշխարհայացքին բնորոշ մոտիվների օգտագործման հակումը: Մահյանի հմուտ գրչի տակ հայտնի և ոչ այնքան հայտնի

<sup>26</sup> **Համո Մահյան**, Ինձ բացակա չդնեք: Անտիպ բանաստեղծությունների ժողովածու, Եր., 1998, էջ 95:

<sup>27</sup> Տե՛ս **Ն. Խ. Վարդանյան**, Խոսքի պաշտամունքի և բանաստեղծի՝ որպես քուրմ-ծիսարարի առասպելական ընկալումների շուրջ // Բանահյուսություն և գրականություն: Միջազգային գիտաժողովի նյութեր, Գավառ, 2023, էջ 260-273:

առասպելները խիստ ուշագրավ դրսևորումներ են ստանում՝ հատուկ նրա յուրօրինակ բանաստեղծական ոճին: Սահյանի բնութենապաշտությունը, որ սերում է Սյունյաց աշխարհի հարուստ բանահյուսությունից և չտեսնված բնապատկերից, հետագայում է՛լ ավելի է հարստանում հայ առասպելաբանության ճանաչողությամբ, որի փայլուն վկայությունն են այդ առասպելների յուրօրինակ արծարծումները բանաստեղծական հյուսվածքներում: Այդպիսի օրինակներից ներկա հոդվածում քննվեցին լեռան, ձորի, ծառի, ցորենի առասպելական պատկերների արծարծումների որոշ արտահայտություններ: Բերված օրինակները, սակայն, մի մասն են այն հարուստ դրսևորումների, որոնց, անշուշտ, մեկ հոդվածում անհնար է անդրադառնալ, և որոնք դեռ շատ նյութ կարող են տալ հետագա ուսումնասիրությունների համար:

**НВАРД ВАРДАНЯН – Мифические истоки пейзажа в поэзии Амо Сагияна.** – В статье рассматриваются мифические истоки пейзажа в поэзии Амо Сагияна. В частности, рассматриваются проявления одухотворения природы, мифологической аллегории, отождествления и слияния человека с природой, вытекающие из спиритуалистического мировоззрения. Мифологические сюжеты, услышанные в детстве от бабушки, переплетенные с впечатлениями, полученными от великолепного Сюникского пейзажа, в дальнейшем обуславливают богатые сказочными аллегориями выражения сагияновского пейзажа. Пейзаж переплетается с мифом, становится средством мифотворческого изображения мира и раскрывает новый заряд первоначальных мысленных образов в восприятии поэта-натуралиста 20-го века. Ось мира, гора, древо жизни, тандыр на горе, парень-пшеница, драконье ущелье - поглощающее солнце, и другие мифологические представления обретают новую жизнь и форму выражения посредством пера поэта, глубоко чувствующего природу. Именно на этой основе в дальнейшем формируется уникальная система символов родной природы Сагияна, которая выходя за рамки Сюникских границ, завершает мифологическую и творческую картину родины.

**Ключевые слова:** Амо Сагян, пейзаж, Сюник, миф, знаковая система, мифотворческий образ мира, гора, дерево, пшеница

**NVARD VARDANYAN – The Mythical Origins of Landscape in the Poetry of Hamo Sahyan.** – The article examines the mythical origins of landscape in the poetry of Hamo Sahghyan. In particular, the manifestations of the spiritualization of nature, mythological allegory, identification and fusion of man and nature, arising from the spiritualistic worldview, are considered. Mythological stories heard from grandfather in childhood, intertwined with impressions received from the magnificent Syunik landscape, subsequently determine the expressions of the Sakhyan landscape, rich in fabulous allegories. The landscape is intertwined with myth, becomes a means of mythological creative depiction of the world and reveals a new charge of original mental images in the perception of the 20<sup>th</sup> century naturalist writer. The axis mundi, the mountain, the tree of life, the tandoor on the mountain, the wheat guy, the dragon gorge - absorbing the sun, and other mythological ideas take on a new life and form of expression with the help of a writer who deeply studies nature. It is on this basis that a unique system of symbols of the native nature of Sahghyan is subsequently formed, which goes beyond the borders of Syunik, completing the mythological and creative picture of the homeland.

**Key words:** Hamo Sahyan, landscape, Syunik, myth, sign system, myth-making image of the world, mountain, tree, wheat

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԲԱՐԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ \* 

*Երևանի պետական համալսարան*

Խաչատուր Աբովյանի գրական և մանկավարժական գործունեությունն անքակտելի կապված է նոր գրական հայերենի՝ արևելահայերենի ձևավորման և զարգացման պատմության հետ: «Մեծ լուսավորիչ» տիտղոսին արժանացած Աբովյանը մեծ ջանքեր է ներդրել, որպեսզի կրթությունը հասանելի դառա բոլոր երեխաների, հասարակության տարբեր շերտերի համար: Այդ շրջանում հին գրական հայերենը՝ գրաբարը, արդեն կորցրել էր իր հաղորդակցական հնարավորությունները, բայց նոր գրական լեզուն դեռ ձևավորված չէր, հասարակության տարբեր շերտերը հաղորդակցվում էին հայերենի բազմազան բարբառներով: Մխիթար աբբահոր և Մխիթարյան միաբանության նվիրյալ գործունեությունը ոգևորել է երիտասարդ Աբովյանին՝ վերակենդանացնելու հին գրական հայերենը: Այս է պատճառը, որ մեծ գրողը ստեղծել է հին հայերենով գրված հարուստ գրական-գիտական ժառանգություն: Նա հին հայերենով գրել է հոգևոր բանաստեղծություններ, աղոթքներ երեխաների և մեծահասակների համար, ինչպես նաև Դորպատում իր ուսումնառության կարևորագույն շրջանի մասին պատմող օրագրերը: «Դորպատյան օրագրերի» լեզուն դյուրընկալ, պարզ, ժողովրդական գրաբարն է, որով, ըստ ամենայնի, հաղորդակցվում էին երիտասարդ էջմփածնական ուսանողները: Հոդվածում բացահայտվում են աշխարհաբարի ձևավորման ընթացքին վերաբերող աբովյանական մոտեցումները և գաղափարաբանությունը՝ հին հայերեն (գրաբար) - բարբառներ - նոր գրական հայերեն (աշխարհաբար) միացյալ, ժառանգորդական ամուր հիմքի վրա:

**Բանալի բառեր** - *գրաբար, բարբառներ, աշխարհաբար, հին լեզվի կենսունակացում, Մխիթարյան միաբանություն, գրաբարագիր բանաստեղծություններ, «Դորպատյան օրագրեր», նորակազմ բառեր, փոխառություններ*

\* **Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

**Нарине Дилбарян** – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Narine Dilbaryan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ [narine.dilbaryan@ysu.am](mailto:narine.dilbaryan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0000-0003-1212-0029>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 23.09.2023

Գրախոսվել է՝ 13.02.2024

Հաստատվել է՝ 27.02.2024

© The Author(s) 2024

«Մեծ լուսավորիչ» պատվանունը կրող Խաչատուր Աբովյանի գործունեությունն անբաժանելի է նոր գրական հայերենի՝ արևելահայերենի ձևավորման և զարգացման պատմությունից. նա ջատագովն էր կրթության և գրականության ոլորտում նոր գրական հայերենի առջև դարպասները բացելուն և բոլորին հասանելի լեզվով հայոց դպրությունն առաջ մղելու համազգային առաքելության, որի առաջամարտիկն էլ եղավ: Եվ այս ամենի համապատկերում կարծես սովորում է մնացել կամ անտեսվել է հին գրական հայերենի՝ գրաբարի հանդեպ նրա իրական վերաբերմունքը, նախնյաց ոսկեղենիկ գրական լեզվին տիրապետելու և այն վերակենդանացնելու՝ գրականության, անգամ հաղորդակցության լեզու դարձնելու եռանդուն փորձերը: Նոր և հին գրական հայերենների մրցապայքարի հանգուցալուծումը Աբովյանի համար ի սկզբանե միանշանակ չէր, նրա ստեղծագործությունների լեզվական վերլուծությունը բացահայտում է դիրքորոշումների փոփոխությունները, դրանց հիմնապատճառները: Մեր այս ուսումնասիրության միջոցով վեր ենք հանել Աբովյան լեզվաշինարարի և գրապայքարի գաղափարախոսի ելակետային մոտեցումները՝ հին հայերեն (գրաբար)→բարբառներ→նոր գրական հայերեն (աշխարհաբար) եռանկյունու տիրույթում:

Որպես կանխադրույթ ընդգծենք, որ Խաչատուր Աբովյանը թողել է գրաբարագիր նշանակալի ժառանգություն, ինչպես արձակ, այնպես էլ բանաստեղծական գործեր, կրոնական քարոզներ՝ տաղավար տոների առիթով, աղոթքներ: Ուշագրավ է, որ գրաբարագիր բանաստեղծական գործերը հիմնականում հոգևոր տաղեր են, Գրիգոր Նարեկացու հիմնադրած գանձերի ոգով գրված, այսինքն՝ պատմողական-նկարագրական բովանդակությամբ, ձևով կա՛մ հանգավոր, կա՛մ արձակ բանաստեղծություններ, երբեմն էլ առանց հանգի տաղաչափված գործեր, ինչպես Էջմիածնին և սուրբ կույս Մարիամին ձոնված ներբողները, որոնց համար Աբովյանն օգտագործում է «դրուստ» անունը<sup>1</sup>: Հոգևոր այս բանաստեղծությունների ընթերցումից պարզ է դառնում, որ հեղինակը դրանք ի սկզբանե գրել է որպես երգեր՝ հայկական կրոնական երաժշտարվեստի զարգացման համար: «Դորպաստյան օրագրերի» բազմաթիվ էջերում երիտասարդ Աբովյանը պատմում է, թե ինչպես էր ինքը մտնում գերմանական եկեղեցիներ և ժամերով ականջալուր լինում նրանց հոգևոր երգերին՝ անընդհատ տանջվելով այն մտքից, որ մեր հոգևոր երգերը երիտասարդներին ծանոթ չէին, և, ամենակարևորը, մենք կորցրել էինք մեր երգերի նոտագրման բանալիները: Օրագրության մի կարևոր դրվագ հիշատակեմ. երաժշտության սեմինարին գերմանացի ուսուցիչն Աբովյանին խնդրում է երգել հայկական՝ իր ձևակերպմամբ «կանոնատրեալ երաժշտութիւն», բայց երիտասարդ հայ ուսանողը հրաժարվում է՝ բացատրելով, թե մենք չունենք նոտագրված երգեր, ու

<sup>1</sup> Տե՛ս **Խաչատուր Աբովյան**, Բանաստեղծություններ. Մա կոչում եմ այժմ և այսուհետ, մինչև օրերը հավիտենական՝ Հայաստան, Եր., 2023:

ստանում իրեն խորապես ցավ պատճառող, բայց արդարացի թվացող վիրավորական արձագանք: Մեջբերեմ այդ հատվածը. «...երաժշտութեան դաստիարակն պարոն Բեդերման խնդրեաց ընդ այլոց երգել, այլ ոչ կարելն իմ, ըստ կարգի հարցանէ, թէ մի թէ ոչ գոյ ի մեզ կանոնաւորեալ երաժշտութիւն: Ի պատասխանելն իմ այդ, այլ առանց նշանակիտաց (նոտից). «Այդպէս երգեն, ասէ, հուտենտոտք և ամենայն վայրի ազգք»: Այս ցաւեցոյց զիս, այլ ասաց զճշմարիտն» (67)<sup>2</sup>: Մեծն Կոմիտասը դեռևս աշխարհ չէր եկել՝ իրականացնելու իր մեծ առաքելությունը՝ մաքրագործելու և գրառելու հայկական երաժշտարվեստի մոռացված գործերը: Իսկ Աբովյանը հեռավոր Դորպատում մի քանի տասնամյակ առաջ անընդմեջ տանջվում էր այդ մոռացման, մշակութային խզման ծանր հետևանքներից: Դորպատյան օրագրությունն ապացուցում է, որ ապագա ուսուցչին, մանկավարժին գրավում էին ոչ միայն զուտ հոգևոր երգերը, այլև կենցաղի ու աշխատանքի, սիրո երգերը, նա իր սիրելի ուսուցչից՝ պրոֆեսոր Ֆրիդլենդերից սովորում էր շոտլանդական, ապա գերմանական ժողովրդական երգեր և ասում, թե ցանկանում է դրանք գրառել, որպեսզի հետագայում հայաստանցիներին ծանոթացնի նման մեղեդիների հետ: Ֆրիդլենդերը նրբանկատ էր, առավել քաջազիտակ հայոց մշակութիւն, ուստի նրա պատասխանը Աբովյանին ոգևորող էր. «Դուք ինքնին ունիք զայնպիսի մաքուր զգայութիւնս, ջանացարուք, ասէ, ինքնաստեղծ բանիք ներհեղուլ ի սիրտս ձերայնոց զայսպիսի ամուսնական և ընկերական կապակցութիւնս» (133): Աբովյանի հետագա բոլոր բանաստեղծական գործերն ուղղված էին նաև այս նպատակին՝ դառնալ երգեր, բայց ժամանակը բարդ էր ու խառնակ, և միայն հետագայի երգահանները սկսեցին Աբովյան բանաստեղծի տաղերով երգեր գրել: Իսկ գրաբարով գրված գործերը դեռևս սպասում են իրենց նոր երաժշտական բացահայտումներին:

Հայտնի են նաև մեծ լուսավորչի գրչին պատկանող չափածո բազմաբնույթ աղոթքները՝ ձոնված օրվա տարբեր պահերին, հոգեվիճակներին ու նախաձեռնումներին: Հատկապես ուզում եմ առանձնացնել աշակերտների համար գրված աղոթք-բանաստեղծությունները՝ «Աղօթք նախ քան զդասն» և «Զկնի դասին»<sup>3</sup>, որոնց միջոցով նվիրյալ ուսուցիչը և՛ գրաբար էր սովորեցնում մանուկներին, և՛ Արարչի, ծնողների ու հայրենիքի հանդեպ սեր ու հարգանք սերմանում:

Աբովյանի գրաբար ստեղծագործությունների մեջ իր ծավալով և բնույթով, անշուշտ, առանցքային նշանակություն ունի արձակը՝ «Դորպատյան օրագրերը», որը սկսվում է 1830 թվականի օգոստոսի 25-ին Պետերբուրգից «Իմ սիրելի

<sup>2</sup> Այսուհետ Խաչատուր Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի ութ հատորյակի 6-րդ հատորում առաջին անգամ տպագրված (Հայկական ՍՍՌ հրատարակչություն, Եր., 1955) «Դորպատյան օրագրերի»-ից հղումների էջերը կնշենք մեջբերումներին կից:

<sup>3</sup> Տե՛ս Խաչատուր Աբովյան, Աղոթարան, Եր., 2023:

Առաքելին» ուղղված նամակ-նախաբանով և ավարտվում 1835 թվականի մարտի 25-ին գրված հարուստ նոթերով: «Դորպատյան օրագրերը» կարող ենք համարել բանալի-ստեղծագործություն Խաչատուր Աբովյան անհատի և գրողի, մանկավարժի ու հանրային-քաղաքական գործչի կայացումը հնարավորինս ամբողջական հասկանալու և գնահատելու տեսանկյունից: Նշյալ օրագրությունը թերևս հենց լեզվի պատճառով բավական թերարժևորված է: Օրագրերի առաջին տպագրությունը Խաչատուր Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի 6-րդ հատորում է, հանգամանալի ծանոթագրություններով, բայց օրագրությանը կցված է կանխակալ նսեմացնող մի գրություն Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի անունից, որտեղ անվերապահ նշված է. «Օրագրերի գրական մշակումը հեռու է կատարելությունից: Նկատելիորեն թերի է շարադրանքը, կան նման դեպքերի և զանազան նկարագրությունների բազմաթիվ կրկնություններ: Անմշակ է հատկապես լեզուն, որը աղճատված գրաբար է՝ խառն աշխարհաբարի և բարբառի տարրերով: Անշուշտ այդ թերությունները հետևանք են այն բանի, որ օրագրերը չեն գրվել տպագրության համար, չեն ենթարկվել վերջնական մշակման և անմիջական տպավորությունների ու հույզերի սուսկ արձանագրություններ են» (4):

Մեր այս ուսումնասիրության հիմնական նպատակներից մեկն էլ այն է, որ փաստացի հերքենք նման որակումները, քանզի դրանք հեռու են իրականության արտացոլումից: Նախ՝ լեզվի մասին. դորպատյան օրագրության լեզուն իրոք գրաբարն է, բայց բնավ ոչ աղճատված: Ողջ օրագրության ընթերցումից և երիտասարդ Աբովյանի բարձրաձայնած նպատակներից ակնհայտ է, որ նա արդեն 1830 թվականին մտահոգված էր կարևորագույն խնդրով՝ ինչպիսի լեզվով հաղորդակցվել ժամանակակիցների հետ, կրթել նրանց, փոխանցել իր փորձը և արժեքները: Ասպարեզում դեռևս մենաշնորհային դիրք ուներ հին գրական հայերենը, բայց նրան կրնկակոխ հետապնդում և բազում ոլորտներում արդեն դուրս էին մղում ժամանակի խոսակցական հայերենը, ինչպես նաև բարբառները, հիմնականում արևելյան բարբառախմբի ամենամեծ ճյուղավորումը՝ Արարատյանը՝ իր բազմաթիվ խոսվածքներով: Այսինքն՝ 21-ամյա երիտասարդ մտավորականն ուներ երեք գումարելի՝ գրաբար, խոսակցական լեզու և բարբառներ, որոնցից պետք է ստանար նոր հանրագումար՝ 19-րդ դարի գրական հայերենը:

Իբրև հոգևոր կրթություն ստացած էջմիածնական վանական՝ Աբովյանը նախապես կարծում էր, թե նորի հիմքը պետք է կառուցել հին գրականի հիմքի վրա՝ հաշվի առնելով հին գրականով ստեղծված գեղարվեստական, գիտակրթական հարուստ ժառանգությունը, մշակված քերականությունը, ոճական արտահայտչամիջոցներն ու բառակազմական կառույցները: Այսինքն՝ Աբովյանը ձգտում էր գրաբարի հաղորդակցական հնարավորությունների գործնական կենսունակացման, ոճական հղկման և բառակազմական ու քերականական կաղապարների բազմազանության ստեղծման:



Օրագրերի լեզվի խնդիրը քննելիս չպետք է մոռանալ հատկապես Մխիթար Սեբաստացու մեծ ազդեցությունն այն ժամանակ իր կրթագիտական առաջին քայլերը կատարող Աբովյանի վրա: Հիշենք, որ նրա երազանքը Վենետիկ մեկնելն էր և այնտեղ ուսանելը: Այդ մասին բազմաթիվ կարևոր վայություններ կան հենց Դորպատի օրագրերում. «Գրական ժամանցի թերթեր, № 5, 6 հունվարի 1929 թ. Լեյպցիգ, Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Հայոց վանքը» գերմաներեն գրված հատվածում մենք կարդում ենք Մխիթար Սեբաստացու և իր միաբանների, նրանց աջակիցների նվիրյալ գործունեության մասին մի փաստառատ հիմնավոր հոդված, որտեղից ակնհայտ է Աբովյանի անվերապահ հիացումը Մխիթարյանների վաստակով և գործունեությամբ: Այնուհետև, 1832 թ. հունվարի 13-ի երեկոյան նոթերում երիտասարդ ուսանող Աբովյանը նկարագրում է իր գրույցը ուսուցիչ-բարերար Պարրոտի հետ պաշտելի Մխիթար արքահոր մասին, որին կոչում է «Մեծերախտն Մխիթար արքա», Պարրոտն արձագանքում է իր աշակերտի ոգևորությանը գնահատանքով, բայց վերապահումով. «Ափսոս, ասէ, եթէ փոփոխ կրօնիք, ոչ օտարեալ ի մայրենի եկեղեցոյն իւրոյ հայոց, տարածել, այո՛, նորա դասելի է ի թիւս մեծանց արանց աշխարհի» (128), իսկ երբ Աբովյանը սկսում է խոսել իր փափագի մասին՝ երբևէ հասնելու Վենետիկ և այնտեղ ուսանելու, Պարրոտը պատասխանում է հույժ կտրուկ. «Ձանացարուք առնել գայս, ասէ, այլ մի՛ լիցի փոփոխիլ զհաւատ ձեր եւ լինիլ կաթովիկ: Եւ ես եթէ լուայց գայս ի ձէնջ, յայնժամ մի՛ այլ եւս յիշեսցի անուն ձեր ինձ» (128): Ազատական բողոքականությունը կաթովիկներին վերաբերում էր իբրև կայսերապետական բռնաճնշիչ կրոնի կրողների, ուստի գերմանացի Պարրոտը սպառնալիքի ոգով զգուշացնում է իր սանին՝ չտրվել այդ հոսանքին: Ըստ ամենայնի՝ Խաչատուր Աբովյանի կյանքում այդպիսի հորդոր-սպառնալիքներ շատ են եղել, ուստի Վենետիկ մեկնելու նրա փափագը անկատար է մնում, ինչպես նաև գրաբարը արդի խոսակցական լեզու դարձնելու տեսլականը, հանուն որի մխիթարյան հայրերը վիթխարի գործ կատարեցին՝ գրաբարով ստեղծելով ժամանակակից դասագրքեր, պարբերականներ, ինքնուսույցներ: Այս բոլոր հանգամանքների ազդեցության ներքո Աբովյանը հակվում է ժողովրդական, բարբառային լեզուն գրականացնելու գաղափարին, որտեղ գրաբարը ոչ այնքան հենք էր, որքան՝ շտեմարան<sup>4</sup>:

Երբ գրաբարագետի անկիրք հայացքով քննում ես դորպատյան օրագրության լեզուն, ակնհայտ է, որ քերականական համակարգային մեղանչումներ, սխալ շարահյուսական կառույցներ գրեթե չկան ո՛չ անվանական կամ դերանվանական հոլովումների, ո՛չ բայերի խոնարհման համակարգերում. ըստ ա-

<sup>4</sup> Գրաբարը խոսակցական լեզու դարձնելու Մխիթարյանների և նրանց գաղափարակիցների տեսական ու գործնական ջանքերին հանգամանակից անդրադարձել է Վ. Համբարձումյանն իր «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.», Եր., 1990, աշխատության մեջ (տե՛ս 98-127 էջերը):

մենայնի՝ «աղճատված» մակդրի հիմքում 1830 թվականին կենդանացող գրաբարի բառապաշարում Աբովյանի հետևողական ամրագրած նորամուծություններն էին: Նախ՝ անդրադառնանք ուսանող Աբովյանի կիրառած նորակազմություններին, այսինքն՝ այն գրաբարյան բառերին, որոնք «Նոր հայկազյան բառարանում» վկայված չեն, դրանք հիմնականում նոր հասկացությունների անվանումներ են, ինչպես նաև հին բառերի նոր հոմանիշները, որոնք կիրառության մեջ են դրվել բարբառների կամ ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ: Բերենք ձևի և բովանդակության տեսանկյունից ուշագրավ նորակազմությունների օրինակներ՝ **լալակրկնել** (195) - *լալով կրկնել*, **երեքնել** (199) - *երեք անգամ կատարել*, **նեղաքուչայ** (199) - *նրբանցք*, **կիսակօշիկ** (199) - *կոշիկի վրայից հատուկ հագնվող կարճավիզ ոտնաման*, **ծոցագիր** (199) - *ծոցատետր*, **շրջակողմանք** (201) - *շրջակայք*, **մտաուրիլ** (209) - *մտադրվել*, **ողջունատրություն** (201) - *ողջունում*: Այս բառերը, ինչպես նշեցինք, գրաբարի բառարաններում վկայված չեն, բայց դրանք 18-19-րդ դարի ժողովրդական գրաբարի բառապաշարի միավորներ են, որոնք կազմվել են դասական գրաբարի բառակազմական կաղապարներով մեծամասամբ գրական հայերենի արմատներից, թեև ունենք բարբառային փոխառություններից կազմված հոդակապով բարդություններ ևս, ինչպես՝ **նեղաքուչայ**: Վկայված է նաև գրաբարյան բառերի իմաստափոխության միջոցով նոր բառերի առաջացման երևույթը, այսպես՝ ՆՀԲ-ում վկայված է **ձեռնակալել** բայը<sup>5</sup>, որի արմատից կազմված **ձեռնակալություն** գոյականը ՆՀԲ-ում բացակայում է, Աբովյանն այն հաճախակի է օգտագործում, բայց բնավ ոչ ՆՀԲ-ում նշված իմաստով՝ *ձերբակալել*, *ձեռքերին շղթաներ հագնել*, այլ՝ *ձեռքսեղմում կատարել* նոր նշանակությամբ, **ձեռնակալություն** - *ձեռքսեղմում*: «Ա՛հ, բարեկամ այդպես շուտով վերադարձայք ի ճանապարհե՛». համբոյր, *ձեռնակալություն*, համեստ ողջունատրություն նորա» (204):

Հետևաբար, Աբովյանի գրաբարը պետք է բնորոշել ոչ թե «աղճատված», այլ «արդիականացված» մակդիրով: Նոր ժամանակներ՝ նոր հասկացություններ, որոնց համար պետք էին նոր անվանումներ, որոնք երիտասարդ ուսանողը քաղում է ուսերենից և գերմաներենից. փոխառյալ օտար բառերն իրոք մեծ տեղ են գրավում օրագրության շարադրանքում: Բերենք բնութագրական հաճախադեպ փոխառությունների օրինակները՝ *ալգեբրա*, *ալեա*, *աֆիցեր*, *բալկոն*, *բատյուշկա*, *բեդել* (կառավարիչ), *բիլեթ*, *բարսիլիացի*, *բուտիլկա*, *դամա/տամա*, *դոքտոր*, *եքզեմպլեար*, *էստ*, *գալ*, *կազեթ* (թերթ), *կալոշ*, *կատեթ*, *կարավաթ* (մահճակալ), *կարտ*, *կլաիր*, *կիթառ*, *կոնգոլ*, *կոնցերտ*, *կուխն* (խորտիկ), *դայֆա*, *մադամ*, *մայեօր*, *մամզել*, *մինիստեր/մինիստր*, *մինիրալոզ* (հանքաբան), *մուզիկ*, *շտուտենտ/ստուտենտ*, *շլաֆրոկ* (տնային ազատ հագուստ), *շտուտենտ/ստուտենտ* (ուսանող), *շտոֆ* (չափման միավոր աման), *շտուտեն-*

<sup>5</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմելեան, Հայր Մկրտիչ Աւգերեան: Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837, հ. 2, էջ 152:

*տական, շեօտկայ* (համրիչ), *պանտոֆիլ* (խալաթատիպ վերնազգեստ), *ստացիոն* (կայարան), *պաստոր*, *պիվօ*, *պոլեակ* (լեհ), *պրոֆեսոր*, *պրոֆեսորուհի*, *ռեկտոր*, *տֆա* (փափուկ թախտ), *վերստ*, *ունիֆորմ*, *ցիգար* (սիգար), *փոշթ/փոստ*, *փրուսեացի*, *ֆարրիկ*, *ֆոնտան*, *ֆրանցերեն* և այլն:

Հիշյալ բառերի քննությունը պարզ է դարձնում, որ դրանք սակավ բացառություններով նորաբանություններ են, եվրոպական հասարակությանը բնորոշ հասկացությունների, դիմելաձևերի անվանումներ, որոնց հայերեն գրաբարյան համարժեքները կամ դեռ չէին ստեղծվել կամ չէին էլ ստեղծվելու, որովհետև դրանք արտահայտում էին արդի արևմտյան մշակույթների բնորոշ իրողությունները՝ սկսյալ երաժշտական գործիքներից մինչև հագուստի պարագաներ, կահույքի մասեր, տիտղոսներ, հոգևորականների անվանումներ: Ընդ որում հավաստենք, որ այսօր, 21-րդ դարում դրանց զգալի մասը ոչ միայն հասկանալի է, այլև՝ կիրառական: Այսպես՝ **բաստյուշկա**-ն ռուս հոգևորական հովվի անվանումն է, իսկ **պաստոր**-ը բողոքական եկեղեցու, **պրոֆեսոր**, **դոկտոր**, **ռեկտոր** կոչումներն այժմ էլ մեր կրթագիտական համակարգում ընդունված են, երաժշտական գործիքների անվանումների էական մասը ևս հայերեն տարբերակներ չունեն՝ **կլավիր**, **կիթառ**: **մինիստեր** պաշտոնը միայն 20-րդ դարում գտավ իր հայեցի համարժեքը՝ *նախարար*, զինվորական կոչումները ընդհանրական են՝ **մայոր**, **գեներալ**: **Ֆարրիկ** բառը ներկայումս կիրառելի է լատինառուսական ավանդույթով **ֆարրիկա**: **ֆրանցերեն** **ֆրանսերեն** տառադարձմամբ և այդպես շարունակ: Ուստի համոզված կարող ենք արձանագրել, որ ուսանող Աբովյանը ոչ թե աղճատում էր գրաբարը, այլ արդիականացնում այն, ընդ որում, շատ դեպքերում նա օտարաբան փոխառությունների քանակը հասցնում է նվազագույնի՝ փորձելով շատ բառերի հայերեն տարբերակները ստեղծել: Ջորջիանկ՝ հետգրաբարյան շրջանի մասնագիտությունների մասին խոսելով նա գրում է. «Պարոն Հազեն պատմել զՀումբոլդտե, մեծ *աստղաբաշխ*, *մինարալոգ*, *տնկաբան*, *բնագետ* եւ այլք քննեն զբնութիւն ի մասնաւորս, իսկ նա զբոլոր արաչութիւնն» (66): Այս նախադասության մեջ ճոխաբան գրաբարով՝ պատմական հոլովի կիրառությամբ Աբովյանը միայն հանքաբանի մասնագիտությունն է օտար փոխառությամբ նշում. ցայսօր անգամ շատ հանքաբան-հանքագետներ շարունակում են **միներալոգ/միներալ** եզրույթները համառոտ են կիրառել: Իսկ **ագրոնոմ**-ի փոխարեն Աբովյանն առաջարկում է **տնկաբան** բառը, որը հետագայում միայն փոխարինվեց *գյուղատնտես*-ով, **աստղաբաշխ**-ը ևս հնարան դարձավ՝ փոխարինվելով **աստղագետ**-ով:

Բերենք ուսանող Աբովյանի օրագրությունից մի հատված՝ ցույց տալու նրա կիրառած գրաբարի պարզ և ժողովրդական ոճը: Հիմքեր ունենք ենթադրելու, որ նման ժողովրդական գրաբարով ըստ ամենայնի իրար հետ խոսում էին էջմիածնական երիտասարդ հոգևոր սաները, սա բավական մշակված և նոր հասկացություններով ու բարբառային տարրերով, ժամանակակից փոխա-

ություններով հագեցած լեզու էր, որը փորձում էր ապահովել իր կենսունակությունը, հաղորդակցական հնարավորությունները. «Ի հինգերորդում ժամու հասանք ի փոստատուն Գոյգաց. դրութիւն տեղույս է ամենավայելուչ. հանդէպ մեծագոյն անտառի մի, առաջոյ փոքրիկ այգի, պրօֆեսսորն պատմէ փոստի աստիճանաւորաց զլինելն իմ յԱրարատայ, նոքա զարմացմամբ հային յիս: Պրօֆեսսորն խնդրէ տալ ինձ դայֆայ, մանուկն, որ ընդ մեզ, առանց գիտութեան մեր հեծեալ ի ձի փոշթին, հեռանայ ի մէնջ» (193):

Ակնհայտ են երիտասարդ ուսանողի ճիգն ու ջանքը հայերենի բառապաշարը հարստացնելու ոչ միայն պարզ փոխառություններով, այլև դրանց բնիկ համարժեքներով: Պարբերաբար երիտասարդ լեզվագյուտարար Աբովյանն իր շարադրանքում հետաքրքիր նորակազմություններ է գործածում, այսպես **չմուշկ**-ի փոխարեն առաջարկում է **սահնակակոշիկ** (133) տարբերակը, երկար, բայց հասկանալի, կամ **գյուղատնտես**-ի փոխարեն՝ **տնկաբան**, **ձիարշավարան**-ի փոխարեն՝ **ձիակրթարան** (137), ձի վարժեցնողների համար գեղեցիկ բարդություն է ստեղծում՝ **ձիախաղաց** (138), **ներկա**-ի փոխարեն՝ **տեսանօղ** (181), իսկ դասարանները և լսարանները կոչում է **դասատութեան սենեակ** (66), **ուսուցում**-ը՝ **դասատություն** (65): Երբեմն Աբովյանը հայերեն իր համարժեքն է առաջարկում, բայց փակագծում նշում է փոխառոյալ հիմնաբառը, այսպես՝ **վալս** (գերմանական տարբերակով **վալց**) պարանվան համար օգտագործում է *պտտումն* տարբերակը. «Նոքա կամին նախ ցուցանել ինձ **պտտումն** (**վալց**), այլ իմ անսովոր ոտք ամենեւին ոչ կամին հետեւիլ ոչ ձայնի կլաւիրին, ոչ ցուցման նոցա, նոքա բազմիցս առնեն ինձ զայն առաջի, այլ իմ **պտտումն** ամենեւին ոչ համաձայնի ընթացից նոցա» (225), «դուստր **պաստորին** (**քահանային**)» (293): **Ռեյսֆելդեր** եզրույթի համար Աբովյանը կազմում է **գծագրիչ** գեղեցիկ բառը (81): Օտարաբանություններին զուգընթաց՝ հաճախ վկայված են նաև դրանց հին՝ գրաբարյան ձևերը, Աբովյանը կարծես փորձում է հասկանալ, թե մրցակցությունից որ տարբերակը հաղթանակած դուրս կգա՝ **կատեր** ձևի հետ ունենք բազմակի օգտագործված **կառք**-ը, **ալգերրա** - **թուաբանություն**, **թեյ** - **չայ**, **կոֆե** - **դայֆա** բառազույգերը:

Ընդգծենք այն հանգամանքը, որ հիշյալ և այլ եվրոպական փոխառությունները քերականորեն ենթարկվում են գրաբարի ձևաբանական թեքմանը՝ *դամայ-դամայք, դամայս, դամայից, դամայաք, շտուտենտ-շտուտենտից, շտուտենտիք, ֆանտան- ֆանտանիւ, կլաւիր-կլաւիրաւ, պաստոր-պաստորաց, ռեկտոր-ռեկտորաւ, պամտոֆիլ-պանտոֆիլիւ, մինիստր-ի մինիստրէն* և այլն: Այսինքն՝ նորաբանությունները Աբովյանը հոլովում է գրաբարում տարածված *ի-ա* խառն կամ պարզ *ի* վերջադրական հոլովումներով՝ հետևելով բառի հնչյունական կառույցին:

Կասկածի ենթակա չէ, որ երիտասարդ Աբովյանը փորձում է արդիականացնել գրաբարը և, ըստ իս, բավականին հաջող ընդայնելում է գրաբարի հաղորդակցական հնարավորությունները: Բացի այդ՝ նա փորձում էր ստեղծել

ուսանողական գրաբար, որովհետև իր նպատակը հայ երիտասարդներին եվրոպական կրթօջախներին, կրթամշակութային, գիտական կյանքին, կենցաղին և ապրելակերպին ծանոթացնել էր, որպեսզի նրանք էլ խթան ունենան իրենց կրթությունը շարունակելու արևմտյան հայտնի համալսարաններում:

«Դորպատյան օրագրերի» յուրաքանչյուր հատվածից պարզ է դառնում, որ այն գրվել է տպագրության համար, գրեթե ամեն տող վկայում է, որ ուսանող դարձած Աբովյանը ցանկանում է իր փորձը և տպավորությունները անմիջաբար հաղորդել հայ սերնդակիցներին՝ ավագ և կրտսեր, որպեսզի նրանք ևս համակվեին եվրոպական կրթության, դաստիարակության, վարքականոնի բոլոր բարձր արժեքներով, ձգտեն առաջադիմությանը, ազատախոհությանը և հանդուրժողականությանը:

Դորպատյան օրագրության հանգամանակի ընթերցումը ակնհայտ է դարձնում նաև Աբովյանի ձգտումը բարբառային բառերը գրաբարին ներդաշնակեցնելու. բարձր գրաբարյան բառերի հետ նա օգտագործում է բարբառային եզրեր՝ դրանով իսկ ցույց տալով հայերենի տարբերակների միջև խիստ ջրբաժանի բացակայությունը, դա յուրօրինակ մարտահրավեր էր լեզվական մաքրամոլությանը, լեզվական տարբեր շերտերի միջև անջրպետների հեղափոխական վերացում էր: Աբովյանը արմատական լուծումներից չէր վախենում, ինչպես նաև չէր խորշում փորձարարությունից: Հայերենի հարստությունը ոչ միայն գրաբարյան երակն էր, այլև այդ երակին միացող բարբառային վտակները, հատկապես որ Արևմտյան Հայաստանի սպառնալի հեռացումը Արևելյանից անխուսափելի էր դարձնում երկու գրական լեզուների տարանջատ զարգացումը, ուստի անհրաժեշտ էր գրաբարյան բառապաշարում ընդգրկել Արարատյան և Արցախյան երկու հզոր բարբառների բնիկ կամ փոխառյալ կառույցները: Ասվածն ավելի ընկալելի դարձնելու համար մեջբերում կատարենք. «Բրասիլիին հրացայտ լերինք արձակեն, երբեմն ծուխ, երբեմն **ջմջմայս**, անձրեւս, ի միջակիտի երկրի է յաւտենական հուր ինչ»: **Ջմջմայ**-ն Արցախի և Արարատյան բարբառում նշանակում է *ճահճուտ*, *խոնավ վայր*<sup>6</sup>: Բնաձայնական արմատ է, փոխառություն չէ, այս բառը հանգիստ հանգրվանել է բարձր գրական բառապաշարի միավորների կողքին: Վկայված են նաև նմանատիպ ուրիշ բարբառային կազմություններ՝ պարսկական և թուրքական փոխառություններին գուգահեռ, այսպես՝ **թուշ**, **թոփ**, **պոպոք**, **ֆնդուդ**, **դաֆտար**, **արաղ**, **անօթի**, **գիլաս**, **շախայ**, **եաղուխ**, **գիւլպայ**, **սհաթ**, **օթախ**, **պուճախ**, **բալանիք**, **լական**, **մոհաջառ**, **քուչա**, **քոքոալ**, **շաքարլամայ**, **պոճոկել** և այլն: Այս և նման բառերի առկայությունը բնավ չի ստվերում «Դորպատյան օրագրերի» լեզվական որակը, ընդհակառակը՝ երևան է բերում Աբովյան լեզվաշինարարի իրական նպատակը՝ գրաբարի հենքի վրա կազմավորել նոր գրական լեզուն, որը կմիա-

<sup>6</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Եր., 2008, հ.5, էջ 187:

վորեր և՛ գրաբարագիտակներին, և՛ բարբառախոսներին: Նշենք նաև, որ «Ռոբ-պատյան օրագրերում» կան փայլուն գրաբարով գրված նամակներ առ հայոց կաթողիկոսներ: Այսինքն՝ Աբովյանն առաջնորդվում էր ամեն լսարանին իրեն պատշաճող լեզվով գրելու հայտնի սկզբունքով:

Լեզվափոքրաբարության և նոր գրական լեզվի ստեղծման հարցում կան-խակալ կաղապարներից զերծ լինելը, գրապայքարը Աբովյանին մղում են Քանաքեռի բարբառով իր նշանավոր վեպը գրելուն: Եվ ի վերջո, լեզվափոքրաբարությունն ավարտվում է նոր գրական հայերենի ձևավորմամբ գրաբարյան բառաշերտի, հնչյունական կազմի և Արարատյան բարբառի քերականական համակարգի հիման վրա: Այս գործում Խաչատուր Աբովյանի ներդրումը սկսվել է դեռևս դորպատյան ուսանողական տարիներից: Մխիթարյանների ազդեցությունը գրողի վրա թեև աստիճանաբար թուլանում է, նա հրաժարվում է գրաբարը վերակենդանացնելու ճիգերից, բայց նախնյաց գրական լեզվի հանդեպ հարգական վերաբերմունքը պահպանվում է մշտապես:

Լեզվական որակի և գրապայքարի տեսանկյունից խոսուն գործ է 1836 թվականի մարտի 29-ին Մոսկվայի հայոց եկեղեցում Աբովյանի կարդացած «Ձատկական քարոզը»: Քարոզի ժանրի նպատակը հնարավորինս շատ մարդկանց հոգիների փակ դռների բացումն է, անհաղորդների անտարբերությունը կոտրելը, ուստի այս քարոզի լեզուն արդեն գերազանցապես աշխարհաբարն է ժողովրդական գրաբարի որոշ տարրերով:

Մեր ոսկեդենիկ նախնյաց լեզվի Աբովյանի իմացության չափորոշիչը նրա գրաբարագիր չափածո գործերն են, որտեղ իսպառ բացակայում են օտարաբանությունները կամ բարբառային փոխառություններն ու արմատները: Հնգևոր բովանդակության իր գանձերում լուսավորիչը խնդիր չէր դնում հին և նոր լեզուների մրցակցության, թերևս համոզված էր, որ աղոթքներն ու ներբողյանները պետք է դարերի սրբագործում անցած դասական լեզվով հնչեն: Խաչատուր Աբովյանը կատարելապես տիրապետում էր և՛ գրաբարին, և՛ բարբառներին, ուստի ամեն առանձին դեպքում ձգտում էր գտնել դրանց ճիշտ համաձուլվածքը: Նա համարձակ լուծումների ջատագովն էր՝ գրաբարյան բարձր ոճը ժողովրդախոսակցական, անգամ նեղ բարբառային բառուբանի հետ գուգադրելու առաջամարտիկն ու լեզվաշինարարը:

**НАРИНЕ ДИЛБАРЯН – Лингво-филологическое исследование наследия Хачатуря Абовяна на древнеармянском языке.** – Литературно-педагогическая деятельность Хачатуря Абовяна тесно связана с историей становления и развития нового восточноармянского литературного языка. Абовян, удостоенный звания «Великий просветитель», приложил большие усилия, чтобы сделать образование доступным для всех детей из разных слоев общества. В то время древний литературный армянский язык – грабар, уже утратил свои коммуникативные возможности, но новый литературный язык – ашхарабар еще не сформировался, разные слои общества общались на многочисленных диалектах армянского языка. Самоотверженный труд Мхитара Аббата и вся деятельность Конгрегации Мхитаристов вдохновили молодого Абовяна на возрождение древнего литературного армянского языка. Именно поэтому великий писатель создал богатое

литературно-научное наследие на древнеармянском языке. Он писал духовные стихи на древнеармянском языке, молитвы для детей и взрослых, а также дневники, рассказывающие о важнейшем периоде его обучения в Дерпте. Язык «Дерптских дневников» — понятный, простой, народный грабар, на котором, по нашему мнению, общались молодые студенты Эчмиадзина. Благодаря этому исследованию мы выявили подходы и идеологию формирования нового литературного языка Абовяна, на основе единства грабара, диалектов и нового литературного армянского языка (ашхарабара).

**Ключевые слова:** *древнеармянский литературный язык, диалекты, современный армянский литературный язык, возрождение древнего языка, Конгрегация Мхитаристов, «Дерптские дневники», новообразованные слова, заимствования*

**NARINE DILBARYAN – *Linguistic-Philological Study of Khachatur Abovyan's Heritage Written in Ancient Armenian***. – The literary and pedagogical activity of Khachatur Abovyan is closely connected with the history of the formation and development of the new Eastern Armenian literary language. Abovyan, awarded the title of "Great Enlightener", made solid efforts to make education accessible to all children from different layers of society. At that time, the Ancient Literary Armenian language - Grabar, had already lost its communicative capabilities, but the New Literary language - Ashkharabar, had not yet been formed; different layers of society communicated in numerous dialects of the Armenian language. The selfless work of Mkhitar Abbot and all the activities of the Mkhitarist Congregation inspired the young Abovyan to try to revive the Ancient Literary Armenian language. That is why the great writer created a rich literary and scientific heritage written in the Ancient Armenian language. He wrote spiritual poems in Ancient Armenian, prayers for children and adults, as well as diaries telling about the most important period of his studies in Dorpat. The language of the "Dorpat Diaries" is clear, simple, folk Grabar, in which, in our opinion, young students of Etchmiadzin communicated. Thanks to this research, we have identified the approaches and ideology of the formation of the new literary language of Abovyan, based on the unity of Grabar, dialects and the new literary Armenian language (Ashkharabar).

**Key words:** *Ancient Armenian Literary language, dialects, Modern Armenian Literary language, revival of ancient language, Mkhitarist Congregation, "Dorpat Diaries", newly formed words, borrowings*

## ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ՖԻՐՊՈՒՍԻԻ «ՇԱՀՆԱՄԵ»-ՈՒՄ

ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ \*   
Երևանի պետական համալսարան

Արուլ Ղասեմ Ֆիրդուսիի «Շահնամե» վիպերգությունը ասես X դարի Իրանի քաղաքական և մշակութային վերածնության տարեգրությունը լինի: Նրա այս երկում տեղ են գտել ժամանակի մշակույթին, ազգագրությանը, կրոնին, ռազմարվեստին վերաբերող հարուստ վկայություններ, որոնք կարևոր նյութ են ուսումնասիրողների համար: «Շահնամե»-ի արտահայտիչ, հյութեղ, գեղեցիկ, գունեղ և ազդու լեզուն համեմատաբար զերծ է մնացել ժամանակի «ավերիչ» ազդեցությունից: Բացառիկ արժեք է այս ընդարձակածավալ դյուցազնավեպի (60000 բեյթ) բառապաշարը, որն անսպառ աղբյուր է ժամանակակից պարսից լեզվի ուսումնասիրության համար: Այստեղ ուրույն ու ստվար մասն են կազմում կենդանական աշխարհին վերաբերող բառերը: Գեղարվեստական խոսքի մեծ վարպետը դրանք կիրառում է ինչպես բնության, շրջակա միջավայրի, ռազմի, որսի և ծիսական տեսարանների, այնպես էլ հերոսների նկարագրության, արքաների թագադրման, արքունիքի կանանց և նրբակազմ գեղուհիներին գովերգելիս: «Շահնամե»-ում կենդանիների անունների լայն կիրառությունը պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ, կենդանիների պաշտամունքային ու մարդու կյանքում դրանց ունեցած նշանակությամբ: Կենդանիներն ուժի, խիզախության, հավատարմության և հասարակական դիրքի խորհրդանիշ են եղել: Ստեղծագործության մեջ որոշ կենդանիներ նկարագրվել են կենտրոնադիր, նրանց կերպարներին տրվել է էական կարևորություն ու նշանակություն:

*Բանալի բառեր – Ֆիրդուսի, «Շահնամե», ձիանուն, իրանական ծագման բառամիավոր, իրանական լեզուներ, նախաձև, փոխառություն, միջնադարյան բառարան*

\* **Զարուհի Խաչատրյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ախտեսն

**Заруи Хачатрян** – кандидат филологических наук, ассистент кафедры иранистики ЕГУ  
**Zaruhi Khachatryan** – Candidate of Philological Sciences, Assistant at YSU Chair of Iranian Studies  
Էլ. փոստ՝ [zara.khachatryan@ysu.am](mailto:zara.khachatryan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0009-8436-0890>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.01.2024  
Գրախոսվել է՝ 26.06.2024  
Հաստատվել է՝ 03.07.2024  
© The Author(s) 2024



Ընտանի կենդանիների անվանումների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ձիանունները: Ձին իրանական ժողովուրդների կյանքում և մշակույթի մեջ դարեր շարունակ իմաստության, ազնվագարմության և հավատարմության խորհրդանիշ է համարվել: Իրանական ազնվացեղ ձիերը մեծ հռչակ էին վայելում հին աշխարհում<sup>1</sup>, պարսիկները սրբացնում էին ձիերին ու նրանց զոհ մատուցում աստվածներին<sup>2</sup>: Ձին առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում պարսիկ արքաների կյանքում<sup>3</sup>: Ազնվական ընտանիքների համար շատ կարևոր իրադարձություն էր ձիու ընտրությունը, քանի որ այն իր ճակատին պետք է կրեր այդ ընտանիքի տոհմական նշանը<sup>4</sup>:

«Շահնամե»-ի համաշխարհային փառքի արժանանալու մեջ անկասկած մեծ է հերոսի՝ Ռոստամի և նրա հավատարիմ ձիու՝ Ռախշի դերը: Համաձայն ավանդության, երբ հերոսը մահանում էր, որպես սզո նշան՝ նրա թրով կտրում էին սիրելի ձիու բաշն ու պոչը և որպես մատուցք բաժանում ժողովրդին: Այդպես էր նաև, երբ Ռոստամի որդու՝ Սոհրաբի մահն էր ողբում մայրը. «...*Hamī tīq-e Sohrābrā bar kešīd, faš o dom-e aspaš ze nīme borīd... Եվ վերջապես ամբողջ ուժով քաշեց սուրբը, կտրեց ձիու պոչն ու բաշը, որպես սզո մի նշան...*»<sup>5</sup> (FŠ, I-II, 461)<sup>6</sup>:

Ֆիրդուսին «Շահնամե»-ում կիրառում է *ձիու*՝ երեք տասնյակից ավելի անվանումներ՝ ռազմական գործողությունների միջոցի, ընտանի բեռնակիր կենդանու և փոխադրամիջոցի նշանակությամբ: Հանդիպում են նաև ձիանուններ, որոնք պայմանավորված են ձիու ֆիզիկական և արտաքին առանձնահատկություններով: Սույն հոդվածի շրջանակներում կանոնադրված «Շահնամե»-ում վկայված իրանական ծագման ձիանուններից մի քանիսին:

*Asb/asp* (اسب/اسب)՝ ձի, նժույգ, երիվար (LD, II, 1705, 1706; FM, II, 226; F'A, 104; P, I, 71)<sup>7</sup>: Բառամիավորը բազմիցս վկայվել է «Շահնամե»-ում (800 անգամ, WF, 58)<sup>8</sup>. «...*Har asbī ke Rostam kešīdi be pīš, be poštaš fešordī hamī dast-e xīš... Որ նժույգն էլ, որ բերին Ռոստամին մոտիկ, հարվածեց, փորձեց բազկով ամրությունը մեջքի...*» (FŠ, I-II, 255): Բառանունը «Շահնամե»-ում կիրառվում է նաև

<sup>1</sup> Տե՛ս **Ксенофонт**, Киропедия, Л., 1977, էջ 193, տե՛ս նաև **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Եր., 1986, VII/ 40, էջ 401:

<sup>2</sup> Տե՛ս **Ստրաբոն**, Աշխարհագրություն, Եր., 2011, XI, էջ 48, տե՛ս նաև **Քսենոփոն**, Անաբասիս, Եր., 1970, էջ 98, **Эсхил**, Трагедии, М., 1989, էջ 19:

<sup>3</sup> Տե՛ս **Օ. Хаууām**, “Nouruznāme”, Tehrān, 1933, էջ 51: Այսուհետև՝ ՕX:

<sup>4</sup> Տե՛ս **Ռախիյե Քարիզգամի Նաղշինե**, Շահնամեի բառապաշարի քննությունը, Եր., 2015, էջ 60 (ատենախոսություն բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար):

<sup>5</sup> Հոդվածում տեղ գտած բեյթերի թարգմանությունները կատարվել են իրանագիտության ամբիոնի դասախոս Գառնիկ Գևորգյանի և հոդվածի հեղինակի կողմից:

<sup>6</sup> **A. Ferdowsi**, Šāhnāme, Tehrān, 1361/1982, 4 j.: Այսուհետև՝ FŠ:

<sup>7</sup> Տե՛ս **'A. Dehxodā**, Loyatnāme-ye Dehxodā, Tehrān, 1993/94, 14 j., այսուհետև՝ LD, **M. Mo'in**, Farhang-e fārsi, Tehrān, 1977, 4 j., այսուհետև՝ FM, **H. 'Amid**, Farhang-e fārsi, Tehrān, 1979, այսուհետև՝ F'A, **Рубинчик Ю.** Персидско-русский словарь, М., 1985, 2-х т., այսուհետև՝ P:

<sup>8</sup> Տե՛ս **F. Wolff**, Glossar Zu Firdosis Schahname, Berlin, 1935: Այսուհետև՝ WF:

«շախմատային ձի խաղաքար» իմաստով<sup>9</sup>, որը նույնն է նաև ժամանակակից պարսկերենում (LD, II, 1724). «...*Ham ān raftan-e asb se xāne bovad, be raftan-e yek xāne bigāne bovad... Չիու գնալը (քայլը) երեք տուն է, սակայն երրորդի մեջ թեքվում է ձախ կամ աջ...*»<sup>10</sup> (FŠ, V-VI, 2162/3410): Բառամիավորը նույն իմաստով վկայված է նաև պարսից լեզվի XVII դարի «Borhān-e Qāte'» (I, 117) բառարանում<sup>11</sup>:

«Շահնամե»-ում *asb*՝ «ձիեր ունեցող» նշանակությամբ բաղադրիչով են կազմված առասպելական ու պատմական արքաների անունները<sup>12</sup>.

*Arjasp* (FNS, I, 30)<sup>13</sup>՝ ալ. *Arjataspa* «թանկարժեք ձիեր ունեցող»՝ *arj* «զին, արժեք, արժանի» > ալ. *arāja*- «արժեքավոր, զին ունեցող», *araji* «արժանի, վայել լինել», հմմտ. ժ. պրսկ. «*arzešmand, ba arzeš*» (FRZF, I, 163)<sup>14</sup> և *aspa* «ձի» ձևությից, *Garšasp* (FNS, I, 865)՝ ալ. *keresaspa* «նիհար կառուցվածքով ձիեր ունեցող» > ալ. *Keresa* «նիհար», *Tahmasp* (FNS, I, 296)՝ «ուժեղ ձիեր ունեցող»՝ ալ. *Taxmaspa* > ալ. *taxma*<sup>-15</sup> «ճարպիկ, աշխույժ, քաջ» > հ. պրս. *\*taxma-* > *tak*- «հարձակվել, սուպատակել» արմատից<sup>16</sup> (ՀԱԶԲ, II, 261)<sup>17</sup>, *Goštasp* ալ. *Vištāspa-*, հ. պրս. *Vištāspa-* > հ. պ. *\*višta aspa*- «սանձր բաց ձիեր ունեցող, քմահաճ ձիեր ունեցող», *Gušnāsb*՝ հպրս. *\*vršna-* > մ. պ. *gušn* «արու»՝ «քաջ ձիեր ունեցող» (FNS, I, 891), *Šavasp* «սև մատակներ ունեցող (FRZF, III, 1899)»՝ > ալ. *\*Syāvāspa-* (հատուկ անուն է եղել)՝ < հպրս. *\*syāvāša-* «սև» և *aspa*, *Šedasp* «կարմիր փայլուն ձիեր ունեցող»՝ *šed* «լույս, փայլ» > ալ. *xšāeta-* < հ. պ. *\*xšaita-*՝ *\*xšaita-aspa-* > մ. պ. *Šetāsp*<sup>18</sup> (ՀԱԲ, I,

<sup>9</sup> Չարկ է նշել, որ Ֆիրդուսին, բացի «ձի» և «փիղ» խաղաքարերից, «Շահնամե»-ում հիշատակում է նաև «ուղտ» խաղաքարը, ինչպես նաև այն, որ խաղատախտակն ունեցել է հարյուր վանդակ ներկայիս վաթսուներորդի փոխարեն, տե՛ս **M. Ramzāni, A. Goli**, *Gune-i az bāzi-e šatranj dar Šāhnāme-ye Ferdowsi va sanjēš-e ān bā anvā'* -e digar, *Dofaslnāme-ye Āyene-ye mirās, Tehrān, 1394/2015, ք. 56, էջ 101-109*:

<sup>10</sup> **Ֆիրդուսի**, Շահնամե, թարգ.՝ Ս. Ումադյան, Եր., 1975, էջ 520:

<sup>11</sup> Տե՛ս **M. Xalaf-e Tabrizi**, *Borhān-e Qāte'*, *Farhang-e fārsi, Tehrān, 1997, 4 յ.*: Այսուհետև՝ BQ:

<sup>12</sup> Տե՛ս **H. Razi**, *Dānešnāme-ye Irān-e bāstān, Tehrān, 1381/2002, s. 456*: Չարկ է նշել, որ *asb*՝ «ձի» բառը, առասպելական և պատմական արքաների տոհմական անունների մեջ հիշատակվելուց բացի, հանդիպում է նաև պետական և ռազմական կոչումների, հրամանատարների անունների կազմության մեջ՝ *Arjasp, Garšasp, Tahmasp, Goštasp, Gušnāsb, Āriyāasp* (Սասանյան Արտաշիր II-ի հրամանատարներից մեկի անունը), *Āyingoštasp* (Որմիզ IV-ի հրամանատարի անունը), *Aspbod* (հեծյալների բանակի հրամանատարի կոչումը), *Āzargoštasp* (երկրի արևելյան շրջաններում պետական պաշտոնի անվանում Սասանյան շրջանում) և այլն:

<sup>13</sup> Տե՛ս **M. Rastigārfasā'i**, *Farhang-e nāmhā-ye Šāhnāme, Tehran, Pažuhešgāh-e olum-e ensāni va motale'at-e farhangi, 1388/2009, 2 յ.*: Այսուհետև՝ FNS:

<sup>14</sup> Տե՛ս **M. Hasandust**, *Farhang-e rišešenāxti-e zabān-e fārsi, Tehrān, Farhangestān-e zabān o adab-e fārsi, 1393/2014, 4 յ.*: Այսուհետև՝ FRZF:

<sup>15</sup> Տե՛ս **Chr. Bartholomae**, *Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904 (Berlin, 1961), էջ 626*:

<sup>16</sup> Տե՛ս **Касимов О.** *Лексика «Шахнаме» Абулькаси́ма Фердоуси, Душанбе, 2011 (диссертация на соискание ученой степени доктора филологических наук), էջ 141*:

<sup>17</sup> Տե՛ս **Նր. Աճառյան**, *Չայոց անձնանունների բառարան, Եր., 1942-1962, 5 հ.*: Այսուհետև՝ ՀԱԶԲ:

<sup>18</sup> Տե՛ս **Ն. Հրաբըմյան**, *Չայերենի քերականություն, 1 մաս, Եր., 2003, էջ 101*: Այսուհետև՝ ՀԲ:

219)<sup>19</sup> անվանումներում: «Ձի» բառի նշանակությանն են առնչվում նաև «Շահ-նամե»-ում հանդիպող *Zarasp, Bivarasp, Gušasp, Aspruz, Aspnuv* անունները (FNS, 406):

Բառանունը հնդեվրոպական նախալեզվում ունեցել է *\*ekuos* ձևը, որից էլ իրանական լեզուներում առաջացած ձևերն են՝ Ավեստայի լեզվում՝ *aspa-*, հ.պրս. *asa-*, իտթ. *assa-*, սողդ. *asp*, սկյութ. *afs-*, մ. պրս., պրթն. *asp*, ժամանակակից իրանական լեզուներում՝ գիլ. *äsb*, թլշ. *asp*, մազանդ. *asb*, վախ. *yaš*, օս. *jæfs*, նիվնդ. *asba*, ֆարսիզ. *asm*, սեմ. *äsp*, քրդ. *hasp* և այլն:

Ժամանակակից պարսկերենում *asb* եզրը հանդիպում է նաև հետևյալ բարդ կառույցներում՝ *asb-e ātaš na'l* «արագընթաց, արագավազ ձի, կրակե սմբակ, հրե պայտ», *asb-e āl* «ալ կարմիր, բուսորագույն ձի», *asb-e tāzi* «արաբական ձի» հմմտ. թրք. *esb-i tozi*, *asb-e tizvar* «արագավազ, սրընթաց ձի», *asb-e pālāni* «գրաստ», *asb-e jangi* «մարտական ձի, պահեստի ձի», նույնիմաստ է նաև *asb-e nabard*, *asb-e čubin* «փայտե ձի», *asb-e xarāmande* «ճեմող, սիգաճեմ քայլող, շոքավար ձի», *asb-e noubati* «պահեստային սպիտակ ձի, երկգույն՝ սև ու սպիտակ ձի», *asb-e yadaki* «պահեստային ձի», *asb-e bi zin* «անթամբ ձի», *asb-e ābi*, *asb-e daryāyi* «գետաձի» (LD, II, 1705):

Հարկ է նշել, որ գրաբարում *ասսպ*<sup>20</sup> «ձի» (ԲՀԼ, I, 122)<sup>21</sup> բառամիավորն անկախ կիրառություն չունի, կամ էլ նման տարբերակ մեզ չի հասել<sup>22</sup>. «...է բառ պարսկական, և նշանակէ ձի կամ երիվար և ի գործ ածի բարդութիս բառից, տաչ. այթ, պարս. էսսպ»<sup>23</sup>: Նշված ձևությամբ մասնավորապես հանդիպում է հայերենի բառապաշարի հաճախադեպ և հազվադեպ կիրառվող *ասպազէն*, *ասպաստան*, *ասպաղոլ կամ ասպայուլ*, *ասպաճարակական*, *ասպանդակ*, *ասպաստանիկ*, *ասպատակ*, *ասպարէզ*, *ասպետ* բառերում և դրանցից կազմված բարդություններում: Այս բոլոր բառերն ամբողջական փոխառություններ են իրանականից՝ մպրս. *asp* > հպրս. *\*aspa-* «ձի»<sup>24</sup>, և պահպանում են *ասպ*-ի նախնական «ձի» բառիմաստը՝ անկախ իմաստային հետագա զարգացումներից: Նշենք, որ հայերեն «էշ, ավանակ» (ՀԱԲ, II, 117) բառերը նույնպես բխում են հնիս. *ekwo* «ձի» բառից<sup>25</sup>:

<sup>19</sup> Տե՛ս նաև **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971-1979, 4 հ.: Այսուհետև՝ ՀԱԲ:

<sup>20</sup> Հայերենում *ասպ* «ձի» ձևությամբ մասին տե՛ս **Ջ. Խաչատրյան**, *Ասպ* «ձի» ձևությամբ հայերենի իրանական ծագման բառապաշարային միավորներում // Կանթեղ, 1 (74), Եր., 2018, էջ 60-68:

<sup>21</sup> Տե՛ս նաև **Գ. Փեշտրմազեան**, Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Կոստանդնուպոլիս, 1844-1846, 2 հ.: Այսուհետև՝ ԲՀԼ:

<sup>22</sup> Տե՛ս **Լ. Շ. Հովհաննիսյան**, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 129:

<sup>23</sup> **Հայր Գաբրիել Աւետիքեան**, **Հայր Խաչատուր Մխրմաղեան**, **Հայր Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837, I, էջ 315: Այսուհետև՝ ՆՀԲ:

<sup>24</sup> Տե՛ս ՀԲ, էջ 108:

<sup>25</sup> Տե՛ս **B. Gharib**, Rābete-ye asb o savār dar zabānhā-ye irāni, The Connection of the Horse and the Rider in Iranian Languages Iran Nameh 2, 1393/2014, էջ 4-12:

**Bur** (𐭠𐭣)իրանական ծագման բառամիավորը պարսկերենում ունի 1. կարմրաշիկավուն, բոսորագույն ձի, 2. հրակարմիր, ծիրանի (LD, III, 4397; FM, I, 601) իմաստները: Զիանունը հաճախադեպ է «Շահմանե»-ում (22 անգամ, WF, 156). «...*Be maqz andar oftad tarangā tarang, havā por konad nāle-ye bur va xeng...* Հասավ ականջին մի տնկտնկոց, և օդը լցվեց վրնջոցով նծույզների ճերմակ ու բոսոր» (ԲՏ, III-IV, 1333): Բառը հիմնականում կիրառվում է շագանակագույն թույր ունեցող կենդանիների համար:

Զիանունը վկայված է «Borhān-e Qāte'» (I, 314) և «Farhang-e Jahāngiri»<sup>26</sup> բառարաններում (II, 1931), իսկ *bovr* տարբերակով հանդիպում է «Farhang-e Nafisi»-ում<sup>27</sup> (I, 657): Եզրը որպես սկյութական անձնանուն վկայված է նաև հունական աղբյուրներում՝ *Βορασπος*՝ «հրակարմիր ձիեր ունեցող»<sup>28</sup>:

Բառամիավորը հանգում է հին իր. *\*baura-* նախածինի (FRZF, I, 527)<sup>29</sup>, որն է «մուգ շագանակագույն, փայլուն դեղնակարմիր»: Այն միջ.պրս. ունեցել է *bw* / [bōr] «կարմրաշագանակագույն», դաս. պրս. *bōr*, դարի *būr* ձևերը, իսկ ժամանակակից իրանական լեզուներից ժ. պրս. *bur*, քրդ. (կուրմ., սոր.) *bor*՝ «շագանակագույն, նաև մոխրագույն», *bōr*, *bōra*՝ «շիկակարմիր ձի», օս. *bōr*, յղնբ. *vur*, պամ. մունջ. *vūr*՝ «բաց կարմիր երանգ» (թույր խոշոր եղջերավոր կենդանիների համար): Վախաներենում հանդիպում է *buryó*, *buryoyí* ձևերը՝ «դեղնավուն մուգ պուտերով ձիու գույնը»<sup>30</sup>: Վերջինս փոխառություն է տաջիկերենից՝ *buryo*, *buryoyi*՝ «ծղոտից հյուսած խսիրի գույնը», հմմտ. աֆղ. *buria*՝ «ծղոտից հյուսած խսիր», պրսկ. *Buriyā*՝ «ծղոտի տեսակ կարպետ, խսիր գործելու համար, նաև՝ ծղոտից հյուսած խսիր՝ բրդյա գորգի տակ գցելու համար»: Բելուջերենում *bor* են անվանում «բաց շագանակագույն երանգով մատակին» (FRZF, I, 528), իսկ Դավանի բարբառում *bu:r*՝ «դեղնասպիտակավուն բուրդ ունեցող ոչխարին»<sup>31</sup>:

Պարսկերենում բառը կազմում է նաև *burabras*՝ «սպիտակ ու կարմիր պուտերով ձի, սպիտակ պուտերով մուգ կարմիր ձի» (LD, III, 4399; F'A, 326) և *bursār*՝ «կարմրաթույր ձի» (LD, III, 4399; FM, II, 601; OX, 53) ձիանունները, որոնց կիրառությանը պարսից դասականների ստեղծագործություններում մեր ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Ենթադրվում է, որ բառամիավորը, իրանականից թափանցելով թյուրքական լեզուներ, անցել է սլավոնականներին որպես գունանուն՝ ռուս. *бурый*՝ «գորշ, կարմրաշիկավուն», լեհ. *bury*, ուկր. *Бурый*՝ «մուգ մոխրագույն»<sup>32</sup>:

<sup>26</sup> Տե՛ս **H. Inju Širāzi**, Farhang-e Jahāngiri, Mašhad, Mousesse-ye čāp o entesārāt-e danešgāh-e Mašhad, 2 j., 1351/1971: Այլուհետև՝ FJ:

<sup>27</sup> Տե՛ս **A. Nafisi**, Farhang-e Nafisi, Tehrān, Entesārāt-e «Xayyām», 1355/1976, 5 j.: Այլուհետև՝ FN:

<sup>28</sup> **Абаев В. И.** Историко-этимологический словарь осетинского языка, Москва-Ленинград, 1958, т. I, 271.

<sup>29</sup> Տե՛ս **Расторгуева В. С., Эдельман Д. И.** Этимологический словарь иранских языков, М., 2003, т. II, էջ 151, 152:

<sup>30</sup> **Стеблин-Каменский И. М.** Этимологический словарь ваханского языка, СПб., 1999, էջ 104:

<sup>31</sup> **A. Salāmi**, Guyeš-e davāni, Tehrān, 2002, էջ 136:

<sup>32</sup> Տե՛ս **Фасмер М.** Этимологический словарь русского языка, М., 1986, I, էջ 249:

*Tāzi* (تازی) - 1. արաբական ձի, 2. ձիու հայտնի ազնիվ ցեղատեսակ, 3. թուրքական ձիուց ավելի նիհար ձի (LD, IV, 5477; FM, II, 1007): Ձիանունը հանդիպում է Ֆիրդուսիի ստեղծագործության մեջ 32 անգամ (WF, 233). «...*Basī asb-e tāzī be zīn-e xadang, basī neyze o xud o xoftān-e jang...* Բազում նժույզներ ընտիր թափաճ ու պայտած, գորքն էլ զինված նիզակով, սաղավարտով ու զրահով» (ԲՏ, III-IV, 1561): Բառն արձանագրված է նաև պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (FJ, II, 6334; BQ, I, 459) և XIX դ. բառարանագիր Գևորգ Դպիր Պալատացիի առաջին պարսկերեն-հայերեն բառարանում<sup>33</sup>:

Բառամիավորը կարող է ունենալ հետևյալ բացատրությունները՝ 1. հանգում է պիլվ. *tāzhik*, մ.պ. *tāčik*, ժ.պ. *tāzi* «արաբ, արաբական» ձևերին, որը գալիս է *\*tāy-čik*- նախաձևից (արաբ. طي *tai* ցեղանունից *čik* վերջածանցի կցմամբ), այսինքն՝ «արաբական, դրան պատկանող», հմմտ. հյ. «տաճիկ»<sup>34</sup> բառի հետ: Հաջորդ բացատրությունը կապված է ժ.պ. *tāzi/tāzande* «վազող, ասպատակող» բառաձևի հետ (ժ.պ. *tāxtan* «վազել, ասպատակել»՝ *tāz*- ներկայի հիմքով, որը հանգում է հ.իր. *\*tāk*- «վազք, վազել, ասպատակել» արմատին (FRZF, I, 883): Նույն իմաստն են արտահայտում նաև *tāzyāni* (BQ, I, 459; LD, IV, 5480; FM, II, 1007), *tizi* (BQ, I, 545; FR, I, 467; FN, II, 1021; LD, V, 6376) բառաձևերը: Եվ քանի որ արաբական ձիերին բնորոշ էին արագավազությունն ու դիմացկունությունը, ուստի բառամիավորն ամենայն հավանականությամբ կարող է նշանակել «արագավազ ձի»:

Պարսկերենում հանդիպում են նաև *asbtāz, asbtāzande* «ձի վազեցնող» և *asbtāz* «հարթ ու ողորկ գետին՝ ձի վազեցնելու համար» բառաձևերը (LD, II, 1727) :

Հայ մատենագրության մեջ «տաճիկ» բառն իբրև անական գործածվում է «արագավազ» նշանակությամբ՝ «ձիու և ուղտի» համար. «...բայց միայն Մերուժանն ՚ի տաճիկ ձի նստեալ փախչէր»<sup>35</sup>, «... մարդիկ ուղարկեց Հայաստան *տաճիկ ուղտերով* հողի և ջրի...»<sup>36</sup>:

Այս ձիու ազնվացել լինելը վկայված է նաև XII-XIII դդ. անհայտ հեղինակի կողմից արաբերենից թարգմանված «Գիրք Վաստակոցում»՝ «...և զխասն տաճիկ ձիոցն սահմանն»<sup>37</sup>: Բառը ժ. պարսկերենում նաև որսորդական արագավազ շան հայտնի ցեղատեսակ է (LD, IV, 5477):

*Tak/tag* (تک/تگ) - սրընթաց ձի (LD, IV, 6040; FM, I, 1123; F'A, 357), բոց. «վազք, արագ վազել, սրարշավ գնալ». «...*Begoft o be gorzgerān dast bord, 'enān-e bāre-ye tīz tak rā sepord...* Սուսց ու ձեռքն առավ գուրգը ծանր և արագոտն ձիու սանձն ազատ արձակեց» (ԲՏ, I-II, 48): Բառամիավորը նույն իմաստով արձանագրում է նաև BQ-ն (I, 503):

<sup>33</sup> Տե՛ս Գ. Պալատացի, Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից, ՚ի Կոստանդնուպոլիս, Յորթագետ, 1826, էջ 106: Այսուհետև՝ ԳԴ:

<sup>34</sup> Տե՛ս Ն. Հյուբշման, Հայերենի քերականություն, մաս 1, էջ 86:

<sup>35</sup> Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 245:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 257:

<sup>37</sup> Գիրք վաստակոց, Վենետիկ, Վանք Մխիթարայի Ս. Ղազար, 1877, էջ 203:

Ձիանունը ժ.պրս. նշանակում է *tak* «վազք, վազող», որը ծագում է հ.իր. *\*tāk-* («վազք, վազել, ասպատակել») արմատից < ավստ. *taka* «արագ, սրարշավ», պիլվ. *tak* «հարձակում, վազք», *takīk* «հզոր, ուժեղ, ճարպիկ», *tag kardan abar* «հարձակվել, ասպատակել»<sup>38</sup>, աֆղ. *tak* «վազել», *tag* «վազել, քայլ, զրոսանք», օս. *tæx* «արագահոս, արագ, ճարպիկ»<sup>39</sup>: Բառը պարսկերենում ունի նաև «ձիերի համար նախատեսված մրցահրապարակ» նշանակությունը:

Ժամանակակից պարսկերենում կան *takopu/takāpu*, *tagapu*, *takotā* «շարժ, շարժում», *takotāz*՝ նաև «հարձակում, ճարպկություն», *takodou* «շարժում, ձիզ ու ջանք» բառերը<sup>40</sup>:

**Takāvar** (تکاور) – 1. արագավազ ձի, 2. գեղեցկաքայլ, շորավարձ ձի, 3. ազնվացեղ ձի (LD, IV, 6043; F'A, 357; FM, I, 1124; P, I, 390). «...*Ze har su hayunī takāvar betāxt, salīh-e savārān jangī besaxt...* Բոլոր կողմերից արագավազ ձիերով հարձակվեց, հեծյալ զորքին էլ զինեց, մարտի պատրաստեց» (FŠ, I-II, 253):

Բառը BQ-ն հիշատակում է 1. «արագաշարժ կենդանի», 2. «ձի և ուղտ» (I, 504), իսկ FN-ն՝ «շորավարձ ձի և ուղտ» (II, 943) իմաստներով: Այն բարդություն է՝ կազմված ժ.պ. *tak/tag* «վազք» < հ.իր. *\*tāk-* և *āvardan/āvar* «բերել» բայի ներկայի հիմքից՝ «վազք բերող, վազեցնող, արագավազ», որն էլ համապատասխանում է ձիու *արագ* վազելու հատկանիշին: Ժ. պարսկերենում բառի «արագավազ ուղտ, վազող շորքոտանի» իմաստները ևս պահպանվել են: Նույն իմաստն ունի նաև *tagāvar* (LD, IV, 6065) ձևը: Եզրը իրանական փոխառություն է նաև թուրքերենում, հմմտ. *tekaver*, օսմ. *esb-i tekâver* 1. մրցավազքի ձի, 2. հեծյալին չցնցող շորավարձ ձի<sup>41</sup>:

**Čarme/čarmah** (چرمه) – 1. ձի, 2. սպիտակամազ նժույգ, 3. արծաթափայլ ձի (LD, V, 7126). «...*Por az xašm o por kīne sālār-e nou, nešast az bar čarme-ye tīzrou...* Նոր հրամանատարը զայրույթով ու քենով լեցուն, ցատկեց նժույգին ձերմակ արագուն» (FŠ, I- II, 109):

Բառը նույն իմաստով արձանագրում է նաև BQ-ն (II, 634): FJ-ն (I, 941), և «Farhang-e Rašidi»-ն (I, 505)<sup>42</sup> այն նույնացնում են *xeng* ձիանվան հետ, որն ունի նաև «սպիտակամազ ավանակ և ջորի» իմաստները (LD, V, 7127): «Farhang-e Nafisi»-ին տալիս է նաև բառի կիրառությունը *čarmepulād* կառույցում՝ «մոխրագույն, գորշ ձի», բոց. «պողպատագույն ձի» (II, 1166; LD, V, 7127): Նույնիմաստ է նաև *jarne* (LD, V, 6727; BQ, II, 569) եզրը:

<sup>38</sup> Տե՛ս D. N. Mackenzie, A concise Pahlavi Dictionary, London, 1971, էջ 81:

<sup>39</sup> Տե՛ս Абаев В. И. Историко-этимологический словарь осетинского языка, Л., 3, էջ 284:

<sup>40</sup> Պարսկերենի խոսակցական տարբերակում է հանդիպում *az tak o tā oftādan* «շարժումից ընկնել» արտահայտությունը, տե՛ս Farhang-e fešorde-ye soxan, Tehrān, 2003, էջ 643, հմմտ.հյ. «*հալից ընկնել՝ հյուժվել, ուժասպառ լինել, չափազանց հոգնել*» խոսակցական ձևի հետ, տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, 1, էջ 789:

<sup>41</sup> Տե՛ս Պ. Ջեֆի Կարապետեան, Մեծ բառարան օսմաներեն հայերեն, Պոլիս, 1912, էջ 237:

<sup>42</sup> Տե՛ս Abd-al-Rašid Tatavi, Farhang-e Rašidi, Tehrān, 1976, 2 j.: Այսուհետև՝ FR:

Օ. Խայամն իր «Nouruznāme»-ում ձիուն բարեբախտ է բնորոշում և հիշատակում նաև *sorx čarme, siyāh čarme, tāzi čarme* (OX, 53) ձիանունները, իսկ Օստր-Ալ-Մաալի Քեյ Քավուսի «Qābusnāme»-ում հիշատակվում է *asb-e čarme xeng* ձևը<sup>43</sup>:

Հր. Աճառյանը *Ճերմակ* բառը հանգեցնում է պիլ. \*čermak ձևին, հմմտ. պրս. čarme: Վրացերենի *ճարմակի ցիենի «Ճերմակ ձի»* անվանումը ևս փոխառություն է պարսկերենից (ՀԱԲ, III, 198): Գ. Ջահուկյանը նույնպես եզրը իրանական փոխառություն է համարում (ՀՄԲ, I, 492)<sup>44</sup>:

Հայերենում *Ճերմակ* բառը առանց վկայության «սպիտակ գույն (ձիու գույնի մասին) և սպիտակ ձի» իմաստներով հանդիպում է ՆՀԲ-ում՝ «առաւել ասի զսպիտակ ձիոյ» (II, 180), և գրաբարի մյուս բառարաններում (ԳԲ, II, 128, ԳԲԲ, 221)<sup>45</sup>: ՀԱԲ-ն արձանագրում է *Ճերմակ* բառի «ձիու» իմաստով գործածությունը միայն Բուզանդի մոտ (երեք անգամ). «Եւ էր...երիվավարն Մուշեղի Ճերմակ ձի մի», «Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ Ճերմականն», «Ճերմակաձին զինի արբցէ», ինչպես նաև *Ճերմակաձի*՝ «սպիտակ ձիեր հեծնող», *Ճանճաճերմակ*՝ «ճանջաճերմակ երիվար», օրինակները Գ. Մագիստրոսի մոտ (ՀԱԲ, III, 198): Այս բառերում գունեզրը, կիրառվելով մեկ անգամ, արտահայտում է միայն ձիու գույն (ԲՀԼ, 1846, 180): Ըստ Լ. Շ. Հովհաննիսյանի՝ «իրանական լեզուներից փոխառյալ *աշխէտ, երաշխ, զարտակ, ճարտուկ և Ճերմակ* բառերը հենց փոխառվել են որպէս ձիու գույն արտահայտող բառեր: Ավելին, կարելի է ենթադրել, որ հայերենի՝ իրանական լեզուներից փոխառյալ բոլոր գունանունները սկզբնապես վերաբերել են կոնկրետ առարկայի...: Փաստորեն արդի հայերենի Ճերմակ «սպիտակ» բառի միջոցով ենք ենթադրում Ճերմակի նախնական իմաստը: *Ճերմակը* կիրառության որոշակի ոլորտ ունի, այն արտահայտում է ոչ թե «սպիտակ» հասկացությունն ընդհանրապես, այլ միայն ձիու գույն»<sup>46</sup>:

Հայ մատենագրության մեջ *սպիտակայթույր ձիու* նշանակությամբ հանդիպում են հետևյալ օրինակները. *Ճերմակաձի*՝ «սպիտակ ձիեր հեծնող», *Ճանճաճերմակ*՝ «ճանջաճերմակ երիվար»<sup>47</sup>, «...երիվավարն Մուշեղի Ճերմակ ձի մի, ...Ճերմակաձին զինի արբցէ, ...ի պատկեր զՄուշեղ Ճերմականն...»<sup>48</sup>: Այս ձիանուններում գունեզրը, կիրառվելով մեկ անգամ, արտահայտում է միայն ձիու գույն<sup>49</sup>: Հարկ է նշել, որ իրանական լեզուներից փոխառյալ *աշխէտ, երաշխ,*

<sup>43</sup> Տե՛ս **Օնսոր ալ-մա՛ ալի Կեյկավս**, Qābus nāme, Tehrān, 1956, էջ 106:

<sup>44</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Այսուհետև՝ ՀՄԲ:

<sup>45</sup> Տե՛ս **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, Եր., 2000, այսուհետև՝ ԳԲ, **Լ. Խաչատրյան**, Գրաբարի բացատրական բառարան (Ձևաբանորեն տարարժեք բառեր), Եր., 2003, այսուհետև՝ ԳԲԲ:

<sup>46</sup> **Լ. Շ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 109, 202:

<sup>47</sup> Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 122:

<sup>48</sup> **Փ. Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 290:

<sup>49</sup> Տե՛ս Բառգիրք Հայկազեան լեզուի, Ի Կոստանդնուպոլիս, 1846, հտ. 2, էջ 180:

զարտակ, ճարտուկ և ճերմակ բառերը, ունենալով սահմանափակ գործածություն, սկզբնապես վերաբերել են կոնկրետ առարկայի<sup>50</sup>: Ուստի, գունանունը փոխատու լեզվում ունենալով այդ նշանակությունը, հայերեն է անցել նշանակելով միայն ձիու գույն:

**Raxš** (رخش) - 1. նժույգ, երիվար, 2. մուգ կարմիրը փայլուն սևին հարող ձի, 3. սև ու կարմիր խառը գույներով պտավոր ձի, 4. ազնվացեղ ձի (LD, VII, 10541, 10542; FM, II, 1644; F'A, 658; P, I, 718), բռց. «փայլ, լույս, շեկ, շիկակարմիր, կարմիր և սպիտակ գույների խառնուրդը, նաև՝ ձիու թույրը փայլուն սևի ու խարտյաշի, կարմիրի միջև» (FRZF, III, 434): Եզրը բազմիցս հիշատակում է Ֆիրդուսին (163 անգամ, WF, 429). «...*Hamī Raxš xānīm va bur abraš ast, be xu ātašī va be rang-e ātaš ast... Հենց Ռախշ կոչենք այն հրեղեն ձիուն, որը կրակոտ է և կրակի գույն ունի...*» (FŠ, I-II, 256/115): Ֆիրդուսին Ռախշին բնու-թագրելիս կիրառում է այնպիսի մակդիրներ, ինչպիսիք են՝ *kuh* «լեռ», *kuh-e boland* «բարձր լեռ», *golrang* «վարդագույն», *raxšān/raxšānde* «փայլող», *ruyinesom* «անազն սմբակ», *fulādsom* «պողպատասմբակ», *pilpeykar/piltan*, *žendepil/pilžiyān* «փղամարմին» և այլն (FNŠ, 403)<sup>51</sup>:

Բառը հանդիպում է պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (BQ, II, 942; SF, 151<sup>52</sup>; FJ, I, 752): Ռախշ եզրը արձանագրում են նաև Գ. Պալատացին. «...և սաին թե հատուկ երիվարն Ըհուսթեմայ՝ էր կարմրերանգ, և ունէր պիսակս սպիտակ ՚ի վր իւր, և ՚ի բազում գործածութ բառս **Ռախշ**՝ բացարձակապես նշ՝ երիվար» (ԳԴ, 459), և Գրիգոր Մագիստրոսը. «Բսկ ուն մերձ առ Դաբաւանդն կոչեցեալ լեառն, Ռոստումն կոչեցեալ Սաճիկ, երիվար նմա ունել սսի Ռաշ այսինքն՝ աշխեն»<sup>53</sup>:

«Nouruzname»-ում ձիանունը վկայված է *zard raxš*, *siyah raxš* տարբերակներով (OX, 53): Ռոքսաննա անձնանունը նույնպես բխում է *raxš*-ից<sup>54</sup>:

*Raxš* էին անվանում «Շահնամե»-ի հայտնի դյուցազն Ռոստամի նժույգին «...*Hamī Raxš xānīm va bur abraš ast, be xu ātašī va be range ātaš ast... Հենց Ռախշ կոչենք այն հրեղեն ձիուն, որը կրակոտ է և կրակի գույն ունի...*» (FŠ, 1-2, 256, FNŠ, 403): Բառամիավորի օգտագործման դրվագներից մեկն էլ Ռախշի ընտրության հատվածն է. «...*Har asp ke Ros-tam kešīdī piš, be poštaš fešordī hamī dast-e xiš... Բնչ ձի էլ, որ բերին Ռոստամին մոտիկ, սեղմեց իր ձեռքով նրա մեջքը...*» (FŠ, I-II, 255/100)<sup>55</sup>:

<sup>50</sup> Տե՛ս **Լ. Շ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 109:

<sup>51</sup> Տե՛ս **E. Zarqāni**, *Raxš va vižegihā-ye u dar Šāhnāme-ye Ferdowsi, Mašhad, Faslnāme-ye taxasosi-e adabiyāt-e fārsi-e danešgāh-e Azād-e eslāmi-e Mašhad, 1387/2008, doure-ye V, š. 19, էջ 165*:

<sup>52</sup> Տե՛ս **Naxjavāni Mohammad ebn-e Hendušāh**, *Sahāh ol-Fors («Sahāh al-Furs»)*, Tehrān, Entesārāt-e bongāh-e tarjome o našr-e ketāb, 1355/1976: Այսուհետև՝ SF:

<sup>53</sup> Տե՛ս **Գ. Մագիստրոս**, նշվ. աշխ., էջ 126:

<sup>54</sup> Տե՛ս **Абаев В. И.** *Осетинский язык и фольклор*, М., 1949, էջ 178:

<sup>55</sup> Ըստ ավանդության՝ «Շահնամե»-ի դյուցազն Ռոստամն այնքան ուժեղ է եղել, որ նրա բազկի ուժին ոչինչ չի դիմացել: Հերոսը նույնիսկ Ռախշի ընտրությունն է կատարել բազկի միջոցով՝ այն սեղմելով ձիու մեջքին:



Եզրը հանգում է *\*raxša-* նախաձևին < հին իր. *rauka, rauča*, ավստ. *raoxšna* «փայլուն, փայլող»<sup>56</sup>, սողդ. *ryš* «շառատագույն, թուխ կարմիր՝ սևին տվող կարմիր նծույզ», խորեզմ. *rxšyk* «կարմիրին հարող սրճագույն», վախսան. *rakš* «մոխրագույն, սրճագույն»<sup>57</sup>, իսկ դավանի բարբառում այսպես է կոչվում «սև խաղողը մինչև լրիվ հասունանալը»<sup>58</sup>:

Հայերենում նույնիմաստ է *երաշխ*<sup>59</sup> բառամիավորը, որն ունի գործածության միայն մեկ դեպք<sup>60</sup>. «Ի ձի երաշխ արիւնագույն հեծեալ գտեր ետես տեսանօղն»<sup>61</sup>:

Վրացերենի *რახი* «աշխետ ձի» եզրը նույնպես հանգում է իրանականին<sup>62</sup>:

Բառը պարսկերենում անվանական մաս է կազմում *raxš tāxtan* «ձի վազեցնել», *raxš rāndan* «ձի վարել», *raxš ravān kardan* «ձիով սլանալ», *raxš zir-e rān āvardan* «ձի հեծնել», *raxš kardan* «կարմրացնել» հարադիր բայերում: Նշենք նաև, որ պարսկերենում ունենք *raxšro* «Ռախշի նման արագընթաց» և *raxšfarmān* «-Ռախշի նման արագ շարժվող» արտահայտությունները, որոնց գործածությունը հանդիպում է XI դարի պարսիկ բանաստեղծ Մանուչեհրիի «Դիվան»-ում<sup>63</sup>:

Բառանունը պարսկերենում «ուժեղ, հզոր» իմաստով հանդիպում է նաև դարձվածքներում. «*Raxš bāyad tā tan-e Rostam kešad*», բռց. *«Ռախշը պիտի մինչև Ռոստամի մարմինը քաշի»*, այսինքն՝ «այդ գործի համար ուժեղ (զորեղ) մարդ է պետք»<sup>64</sup>:

Չիանունը իրանական փոխառություն է նաև օսմաներենում՝ *rahš* «աշխետ ձի, ազնվացեղ ձի»<sup>65</sup>: Հարկ է նշել, որ ձիու թեմատիկան հատուկ է եղել օսմանյան դիվանի գրականությանը, որի շուրջ ստեղծվել են ռահշիեներ՝ ձիերին փառաբանող քնարական ստեղծագործություններ<sup>66</sup>:

**Samand** (سَمَند) – 1. դեղնաթույր, ոսկեդեղին թույրով ձի, 2. մոխրագույն ձի (ԳԴ, 476), 3. ձիու դարչնագույն, դեղնավուն թույրը (LD, VIII, 12134; FA, 758; FM, II, 1921)<sup>67</sup>: Ֆիրդուսին ձիանունը վկայում է 29 անգամ (WF, 526):

<sup>56</sup> Տե՛ս **H. Bailey**, Dictionary of Khotan Saka, London, 1979, էջ 362:

<sup>57</sup> Տե՛ս **Сре́бляк-Каме́нских И. М.**, նշվ. աշխ., էջ 293:

<sup>58</sup> Տե՛ս **A. Salāmi**, Guyeš-e davāni, Tehrān, 2002, էջ 259:

<sup>59</sup> Տե՛ս **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., 1, էջ 148:

<sup>60</sup> Տե՛ս **Լ. Շ. Հովհաննիսյան**, նշվ. Աշխ., էջ 108:

<sup>61</sup> **Գ. Մազհստրոս**, նշվ. աշխ., էջ 51:

<sup>62</sup> Տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, 2, էջ 39:

<sup>63</sup> Տե՛ս **Manučehri Dameqāni**, Divān, Tehrān, Enteshārāt-e «Heydari», 1348/1968, էջ 76, 136:

<sup>64</sup> **A. Dehxodā**, Amsāl o hekām, Tehrān, 2000, 2, էջ 865:

<sup>65</sup> **Մ. Աբիկեսան**, Ընդարձակ բառարան տաճկերէն հայերէն, Կ.Պոլիս, 1892, էջ 281:

<sup>66</sup> Տե՛ս **I. Pala**, Ansiklopedik Divān Şiiri Sözlüğü, İstanbul, 2004, էջ 38:

<sup>67</sup> Պարսից դասական գրականության հեղինակներ Ֆիրդուսիի, Խաղանիի և Նիզամիի ստեղծագործություններում ուրույն դեր և նշանակություն ունեն այն ձիերը, որոնք տարբերվում էին գունային նրբերանգներով: Ըստ իրանցի ուսումնասիրող Ք. Հասանլիի՝ Ֆիրդուսին «Շահնամե»-ում գույների թեմային մոտեցել է յուրովի՝ կիրառելով հիմնական գույների մեծ մասը: Ուսումնասիրողն առանձնացրել է հիմնական գույները երանգներից և դյուցազներգության մեջ կիրառվող գույները բաժանել է 19 խմբի, ավելի մանրամասն տե՛ս **K. Hasanli, L. Ahmadiyān**, Kārkard-e rang dar «Šāhnāme»-ye Ferdowsi, Tehrān, Faslnāme-ye «Adabpažuhi», 2007, doure-ye I, š. II, էջ 143:

*Samand* էին անվանում «Շահնամե»-ի հերոս Սոհրաբի ձիուն, որը Ռախշի քուռակներից մեկն էր<sup>68</sup>. «...*Ke dāram yekī korre-ye raxšās nežād, be nīr o čō šīr o beraftan čō bād...* Ես ունեմ մի նախշաքուռակ տոհմիկ ձի, ուժը ասես առյուծի, իսկ թռիչքը շանթածին...» (ԲՏ, I-II, 394), «...*Kamān rā bezeh, bar be bāzu afkand, Samandaš bar āmad bar abr-e boland...* Լայնալիճ աղեղը գցեց իր բազկին, Սամանդին էլ տվեց ամպերի փրփուրին» (ԲՏ, I-II, 399): Քննվող բառամիավորի համար առաջարկվել է ստուգաբանություն<sup>69</sup>:

Չիու հավատարմության մասին է խոսվում «Nouruznāme»-ում<sup>70</sup>, իսկ հնագանդության, լավ բնույթի և արտաքին նկարագրի մասին՝ «Qābusnāme»-ում<sup>71</sup> :

*Samand* ձիանունը հիշատակվում է նաև «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձիաբուժական երկում՝ «սև բաշով ու պոշով խարտյաշ ձի»։ «Եւ կան ձիանսին, որ կոչեն *Սամանդ*. և իր գոյնն է սևգոյն դեղին...»<sup>72</sup>:

Չիանունը իրանական փոխառություն է նաև օսմաներենում՝ *semend* «մոխրագույն ձի»<sup>73</sup>, ինչպես նաև «աշխետ ձի, արագընթաց նժույգ»<sup>74</sup>:

Բառամիավորը վկայված է պարսից լեզվի միջնադարյան բառարաններում (BQ, II, 1166; SF, 79; FJ, II, 1712): Նաֆիսիի բառարանում հանդիպում է նաև *samand-e barqraftār* «կայծակի նման սրընթաց ձի» (III, 1936) նկարագրական բարդությունը:

***Siyāh* (سیاه)** - 1. սևաթույր ձի, ամբողջովին սև ձի, 2. թխաթույր ձի, բոց. «սև» (LD, VIII, 12229; FM, II, 1967; BQ, II, 1199; ԳԴ, 497). «...*Bīārīd goftā siyāh-e marā, nabard-e yabā o kolāh-e marā...* Բերեք, ասաց, սև նժույգս, *naiqūsh* կապան ու *qijūsh*...» (ԲՏ, III-IV, 1457):

Բառանվան նախաձևն է \**k'jēuá-*, որը ծագում է \**kjē-* արմատից՝ «մութ կամ մուգ գույնի, մուգ սրճագույն», հ.պրս. \**siyāva*, միջ. պ. *siyā* «սև, մուգ գույն», սողդ. *s'w* «սև», խորեզմ. *s'w* «սև», օս. *saw* «սև», տաջ. *siyoyak* «աչքի բիբ» և այլն:

Ֆիրդուսիի հիշատակված ձիանուններում «սևաթույր, գիշերվա նման մուգ գույնի ձի» իմաստն են արտահայտում բազմաթիվ բառեր՝ *diz/dize, šabdīz, šabgun, šabrang, ābnus, qar, qir, par-e zāq*:

Պարսկերենում *diz/dize* բառերը 1. սևաթույր ձի, 2. ձի (ջորի, ավանակ), որը գլխից մինչև պոչը սև երիզ ունի, 3. ձիու սև թույրը, 4. մուգ մոխրագույն սևին

<sup>68</sup> Տե՛ս **T. Noldeke**, *Hamāse-ye melli-ye Irān*, Tehrān, 1947, էջ 96:

<sup>69</sup> Տե՛ս **H. Kirakosyan, A. Sargsyan**, On the Appropriation of Lexicographic Methods of Kemālpašazāde's (1468-1534) Glossary *Dakāyiku l-hakāyik*, *Diyār, Ergon, Zeitschrift für Osmanistik, Türkei- und Nahostforschung – Journal of Ottoman, Turkish and Middle Eastern Studies*, 2. Jahrgang, 1/2021 | Heft, էջ 14-27:

<sup>70</sup> Տե՛ս **O. Xayyām**, նշվ. աշխ., էջ 53:

<sup>71</sup> Տե՛ս **Onsor al-ma' ali Keykavus**, *Qābus nāme*, էջ 106:

<sup>72</sup> «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)», աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասյանի, Եր., 1980, էջ 56:

<sup>73</sup> Տե՛ս **Մ. Արիկեան**, նշվ. աշխ., էջ 324:

<sup>74</sup> Տե՛ս **Պ. Զեքի Կարապետեան**, նշվ. աշխ., էջ 438:

հարող ձի, ուղտ, ավանակ իմաստներն ունեն: Եզրը վկայված է «Շահնամե»-ում (5 անգամ, WF, 415): Ձիանունների ուսումնասիրության ընթացքում այն հանդիպում է միայն Ֆիրդուսիի մոտ. «...*Koşa dīze-ye to čamad ruz-e jang, šetāb āyad andar sepāh derang...* Որտեղ ես թողել արածելու քո սևաթույրին, երբ պետք է հեծնես ու շտապես մարտի...» (FŠ, I-II, 170/1195): Պարսկերենում բառամիավորից ունենք *dizak*՝ 1. մոխրագույն, 2. թխաթույր, սևաթույր ձի բառը (LD, IX, 12455), որի վկայությանը չենք հանդիպել Ֆիրդուսիի մոտ: *Diz* բառից է նաև *šabdiz* եզրը, որը ինն անգամ հանդիպում է «Շահնամե»-ում (WF, 553): Ֆիրդուսին այս անունով է կոչում առասպելական արքաներ Լոհրասպի, Գոշթասպի, Բահրամ Գուրի ձիերին. «...*Šab-e tīre Šabdīz-e Lohraspī, bīāvarad va zīn-e Goštaspī...* Սկանակիր գիշերվա մթում Լոհրասպի սևաթույրը (Շաբ-դիզին) բերեցին՝ Գոշթասպի թամբը մեջքին...» (FŠ, III-IV, 1277): *Šabdiz* էին անվանում նաև Մասանյան Խոսրով Փարվիզ (590-628թթ.) արքայի նծույզին, որը նաև *šabgun* (բոց. *գիշերագույն*) էր կոչվում «փայլուն մուգ սև գույն» ունենալու պատճառով: «Սևաթույր ձի» նշանակությամբ ձիանունների շարքն է լրացնում նաև *šabrang*-ը. «...*Sarānešān be xanar beborīd past, be fetrāk-e šabrang-e sarkeš bebast...* Դաշույնով կտրեց նրանց գլուխները մարմնից և կապեց իր ըմբոս սևաթույրի թամբից...» (FŠ, I-II, 934/130): «Շահնամե»-ում այս անունով էին կոչում նաև Սիավուշի և Բիժանի ձիերին (RF, 620): Սիավուշի ձիուն անվանել են նաև *Behzād* (FNSŠ, 219, 619), որը Ֆիրդուսիի հաճախ «*šabrang*», բոց. «*սևաթույր*», ածականի հետ է կիրառել. «...*Čenīn goft shabrang Behzādra...* Այսպես անվանեց Բեհզադ սևաթույրին...» (FŠ, V-VI, 2039/580)<sup>75</sup>:

Ըստ հին իրանցիների հավատալիքների՝ «*սև ձի*» բարեբախտ և երջանկաբեր է համարվել, իսկ արքաների սևաթույր ձին նրանց ուժն է ցույց տվել և հզորությունն ու փառքը խորհրդանշել<sup>76</sup>: *Siyāh* էին անվանում «Շահնամե»-ի հերոսներ Քեյխոսրով արքայի, Սիավուշի, Գոշթասպի, Էսֆանդիյարի ձիերին՝ մուգ, փայլուն սև գույն ունենալու պատճառով:

Հայերենում հիմնական գունանուններից սևը, լինելով իրանական փոխառություն և սկզբնական շրջանում ունենալով կիրառության նեղ շրջան, վերաբերել է կոնկրետ առարկայի: Սևուկ էր կոչվում նաև հայոց Արտաշես արքայի ձին. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան գեղեցիկ...»<sup>77</sup>: Աստվածաշնչում ձիու վեց վկայություններից երեքը ևս վերաբերում են սևաթույր ձիուն<sup>78</sup>:

<sup>75</sup> Ըստ որոշ կարծիքների՝ «*šabrang*»-ը ձիու թույրն է, իսկ «*Behzād*»-ը ձիու հատուկ անունն է՝ կազմված *beh* «բարի» և *zād* «ծնունդ» ձևույթներից, այսինքն՝ «բարեծին»՝ «*սևաթույր բարեծին*», այս մասին տե՛ս BQ, I, էջ 326:

<sup>76</sup> Տե՛ս K. Hasanli, L. Ahmadiyān, Kār kard-e rang dar "Šāhnāme-ye" Ferdowsi, Faslnāme-ye "Adabpažuhi", Tehrān, 2007, 2: 153:

<sup>77</sup> Մ. Խորենացույ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913, էջ 179:

<sup>78</sup> Տե՛ս Լ. Ե. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 113:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ առաջին անգամ ներկայացվում են իրանական ծագման ձիանունները «Շահնամե»-ում, որոնց թիվը հոդվածում 13-ն է: Ստեղծագործության մեջ դրանք երեք տասնյակից ավելի են, չնչին են արաբական ծագման ձիանունները<sup>79</sup>:

Պետք է նշել, որ Ֆիրդուսիի «Շահնամե»-ում, որը գրված է խորասանյան ոճի դասական պարսկերենով, առավել շատ վկայված են իրանական ծագման ձիանուններ, մինչդեռ ավելի ուշ շրջանի պարսից գրականության շիրվանյան կամ իրաքյան ոճի շրջանակներում ստեղծագործած Խաղանիի և Նիզամիի երկերում արդեն արաբական ծագման փոխառյալ ձիանունների բավական առատ գործածություն է նկատվում: Քննությամբ պարզվեց նաև, որ պարսից դասական գրականության նշված հեղինակների երկերում շատ սակավադեպ են թյուրքական ծագման ձիանունների հիշատակումները՝ ի տարբերություն արաբերենից փոխառյալ ձիանունների հսկայական բազմազանության, որոնք մեծ թիվ են կազմում ինչպես պարսից դասական պոեզիայում, այնպես էլ արձակ երկերում:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ավստ. - Ավեստայի լեզու	նիվդ. - Նեհավենդի բարբառ
արաբ. - արաբերեն	ուկր. - ուկրաիներեն
աֆղ. - աֆղաներեն	պամ. մունջ. - պամիրյան
գիլ. - գիլաներեն	մունջաներեն
դաս. պրս. - դասական պարսկերեն	պիլվ. - պահլավերեն
թլշ. - թալիշերեն	պրթն. - պարթևերեն
թրք. - թուրքերեն	ռուս. - ռուսերեն
ժ. պրս. - ժամանակակից պարսկերեն	սեմ. - սեմնաներեն
լեհ. - լեհերեն	սկյութ. - սկյութերեն
խոթ. - խոթաներեն	սողդ. - սողդերեն
խորեզմ. - խորեզմերեն	վախ. - վախաներեն
հ. իր. - հին իրանական	տաջ. - տաջիկերեն
հ. պրս. - հին պարսկերեն	քրդ. (կուրմ., սոր.) - քրդերեն
հյ. - հայերեն	(կուրմանջի, սորանի)
մ. պրս. - միջին պարսկերեն	օս. - օսերեն
մազանդ. - մազանդարաներեն	ֆարիզ. - Ֆարիզանդի բարբառ
յղնբ. - յաղնուբերեն	

<sup>79</sup> Տե՛ս **Չ. 2. Խաչատրյան**, Ձիանունները պարսկերենում և հայերենում. համեմատական ուսումնասիրություն, Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Եր., 2019:

**ЗАРУИ ХАЧАТРИАН – Некоторые иранские наименования лошадей в «Шахнаме» Фирдоуси.** – Лошадь имеет исключительную роль и значение в жизни и культуре иранских народов. Произведение «Шахнаме» великого персидского поэта Фирдоуси со своей исключительной лексикой считается бесконечным источником и мощной внутренней силой в плане развития персидского языка. Своеобразную и неотъемлемую часть составляет лексика, связанная с животным миром, где в наименованиях домашних животных особое место занимают наименования лошадей.

Фирдоуси в «Шахнаме» использует более тридцати терминов, обозначающих лошадей, как средство для ведения военных действий, как домашнее вьючное животное и как транспортное средство, а также наименования лошадей по физическим и внешним признакам.

В рамках этой статьи обсуждается несколько наименований лошадей иранского генезиса, приведенных в произведении «Шахнаме»: *asb, čarme, bur, tāzi, tak, takāvar, xeng, raxš, Raxš, samand/ Samand, sīyāh/ Sīyāh*, подвергая их к морфологическому и эти-мологическому анализу.

**Ключевые слова** - Фирдоуси, «Шахнаме», лошадиная кличка, фразеология иранского происхождения, иранские языки, образец, заимствования, средневековый словарь

**ZARUHI KHACHATRYAN – Some Iranian Horse Names in “Shahnameh” by Ferdowsi.** – The horse has an exceptional role and significance in the life and culture of Iranian peoples. “Shahnameh”, the masterpiece of the great poet of Iran, Ferdowsi, is considered as an endless source and a powerful potential for the development of the Persian language thanks to its highly rich vocabulary. A big and unique part of the vocabulary is the words related to the animal world, where the horse names have a special place among the names of domestic animals. Ferdowsi in “Shahnameh” uses more than thirty terms indicating horses, as a mean of military actions, as a domestic pack animal and as a means of transportations, as well as horse names based on the physical and appearance features. In this article, some of the Iranian horse names (*asb, čarme, bur, tāzi, tak, takāvar, xeng, raxš/Raxš, samand/ Samand, sīyāh/ Sīyāh*) are discussed from the morphological and etymological perspectives.

**Key words** - Firdousi, "Shahname", horse name, phraseology of Iranian origin, Iranian languages, pattern, borrowing, medieval dictionary

## «ԱՆՁՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ԽՄԲԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ\* 

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

«Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խումբը լեզվի բառապաշարի այն գործուն հատվածներից է, որը մշտապես համալրվում և հարստանում է հատկապես փոխառությունների միջոցով:

Ձեռնարկելով *զարդ* հասկացությունն արտահայտող բառերի և դրանց տարբերակների քննությունը հայերենի բարբառներում՝ հողվածում նպատակ է դրվել ներկայացնել ժողովրդի լեզվամտածողության յուրահատկություններն այս իմաստային դաշտում՝ որոշ չափով բացահայտելով հայ բարբառների բառապաշարի առանձնահատկությունները:

Աշխատանքի նյութն արդիական է, քանի որ այս իմաստային դաշտը գրեթե ուսումնասիրված չէ ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ հայերենի բարբառներում, և կարևորվում է նրանով, որ փորձ է արվել *զարդ* հասկացություն նշող բարբառային բառերի փոքրիշատե ամբողջական բառացանկը ներկայացնել:

Քննությամբ պարզվել է, որ զարդերի ու զարդարանքների անվանումները բավականաչափ բազմազան պատկեր են ներկայացնում հայերենի բարբառներում, որը պայմանավորված է լեզվամտածողությամբ, աշխարհագրական, ժամանակային և այլ գործոններով: Գտել ենք «զարդ» հասկացություն արտահայտող շուրջ 100 բառ՝ բառակազմական և հնչյունական տարբերակներով, որոնց մեծ մասն արձանագրված չէ ստուգաբանական բառարաններում:

**Բանալի բառեր** - *զարդ, իմաստային դաշտ, բարբառ, ապարանջան, մատանի, վզնոց, գլխի զարդ, մազերի զարդ, առածներ, դարձվածքներ*

\* **Լուսինե Ղամոյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող

**Лусине Гамоян** – кандидат филологических наук, старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА

**Lusine Ghamoyan** – Candidate of Philological Sciences, Senior Researcher – at the Institute of Language after H. Acharyan of NAS RA

Էլ. փոստ՝ [lgamoyan@mail.ru](mailto:lgamoyan@mail.ru). ORCID: <https://orcid.org/0009-0003-6552-5254>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.03.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

**Զարդ, զարդարանք<sup>1</sup>**

«Անձնական զարդարանք» հասկացության անվանումների շղթայում ելակետային բառը **զարդն է**՝ «մարմնի այս կամ այն մասը զարդարելու ավել կամ պակաս չափով թանկագին կամ գեղեցիկ իր» իմաստով (ԺՀԼԲԲ), ապա՝ **զարդարանք** հասկացությունը՝ «այն բոլոր զարդերի ամբողջությունը, որով զարդարված է որևէ անձ կամ իր» իմաստով (ԺՀԼԲԲ): Հետաքրքրականն այն է, որ նշված հասկացությունները մեր ձեռքի տակ եղած հայերենի բարբառային բառարաններում արձանագրված չեն<sup>2</sup>: Միայն առկա են *զարդ* բառից կազմված մի քանի բաղադրյալ բառեր, ինչպիսիք են՝ **զարդարում** (Զթ.), **զարդ/ա/իչած** (Ագլ.), **զարդրման** (Տիգ.), **զարդրուն** (Զրս.), **զարդուկ** (Բլ., Մշ.), **զարդրվորիլ** (Մշ.)<sup>3</sup>:

Արդի հայերենում հաճախակի գործածություն ունեցող *զարդ* և *զարդարանք* հասկացությունները հայերենի բարբառներում արտահայտվում են հետևյալ բառերով. **խլխալ** (Սս.) «զարդեղեն, զարդարանք», **զուս ու զինաթ** «զարդ ու զարդարանք», **տուտուփ** «կանացի մի տեսակ զարդ», **զենաթ** (Վն.) «զարդ, զարդարանք», **սյուս** (Եվդ. (Ամս.)) «զարդարանք», **զագոնք** (Հմշ.) «զուգս, զարդարանք», **աջնաս** (Թբ.) «տնային ունեցվածքը՝ զարդեղեն և իրեր» և այլն:

*Որպես թանկագին և անարժեք զարդերի անվանումներ*՝ հայերենի բարբառներում արձանագրված են՝ **ամարաթ** (Կր.) «թանկագին ակնեղեն, զարդարանք», **ուրսկը** (Մկս.) «ոսկի», **վեսկի** (Ղրբ.) «ոսկի», **փլորի** (Թբ.) «ոսկի», **էրծաթ** (Ար.) «1. արծաթ, 2. արծաթե զարդ», **արծթուք** (Սբ.), **արծթունք** (Քղ.) «արծաթեղեն զարդեր», **զինաթ** (Ար., Թբ., Վն.) «1. զարդ, զարդարանք, 2. թանկագին իր», **զինիեթթ/զինիխաթ/զինիքար** (Հվր.) «ոսկեղեն ու արծաթեղեն զարդարանք», **խըշը** (Սս.) «զարդ՝ արծաթյա կամ ոսկյա», ապա՝ **երննիկ** (Ակն.) «մանր զարդ, չնչին պիտույք», **ճընիս-սընիս** (Խրբ.) «անարժեք՝ հասարակ զարդարանք» և այլն:

*Զարդարվել* («զարդեղեններով պատվել, զարդեր հագնել») հասկացությունը հայերենի բարբառներում արտահայտվում է հետևյալ բառերով՝ **խամկվել/խամիլ** (Վն., Շտխ., Սս., Միպ., Խիգ.), **սյուսվել** (Վն.), **հագվորիլ** (Մշ., Սս.),

<sup>1</sup> Աշխատանքում ներկայացված օրինակները վերցրել ենք հետևյալ բառարաններից. Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ. Ա-Է, Եր., 2001-2012, **Հ. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան («Էմինեան ազգագրական ժողովածու»), հ. Թ, Թիֆլիս, 1913: Դրանք համեմատել ենք հետևյալ բառարաններով. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Եր., 1971-1979, **Գ. Ջանուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, **Սո. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, 2 հ., Եր., 2000, **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Եր., 1969-1980, **Հ. Աճառեան**, Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուի մեջ համեմատությամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներում, Մոսկուա-Վաղարշապատ, 1902 (բոլոր բառարանները տե՛ս [http://www.nayiri.com/dictionaries.jsp?l=hy\\_LB](http://www.nayiri.com/dictionaries.jsp?l=hy_LB)):

<sup>2</sup> Զարդ բառը կա միայն Թբիլիսիի բարբառում՝ «ղեղին» իմաստով:

<sup>3</sup> Նշենք, որ զարդ արմատով օրինակները բերված են ըստ ՀԼԲԲ-ի, որտեղ գրությունը երբեմն չի արտահայտում բառերի բուն արտասանությունը, ինչպես՝ զարդարում (Զթ.՝ ճարդարում):

**տրոսվել** (Թբ.), **սուքրոտել** (Մշ. (Բղշ.)) «ինքն իրեն զարդարել», **սքվիլ** (Պլ., Մբ., Խրբ.) «զուգվել-զարդարվել, հագնել-կապել», **սրպուրիլ** (Սվ.) «զարդարվել», **կոկվորել** (Խրբ. (Բլ.)) «հարդարել, հարդարվել, արդուզարդը տեղը լինել», **զարդրվորիլ** (Մշ.) «զարդարվել», **զլպսվել/զլպսվիլ/զպլսվել** (Աբ., Թբ.) «պճնվել, զուգվել-զարդարվել», **գրեհվել** (Ղրբ.) «զուգվել, զարդարվել», կան նաև **բայական հարադրություններ**, ինչպես՝ **լոսվել-կոկվել** (Ղրբ.) «զարդարվել, զուգվել», **զարվել-զարդարվել** (Վն.) «զուգվել, պճնվել», **կալել-կապել** «1. կալ-կապս անել, 2. հագնվել, զարդարվել, զուգվել» և այլն:

«Ջարդարել» հասկացությունն արտահայտվում է **խոնջուլել** (Ղրբ.) «զարդարել (վզնոցով, օղերով)», **խարքնել-խիցնել** (Մշ., Մս.) «զուգել-զարդարել», **կածնել** (Խտջ.) «զարդարել» և այլ բառերով:

«Ջարդարել» իմաստն ունի նաև արդի հայերենի «կազմել» բայը («հավաքելով, համախմբելով, միավորելով կազմակերպել՝ ստեղծել (որևէ ամբողջական բան)»), որը Համշենի բարբառում դրսևորվել է **զագնուշ** հնչաձևով և ունի «հարսի շորերը հագցնել, որևէ բան զարդարել, ձին սարքել» նշանակությունները<sup>4</sup>:

«Պճնանք սիրող, պճնվել՝ զուգվել՝ զարդարվել սիրող» կամ «պճնված, զարդարված» անձը հայերենի բարբառներում բնորոշվում է հետևյալ բառերով՝ **խազան** (Վն.) «հագնված, զարդարված», **զարդրման** (Տգր.)//**զարդրմուն** (Չրս.)//**զարդրուկ** (Խրբ., Բլ., Մշ.) «զարդարված», **զարտրուկ** (Վն.) «զարդարված», **այլը-փուլլու** (Պրտ.) «փայլուն զարդերով զարդարված», **հագվուն** (Մբ.) «պճնազարդված, հագած-կապած», **կածվուկ** (Խտջ.) «զարդարվող», **սյուսլի** (Վն.) «պճնամուլ, պճնասեր», **շղվայեկ** (Պլ. (Պրտ.)) «պչրվել, զարդարվել սիրող», **զարդասիչած** (Ազլ.) «զարդարված, զարդարուն, նախշուն», այդպես նաև՝ **տնկոզություն** «զուգվել-զարդարվելով սիգալը», **տոտոզել** (Կր. (Չվիս., Ախք.)) «1. զուգել-զարդարել, 2. խաբել, 3. սիգալ, շորորալ» և այլն: Առկա են նաև անվանական մի շարք հարադրություններ, ինչպես՝ **հագուկ-սքուկ** «զուգված-զարդարված», **զարուն-զարդարուն** (Վն.) «լավ զարդարված, զուգված, պճնված», **ստթոթ-կոկող** (ՆԲ) «պճնասեր, զարդարվել՝ պճնվել սիրող», **կուտ-կուտուզ** (Նկմ.) «հագնված-զուգված» և այլն:

«Ջարդ» ասելով սովորաբար հասկանում ենք հետևյալ հասկացությունները՝ **սպարանջան**, **ականջօղ**, **վզնոց**, **մատանի**, **գլխագարդ** և այլն. այս բառերը հիմնականում գործածվում են արդի գրական հայերենում, իսկ բարբառներում դրանք արտահայտվում են զանազան այլ անվանումներով, որոնց կծանոթանանք ստորև:

### Ապարանջան

«Դաստակին անցկացնելու օղակաձև զարդ»: Հայերենի բարբառներում փաստված է մի շարք հնչյունական տարբերակներով՝ **սպորճան/սպորջան** (Բլ., Էվր., Մշ., ՆՆ, Շմիս., Պլ., Մբ., Քդ. և այլն), **սպորնճան** և այլն:

<sup>4</sup> Տե՛ս **Ն. Խաչատրյան**, Իմաստափոխության իրողություններ Համշենի բարբառում // Ջահուկյանական ընթերցումներ, 1 (16), Եր., 2021, էջ 38-48:



«Ապարանջան» նշանակությամբ Նոր Ջուղայի բարբառում հայտնի է՝ *ալանգու*, Նոր Նախիջևանում՝ *ասլիճան*, Ղարաբաղի (Գանձակ) բարբառում՝ *սլվոն*, *կոլլուդ*, ապա՝ *սլթո* (Տգր.) «կանանց թևի ոսկեդեղն գարդ», *մասսե* (Տիգ.) «արծաթե գարդ, որ անց են կացնում մանուկների թևերը՝ հետը խաղալու համար» և այլն:

«Բազպան, թևակալ, ապարանջան» նշանակությամբ գործածական են նաև՝ *բազբանդ* (1. Ար., Մկս., Մղր., Մշ., ՆԲ, Շտխ., Վն.)//*բազմանդ* (Ար.)//*սոզպանտ* (Ար.) բառային տարբերակները, ինչպես նաև՝ *բիլագիզ* (Ար., Կր.)//*բիլագուկ* (Ար., Ղրբ., Մշ., Վն.)//*սլիլեզուկ* (Ամս.):

«Ապակե ապարանջան, ապակե թևնոց» իմաստով Սեբաստիայի բարբառում ունենք՝ *սրչա*, Խարբերդում՝ *շեն*, *բագիլա*, «ոտքի ապարանջան» նշանակությամբ հայտնի են *աղթաման* (Բլխ.) և *խալխալ*<sup>5</sup> կամ *խալխալա* (Կր., Բլնխ.) բառերը. վերջինս ունի և՛ *ձեռքի*, և՛ *ոտքի ապարանջան* իմաստները:

### Ականջող

«Ականջի օղ, գինդ» իմաստով գտել ենք միայն Կողբի խոսվածքում գործածվող *անգջաթան* «ականջող» բառը, իսկ Մուշի բարբառում՝ *անկջիկ*, *անկջուկ* «կանացի գարդարանք (կտորի վրա ոսկիներ են շարում և կախում ականջին)»:

### Վզնոց

«Վզին կապելու կանացի գարդ բաղկացած ոսկիների կամ մարգարիտների շարոցից», «վզից կախելու հուռույթ, հմայիլ»: Բարբառներում այն գործածվում է *վզնոց* (Մբ., Մշ., Ջթն.)//*վիզնոց* (ՆՆ, Ջթն.) տարբերակներով՝ «1. վզնոց, 2. (Մբ.) փողկապ, 3. (Մշ.) հուռույթ, 4. (ՆՆ, Ջթն.) կանացի գլխաշոր» իմաստներով:

Որպես վզնոց բարբառներում հայտնի են հետևյալ բառերը՝ *բերթանան* (Քնդ.) «վզնոց», *թիլզցիկ* (Թբ.) «մանյակ», *զուսկ* (Խիգ.) (զուքս-ի աղավաղված ձևը նեղ՝ մասնակի իմաստով)//*զուքս* «մանյակ, վզնոց», *բողմաղ(ա)* (Բս.) «կանանց պարանոցի գարդ՝ մետաքսե երիզի վրա կողք կողքի կարված ոսկյա ձողիկներով, որոնցից կախվում են ոսկյա դրամներ», *կոլանջարդաթ* (Ղրբ.) «կանանց վիզը ծածկելու գարդ», *կորդոն* (Վն.) «ոսկե կամ արծաթե շղթա՝ կանանց վզից ժամացույցը կախելու համար», *ճտանոց* (Ղրբ.)//*ճտնոց* (Ար., Կր., Վն., Մբ.) «կանանց պարանոցի գարդ, ոսկիների, արծաթի և այլն շարք՝ վզից կախելու համար, վզնոց», *սյումանճուկ* «կանանց պարանոցի՝ կրծքի արծաթյա գարդ», *սյուխաղ* (Խտջ.) «կանացի մի տեսակ վզնոց», *ոսյրնի* (Խրբ. (Բլ.)) «կանացի արծաթյա մանյակ», *թխտիկ* (Խրբ. (Բլ.)) «արծաթյա եռանկյունաձև գարդ, որ կանայք կախում են պարանոցից», *լոխ* (Վն.) «կանացի ոսկե կամ արծաթե պարանոցի գարդ», *լոՖ* (Քդ.) «արծաթե գարդ, որ կանայք կախում են պարանոցից»,

<sup>5</sup> Այս բառն ունի համանուն՝ *խալխալ*<sup>1</sup> «1. Ղրբ., Նբ., Վն., Ուրմ. խալեր ունեցող, խալավոր, պիսավավոր, պուտ-պուտ նշաններով: 2. Նբ. նարդի խաղի մեջ մեկ նշանով քարեր»:

բառակապակցությամբ հանդիպում ենք՝ **դեղին ճտնոց** (Վն.) «ոսկու շար, որ կանայք կրում են վզների»:

### Կրծքի զարդ

**Կրծքի զարդ** նշանակող բառերից են՝ **պրոշ** (Մշ.) «բրոշ, կրծքի զարդ», **դռշանոց** (Բրչլ.) «կրծքի քորոց՝ զարդ», **կոսթեղ** (Խտշ.) «արծաթներով շարված կրծքի զարդ», **ձնեք** «երկար ոսկեղեն կանացի զարդ, որ կախում են կրծքին» և այլն:

### Ճակատի զարդ

«Ճակատի զարդ» հասկացությունը բարբառներում արտահայտվում է իմաստային նրբություններ ունեցող տարբեր բառերով, ինչպես՝ **երեսնոց** (Ուրմ., Մբ., Շիր., Մշ., Վն.) «վրան ոսկի կամ արծաթ դրամներ շարած կտոր, որ կանայք իբրև զարդ կապում էին ճակատներին», **ճակատ(ա)նոց** (Ղրբ., Կր., Մշ., Տիգ.)//**ճակտնոց** (Կր., Մշ., Վն., Մբ.) «կանանց ճակատին իբրև զարդ կապվող ոսկորների շարան», **ճայտի օսկի** «կանանց ճակատի զարդոսկիները», **ճղեք** (Մբ.) «կանանց ճակատի մարգարտյա զարդ», **մախչա/մաղչա** (Վն., Խիգ., Պպ.) «կանանց ճակատի զարդ», **մահմուտիա** (Մշ.)//**մայմաղիա** (Կր., Ախբ.) «թուրքական հին ոսկե կլոր զարդարանք, որ կանայք գործ էին անում շերտի մեջ՝ ճակատը զարդարելու համար», **ջաղալաթ** (Քսբ.) «ճակատանոց» և այլն:

### Քթի զարդ

«Քթի զարդ» հասկացությունն արտահայտող բառերից հայերենի բարբառներում գտել ենք՝ **խազեմ** (Խիգ.) «քթի զարդ», **խզմա(ր)** «1. Շիր., Ջվխ. շորի կտոր՝ թաշկինակ, որով հնում կանայք ծնոտի տակից ծածկում էին իրենց քիթն ու բերանը, քթկալ, 2. Կր., Մշ., Բլ., Պպ. արծաթյա կամ ոսկյա փոքրիկ զարդ, որ կանայք անց էին կացնում քթի ներքևի մասից» և այլն:

### Մատանի

«Մետաղե փոքր օղ, հաճախ վրան որևէ գոհար, որ իբրև զարդ դնում են մատները»: Այս նշանակությամբ բարբառներում գործածվում են հետևյալ բառային միավորները՝ **ալիանս** (Պլ.) «խոսքկապի ոսկե մատանի», **մաննիկ** (Ուրմ.) «մատանի», **մաննա** (Քսբ.)//**մաննիք** (Մկս.) «մատանի», **մատնի** (Պլ., Կր., Մբ.) «մատանի», **մատնիկ** (Վն., Մշ., Ակն., Շտխ., Սս.) «մատանի», **նշան/նիշոն** «1. նշան, 2. նշանադրության ժամանակ փեսացուի կողմից հարսին տրված ոսկյա մատանի կամ այլ զարդ՝ իբրև հավաստիք նշանադրության» և այլն:

### Գլխազարդ

«Գլխի զարդ, գլխի զարդարանք»: Այս իմաստով բարբառներում առկա են հետևյալ բառերը՝ **դիադեմ** (ՆՆ) «կանացի գլխազարդ՝ թագի ձևով», **զրլի** (Մշ.)

«կանացի գլխազարդ, որ բաղկացած է երկու շարք մարգարիտներից», **թամա-  
ղա** (Վն.) «ժապավենի նման արծաթյա զարդ, որ կանայք կապում են գլխնե-  
րին», **թանթանա** (Կր. (Ջվխ.)) «կանացի գլխազարդ, ճակատակալ», **կոլոթ** (Կր.,  
Շիր., Ախց.) «1. կանանց գլխի կիսալուսնաձև զարդարանք պղնձից, փայտից  
կամ խավաքարտից, որի վրայից գցում էին գույնզգույն գլխաշոր կամ շղարշ,  
2. հավերի գլխի վրա փետուրե ցցունքը», **կոլոլ** (Ղրբ.) բառն ունի 6 իմաստ, ու-  
րոնցից միայն 4-րդն է *զարդ* նշանակությամբ՝ «կանանց գլխի զարդ կազմող  
ոսկե գնդիկները, որ կախվում են այտերին», **մեջանոց/միջանոց** (Ղրբ.) «մեծ ոս-  
կի, որ կանայք գործ են ածում իբրև գլխի զարդ», **վազմա** «1. հատուկ փոքրիկ  
աման, որի մեջ վառող են պահում, 2. կանացի գլխազարդ, որ ամրացվում է  
գլխաշորին», **հրոթնանուց** (Ղրբ.) «կանանց գլխազարդ», **հրսանուց** (Ղրբ.) «Ղա-  
րաբաղի կանանց գլխազարդ», **ճրնկրլ-մրնկլ** (Կր., Շիր., Խտջ.) «գլխի ոսկյա  
զարդ», **ճլպինդ** (Ար., Կր., Շիր.) «կանանց գլխի զարդ՝ երկու մատնաչափ լայ-  
նությամբ և ճակատի երկարությամբ թավշե կտոր՝ ոսկեգոծ թելերով ասեղնա-  
գործված, որի վրա կարում են ճակատանոցի ոսկիները, ճղալ (կանացի գլխի  
ցցուն զարդ», **շանճախ** (Ղրբ.)//**շանջախ** (Ղրբ.)//**շանրդ** (Ղրբ. (Գրս.)) «քորոց,  
գնդասեղ (կանայք գործ են ածում որպես գլխազարդ», **ջավշակ** (Կր.) «կանացի  
գլխազարդ, որ ձգվում է ճակատի վրա՝ մի քունքից մյուսը. մարգարիտներով  
ու ոսկի ձողիկներով կարած ժապավեն, որի ներքևից խիտ առ խիտ շարված  
են մանր տաճկական ոսկի դրամներ, կտուց», **պանցու** (Ղրբ. (Բլ.)) «արծաթյա  
զարդ, որ կանայք կապում են իրենց գլխին» և այլն:

### **Մազերի զարդ**

Բարբառներում «մազերի զարդ» հասկացությունն արտահայտող բառերից  
է, օրինակ, **սարաղունջ** (Վն.)//**սարախումճ**-ը (Ջթն.)՝ «1. Վն. մետաքսե կամ մա-  
հուղե կտոր՝ զարդարված արծաթ դրամներով՝ ուլունքներով՝ ասղենկար  
նախշերով, որը կանայք ետևի կողմից կախում են մազերի վրա. վերևից իջնում  
է մեջքից ցած կամ մինչև գոտկատեղը, 2. Ջթն. կանանց ֆեսի վրա ծոպի շուրջը  
իբրև զարդ 4-5 կարգ խիտ առ խիտ շարված արծաթ մեկ փարանոցների շարք,  
3. Խտջ. լայն ժապավենաձև բանաձո կտորզարդ նորապսակ հարսների հա-  
մար» իմաստներով:

Պետք է նկատել, որ բարբառներում կան այնպիսի զարդերի անվանումներ,  
որոնք միաժամանակ կարելի է օգտագործել մարմնի կամ զգեստի տարբեր  
հատվածներում, ինչպես **շրիտ** (Ար., Մկս. (Խիզ.), Սշ. (Բղշ., Ալշ.)) հասկացույ-  
թունը, որը հայերենի բարբառներում փաստված է մի քանի հնչյունական տար-  
բերակներով **շրետ** (Մկս.)//**շրիդ** (ՆԲ, Կր., Վն. (Պպ.))//**շերիտ** (Կր.)//**շերիթ**  
(ՆՆ)//**շերիդ** (Արբ. (Գմք.))//**շիրիտ** (Ար., Սշ., Շտխ.) և այլն. այն միաժամանակ  
գործածվում է և՛ որպես «նեղ ժապավեն, որ զարդի և ամրության համար կա-  
րում են զգեստի կրծքին՝ թևերին՝ քղանցքին», և՛ որպես «կանանց գլխի զարդ  
ժապավենի ձևով, խիտ-խիտ շարված ոսկի կամ արծաթ մանր դրամների շար,

որ կապում էին ճակատին»:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ վերոնշյալ բառերի մեծ մասն արձանագրված չէ մեր ձեռքի տակ եղած ստուգաբանական բառարաններում, հետևաբար, դրանց ծագումն անհայտ է: Միայն ենթադրաբար կարող ենք ասել, որ դրանք միգուցե բանավոր փոխառությունների արդյունք են: Շատ քիչ բառերի ծագումն է հայտնի, ինչպես՝ *ամարաթը* փոխառություն է արաբերենից, *խալխալ(այ)-ն*՝ պարսկերենից, *ապարանջանը* իրանական փոխառություն է, *արծաթը* բնիկ հնդեվրոպական բառ և այլն:

Քանի որ ոչ մի վայրի խոսվածք ամբողջությամբ նույնական չէ մեկ այլ վայրի խոսվածքի հետ, հետևաբար միևնույն բառը տարբեր բարբառներում կամ խոսվածքներում կարող է բոլորովին այլ նշանակություններ ունենալ, որի հետևանքով էլ առաջանում են բազմաթիվ համանունական շարքեր:

Ուսումնասիրության արդյունքում նկատել ենք, որ «անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խմբում համանուն բարբառային բառերը բազմաթիվ են, ինչպես՝

**լոխ**<sup>1</sup> (Ղրբ., Շմխ.) «ամենը, ամենքը, բոլորը, ամբողջը»-**լոխ**<sup>2</sup> (Վն.) «կանացի ոսկե կամ արծաթե պարանոցի զարդ»,

**լոֆ**<sup>1</sup> (Ակն., Այնթ., Խրբ.) «1. օճառի կտոր, 2. *Խրբ.* ծամոնի մեծ կտորը» - **լոֆ**<sup>2</sup> (Քղ.) «արծաթե զարդ, որ կանայք կախում են պարանոցից»,

**թոթոնիկ**<sup>1</sup> (Վն.) «թիթեռ» - **թոթոնիկ**<sup>2</sup> (ՆՋ) «արծաթյա զարդ, որ կանայք կախում են իրենց քունքերին»,

**հալալ**<sup>1</sup> (Ար., Ղրբ., Կր., Խտջ., Մշ., Սս. և այլն) «1. արդար, անխարդախ, ազնիվ, 2. հարազատ և այլ իմաստներ» - **հալալ**<sup>2</sup> (Սվ.) «ապարանջան՝ կեղծ քարով շինված»,

**կոլոտ**<sup>1</sup> (Ար., Լ., Ղրբ., Ղզխ., Կր., Շիր., Ապր., ՆԲ, Վն., Արճ.) «կարճահասակ, ցածրահասակ» - **կոլոտ**<sup>2</sup> (Ար.) «հորթի կամ արջառի տիկ, որով այգիներից քաղցու են կրում»-**կոլոտ**<sup>3</sup> (Ար.) «գդակաձև կանացի գլխազարդ, որի վրայից գցում են մյուս զարդերը, կոպի, պոչ»,

**խնդիկ**<sup>1</sup> (Սս., Մշ.) «անասունների՝ մասնավորապես հորթերի թռչկոտելը, տրտինգ տալը»-**խնդիկ**<sup>2</sup> (Մշ.) «կանանց ֆեսի շուրջը կապած ասեղնագործ երիզ կամ ոսկիների շարան, ճակատանոց»,

**կոպի**<sup>1</sup> (Ար.) «կարճահասակ, ցածրահասակ» - **կոպի**<sup>2</sup> (Ար., Ղրբ., Թբ.) «կանացի գլխազարդի մի մասը, կլոր, շրջանակ, որ դնում են գլխին և վրան շարում են մյուս զարդերը կամ վրայից գցում են քողը»,

**վարդ**<sup>1</sup>. բազմիմաստ բառ է՝ «1. վարդ, 2. *Ար. (Թվ.)* ծաղիկ, 3. *Կր. (Ջվխ.)*, *Արբ.* գլխի մի տեսակ զարդ, որ կրում են կանայք և ունի վարդի ձև, 4. *Արբ. (Մշկ.)* «կանանց երեսի երկու կողմերից կախված ոսկիների շարանը» և այլն» - **վարդ**<sup>2</sup> (Սբ.) «վատ (մարդու մասին)» - **վարդ**<sup>3</sup> «կենտ, անզույգ»,

**ղազմա**<sup>1</sup> (Պլ., Պրտ., Կր., Շիր., Հվր., Խտջ. և այլն) «բրիչ, փետատ, քլունգ» - **ղազմա**<sup>2</sup> (Ղրբ., Գրս.) «կանանց գլխազարդ»,

**ճթիկ<sup>1</sup>** (Ակն.) «վատ տեսակի մոմ» - **ճթիկ<sup>2</sup>** (Մշ., Բղշ.) «կանացի կոշիկի մի տեսակ, որը քայլելիս կպչելով հատակին կամ ներբանին ձայն է հանում» - **ճթիկ<sup>3</sup>** (Սբ.) «ասեղնագործության մեջ խաչաձև փոքրիկ նախշ» - **ճթիկ<sup>4</sup>** (Ակն.) «ճկույթ մատը» - **ճթիկ<sup>5</sup>** «արծաթե մանր դրամների շարան, որ կանայք կախում են վզներից իբրև զարդ»,

**ճուտ<sup>1</sup>** (ՆԲ) «կանանց ճակատի զարդարանք, որի երկու կողմերից, աչքերի մոտ, մարգարիտներ են շարված»-**ճուտ<sup>2</sup>** (Ղրբ., Գնձ.) «անդրավարտիքի՝ շրջագգեստի եռանկյունաձև կտորը, ձագ»,

**մաննա<sup>1</sup>** (Սվ.) «մանր, երկար և սրածայր տերևներով ծառ» - **մաննա<sup>1</sup>** (Քսբ.) «մատանի»,

**շամշա<sup>1</sup>** (Մշ. (Բղշ.)) «կանանց ծամթելից կախված արծաթյա կամ ոսկյա զարդ»-**շամշա<sup>2</sup>** (Ակն) «թարմությունը կորցրած (թթի, պանրի և այլնի մասին)»,

**շվիկ<sup>1</sup>** «1. սուլիչ, 2. Ուրմ., Կր. (Շիր.), Մշ. (Ասյր.) հովվական սրինգ, շվի» - **շվիկ<sup>2</sup>** (Սրբ.) «կանացի գլխազարդ, որը բաղկացած է ոսկիների շարքերից, որոնք իջնելով կախվում են երեսի աջ և ձախ կողմերից»,

**Պալի<sup>1</sup>** (Ղրբ.) «կանացի գլխազարդ» - **պալի<sup>2</sup>** (Սս.) «բանալի»,

**Փիրփիրիմ<sup>1</sup>** (Հմշ.) **փիրփիր,** (Սբ.) **փրփրիմ,** (Կլկ. (Սրշ.)) **փրփրեմ** «դանդուռ» - **փիրփիրիմ<sup>2</sup>** «ոսկյա ճակատամանյակ» և այլն:

Համանուններ ունեն նաև հետևյալ զարդերի (նաև քարերի) անվանումները, ինչպես՝ **երեսնոց, խալխալ, ջուհար, հիլ, ալեր, բազբինդ** և այլն:

Բարբառներում գործածվող թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի անվանումներից հայտնի են՝ **շամշրաղ** (Ար., Թբ., Ղրբ. (Բրշ.), Կր. (Շիր.))//**շամ ջրաղ** (Կր. (Շիր.)), բազմիմաստ բառ է, որի 4-րդ իմաստն է՝ (Թբ., Ղրբ., (Բրշ.), Կր. (Շիր.)) «պայծառ փայլ ունեցող թանկագին քար, հակինթ, գոհար», **ջուհար,** ունի 5 իմաստ, բայց հիմնական իմաստն է՝ «թանկագին քար, գոհար», **ուսր** (Մշ.) «թանկարժեք սև քար, որից համրիչ են շինում», **հիլ** (Ար.) «թանկագին քար, որ ըստ ժողովրդական հավատքի իբր օձերի թագավորը պահում է իր բերանում՝ լեզվի տակ», **ալեր** (Վն.) «ալմաստ», **աղկույթ** (Մկս.) «հակինթ», **կայծի** «բյուրեղային թանկագին քար նոսան գույնի, նոնաքար, կարկեհան», **կանանչ քար** (Պլ.) «զմրուխտ, կանաչագույն թանկագին քար» և այլն:

Ինչպես հայտնի է, զարդերի անբաժանելի մասն են **հուլունքները**, բարբառներում՝ **ուլունք** «1. ուլունք, 2. շատ մանր», **հրլուն** (Թբ., Կր., Խրբ., Բլ.) «հուլունք», **պոնճուխ** (Եվդ. (Ամս.))//**պունճուխ** (Պլ.) «ուլունք», **ուլինգի-ճիկո** «ուլունքաշարի կենտրոնի մեծ ուլունքը» և այլն:

Հարկ ենք համարում նշել՝ կան զարդեր, որոնք գործածվել և գործածվում են որպես **կախարդանքի (չարից պաշտպանվելու) միջոց.** Դրանք հիմնականում չար աչքից պաշտպանվելու համար են: Նման զարդերից բարբառներում հայտնի են՝ **դրլըսմ** (Վն.) «թալիսման», **բազբինդ** (Մշ.) «հուռույթ, թալիսման», **աջի-ջատ** (Բլ.) «հուռույթ, աչքահուլունք, բժժանք» և այլն: Այսպես՝ **անժ(ը)մի** (Ախբ.)

«1. կանացի զարդ (մատանի, ապարանջան), որ ավագ ուրբաթ գիշերը դարբինները շինում են լուռ ու մունջ, յոթ ամբողջ դռներից հավաքած երկաթից, օգտագործում են իբր չար աչքից զերծ մնալու համար, 2. նշաձև զարդ, որ կախում են երեխայի օրորոցից կամ ամբացնում շորերին՝ չար աչքից զերծ պահելու համար», **շանենի** (Խոջ.) «կանանց վզնոցին հազգրած ոսկորներ, որոնք իբր պահպանում են չար աչքից» և այլն:

Մեր աշխատանքում արձանագրել ենք նաև զարդերի անվանումներով ձևավորված ուշագրավ առածներ ու դարձվածային միավորներ: Այսպես.

1. Հայտնի առածներից են՝ «**Խնկոտ քթին՝ խզմա**», «**Ծակ հիլունը գետինը չի մնաք**», «**Փեշակն՝ արհեստը... ոսկի բիլագուկ ա**», «**Տղա ունենամ ջիբավոր, աղջիկ կու ճարիմ ջիղավոր** (գլխագարդով)», «**Ամեն պապղացող ոսկի չի**», «**Ոսկին մանդր ա, գինը ծանդր ա**», «**Աղբուսը հուլունը է գթի, հենց գիդե մարքրիտ է**», «**Ժամանակն արծաթ է, ամեն վախտ ձեռք չի անցնիլ**», «**Կլայեկե (անագե) մատնիք ոսկու տեղ կառնիլ**», «**Մագե ջրվալին՝ սպրջմե կանթ (օղակ)**», «**Կարդալ ոսկի բիլագուկ է, էցկուկ (զցած) մարդու ձեռք**», «**Զող (մաքուր) ոսկին ժանգ չի բռնի**», «**Մատանիքին չեն տա, մատին կր տան**», «**Ոսկու արժեքը ոսկերիչ գինա**», «**Փեշակն օր կա օսկե բիլագուկ է**»<sup>6</sup>:

2. Դարձվածային միավորներից հայտնի են՝ «**Այդ օղը ականջիցդ հանիր**» (այդ բանը մոռացիր, դրանից հույսդ կտրիք), «**Թևը օսկի ապարանջան ունի/Թևը օսկի պիլեզուկ ունի**» (արհեստ ունի, լավ արհեստ գիտե, որը նրան քաղցած չի թողնի), «**Օդ անեղ, ականջը զցեղ, կամ ականջից կախել**», «**Մի բուռ ոսկի է**», «**Տեղովը մեկ ոսկի լինել**», «**Առաջը ոսկի լցնես (մի հաստ) չի վերցնի**» (խելոք, գործունյա, ազնիվ, շիտակ), «**Մեկին ոսկիների մեջ խեղդել**» (հարուստ վարձատրություն, նվերներ շնորհել), «**Գլուխն արծաթով ծածկվել**» (սպիտակել, ալեհեր դառնալ) և այլն<sup>7</sup>:

### Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով «անձնական զարդարանք» հասկացությունն արտահայտող բառերը բարբառներում՝ գտել ենք 100-ից ավելի բառային միավոր, որոնց մեջ կան *թանկարժեք*, *կիսաթանկարժեք* և *անարժեք* զարդերի անվանումներ:

Պարզել ենք, որ հայերենի բարբառներում կան զարդերի այնպիսի անվանումներ, որոնք փոխառություն են իրանական լեզուներից կամ արաբերենից (դրանց քանակը շատ փոքր է), իսկ հիմնական մասի ծագումն անհայտ է, քանի որ արձանագրված չեն մեր ձեռքի տակ եղած բառարաններում (ստուգաբանական ու փոխառությունների):

Նկատել ենք, որ շատ զարդերի անվանումներ հայերենի բարբառներում

<sup>6</sup> ՀԼԲԲ, Ա. Ղանալանյան, Առածանի, Եր., 1960:

<sup>7</sup> Տե՛ս ՀԼԲԲ, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Եր., 2011:

փաստված են մի շարք հնչյունական տարբերակներով: Շատ բառեր էլ մի շարք խոսվածքներում զուգահեռաբար գործառում են տվյալ բարբառներին բնորոշ այլ բառազուգարանությունների հետ:

Կան զարդերի անվանումներ էլ, որոնք ոճական արժեք ունեն. դրանցից կազմվել են բազմաթիվ ուշագրավ առածներ ու դարձվածային միավորներ, որոնք առայսօր գործածվում են մեր հանրության կողմից:

**ЛУСИНЕ ГАМОЯН – Исследование семантической (тематической) группы «персональные украшения» в армянских диалектах.** – При исследовании выражающих понятие «Персональные украшения» слов в армянских диалектах мы заметили, что последние по большей части не зафиксированы в ряде имеющихся в нашем распоряжении словарей (этимологических и заимствований), а их происхождение, в основном, неизвестно. В ходе исследования мы попытались разделить названия драгоценных, полудрагоценных и бесценных украшений, классифицировав в отдельные группы многие диалектные названия, выражающие понятия браслет, серьги, кольцо, головной убор и заметили, что некоторые из наименований можно использовать одновременно в разных частях тела или одежды. Мы обратили внимание на омонимичные ряды (более 2 десятков), в которых только один из членов является словом, обозначающим понятие «украшения». Также нами было выявлено, что в армянских диалектах некоторые названия украшений использовались и используются как магические средства (защита от зла). Пристальное внимание в работе было уделено употребляющимся обществом по сей день многим популярным пословицам и фразеологизмам с названиями украшений.

**Ключевые слова:** орнамент, украшение, смысловое поле, диалект, браслет, кольцо, ожерелье, украшения для головы и волос, пословицы, фразеологизмы

**LUSINE GHAMOYAN – Study of the Semantic (Thematic) Group "Personal Jewelry" in Armenian Dialects.** – While studying the words expressing the concept "personal jewelry" in Armenian dialects, we noticed that the latter mostly not recorded in a number of dictionaries at our disposal (etymological and loanwords), and their origin is mostly unknown. In the course of the study, we tried to divide the names of precious, semi-precious and priceless jewelry by classifying many dialect names into separate groups expressing the concepts of bracelet, earrings, necklace, ring, head-ornament and noticed that some of the names can be used simultaneously for different parts of the body or clothing. We paid attention to homonymic series (more than 2 dozens), in which only one of the members is a word denoting the concept "jewelry". We also revealed that some names of jewelry in Armenian dialects were and are still used as magical means (for protection from evil). In the work, close attention is paid to many popular proverbs and phraseological units with the names of ornaments, which are still used by the society.

**Key words:** ornament, jewelry, semantic field, dialect, bracelet, ring, necklace, head and hair ornaments, proverbs, phraseological units

## ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ\* 

*Երևանի պետական համալսարան*

Պարբերության նախադասությունների կապակցման ուսումնասիրությունը տեքստի լեզվաբանության կարևոր խնդիրներից է: Ինչպես որ կան բառերի և բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման միջոցներ, այնպես էլ գործում են պարբերության նախադասությունների կապակցման միջոցներ: Դրանք բավականին շատ են, սակայն ամենից էական դերը թերևս ունեն կրկնությունը և փոխարինումը: Այս միջոցներն ունեն իրենց դրսևորման ձևերը, որոնք քննված են հոդվածում: Կրկնությունը լինում է բառային և քերականական: Փոխարինումը կատարվում է դերանունով, փոխանունով, հոմանիշով, բնորոշմամբ: Այս միջոցներով պարբերության նախադասությունների միջև կապեր են ստեղծվում, որոնք որոշ դեպքերում ավելի ամուր են, որոշ դեպքերում՝ համեմատաբար թույլ: Եթե նախադասությունների միջև ներտեքստային կապեր չստեղծվեն, ապա կլինի նախադասությունների բազմություն, բայց ոչ տեքստ, թեև ամեն մի նախադասություն կարտահայտի իր իմաստը: Ներտեքստային կապակցման միջոցների ընտրության հարցում կարևոր է նաև ոճական գործոնը:

**Բանալի բառեր** – *նախադասությունների կապակցություն, տեքստ, կրկնություն, փոխարինում, դերանուն, զեղչում, պարբերություն, կապակցման միջոց, հոմանիշ, բնորոշում*

Շարահյուսական համակարգի ուսումնասիրությունը երկար ժամանակ ավարտվել է բարդ նախադասության քննությամբ: 20-րդ դարի կեսերից սկսում է ձևավորվել տեքստի լեզվաբանությունը: Թեև տեքստին վերաբերող լեզվաաճական տարբեր իրողություններ ուշադրության են արժանացել վաղուց, սակայն հիմնականում չեն ուսումնասիրվել տեքստի ամբողջության տեսանկյունից: Դրանք սկսեցին համակարգվել, դասակարգվել և միմյանց հետ ունեցած

\* **Արտաշես Սարգսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

**Арташес Саркисян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ  
**Artashes Sarkisyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of the Armenian Language

Էլ. փոստ՝ [artashes.sargsyan@ysu.am](mailto:artashes.sargsyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0009-6165-4466>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 26.03.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024



փոխհարաբերությունների վերլուծմամբ ուսումնասիրվել այն ժամանակ, երբ տեքստն ընկալվեց որպես ուսումնասիրման այնպիսի առարկա, որն ունի իր ձևավորման լեզվական, իմաստային և ռճական առանձնահատկությունները: Իհարկե, դեռևս միասնական կարծիք չկա տեքստի սահմանման վերաբերյալ, բայց նրա հատկանիշներն ուսումնասիրվել և ուսումնասիրվում են տարբեր մոտեցումներով, որի շնորհիվ բացահայտվում են տեքստի կառուցվածքին բնորոշ տարբեր իրողություններ: Ինչպես գրում է Գ. Ջահուկյանը. «Նախադասությունից բարձր միավորների քննությունը հին ժամանակներից սկսած սովորաբար հատկացվել է ոչ լեզվաբանական այնպիսի գիտակարգերի, ինչպիսիք են ճարտասանությունը (հռետորիկան), և, այսպես կոչված, գրականության տեսությունը (պոետիկան), մասամբ էլ լեզվաբանական մի այնպիսի գիտակարգի, ինչպիսին է ռճաբանությունը»<sup>1</sup>:

Տարակարծություններ կան նաև տեքստի լեզվաբանության՝ որպես գիտաճյուղի տեղի մասին<sup>2</sup>: Այս ամենից էլ բխում է այն հարցը, թե արդյո՞ք տեքստ կազմող նախադասությունների կապակցությունը պետք է քննել շարահյուսության մեջ, թե՛ այն տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկա է: Բանն այն է, որ նախադասությունների կապակցումն ապահովող հիմնական միջոցները հանդես են գալիս նախադասության կազմում, ուստի մի կողմից դրանք նախադասության բաղադրիչ տարրեր են, բայց մյուս կողմից դրանցով ստեղծվող կապերը ներտեքստային իրողություններ են, այսինքն՝ նախադասության արտաքին կապերն ապահովող շատ միջոցներ դրսևորվում են նախադասության մեջ: Այս խնդիրն ուսումնասիրելիս Գ. Ջահուկյանը գրում է. «...նախադասությունը բացի ներքին հարաբերիչներից ունի նաև արտաքին հարաբերիչներ, որոնք մտնում են նրա հարացույցի մեջ. էթե պարզ նախադասությունը (ասույթը) բնութագրվում է հարաբերող բառերից և շաղկապներից բաղկացած հարացույցով, որ ապահովում է նրա գործածությունը բարդ նախադասության (լիասույթի) մեջ, ապա հասկանալի է, որ նախադասությունն ընդհանրապես որպես լիասույթ պետք է ունենա հարաբերիչ տարրեր (միջոցներ), որոնք պետք է ուսումնասիրվեն դրա քննության ժամանակ: Մակայն ավանդական քերականության մեջ առայժմ ոչ ոք չի զբաղվել լիասույթի հարացույցի լիավարտ ուսումնասիրությամբ: Գիտենք, որ *արդ, այսուհանդերձ, այսպիսով, այնուհետև* և այլ տիպի բառերը ստեղծում են այդպիսի կապեր (հարաբերություններ), բայց այդ կապերը համակարգային ուսումնասիրության չեն ենթարկվել: Հենքի (տեքստի) լեզվաբանության ներկայացուցիչները դրանք համարում են տեքստի շարահյուսության խնդիրը, բայց ըստ մեր դավանած համընդհանուր տեսության՝ այն բառիս բուն իմաստով նախադասության շարահյուսության խնդիր է»<sup>3</sup>: Տարբեր լեզվաբանների մոտեցումները տեսական

<sup>1</sup> Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 60:

<sup>2</sup> Տե՛ս Կ. *Филиппов*, Лингвистика текста, СПб., 2003, էջ 13-16:

<sup>3</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 64:

ինչ հիմնավորումներ էլ ունենան, մի բան պարզ է, որ տեքստի նախադասությունների միջև որոշակի միջոցներով ու եղանակներով իրականանում են կապեր, որոնց շնորհիվ էլ տարբեր նախադասությունները ներհյուսվում են մեկ ամբողջության մեջ: Եթե այդ կապերը չլինեն, ապա առկա կլինի նախադասությունների բազմություն, բայց ոչ տեքստ: Տեքստի նախադասությունների կապակցությանն անդրադառնալով՝ Ա. Արամյանը նշում է, որ տեքստը ներքին և արտաքին կապերի ամբողջություն է: Նա գրում է. «Ներքին կապերի բացահայտման ընթացքում մեզ առավել հետաքրքրում են պարբերությունների, որպես տեքստակազմիչ հիմնական օղակների՝ ա. միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները, բ. դրանց մեջ մտնող նախադասությունների՝ որպես պարբերությունների կազմիչների, իրար նկատմամբ եղած հարաբերությունները, գ. պարբերությունների ներսում գտնվող կապակցությունների իրականացման միջոցների (կրկնություններ, բառակապակցություններ, բառեր, կապեր, շաղկապներ, խոսքային իրադրություններ, քերականական ձևեր և այլն) դրսևորման ձևերը, դ. արդեն հայտնի և նոր տրվող հաղորդման (թեման) և դրանց միջև եղած կապի դրսևորման ձևերը, է. պարբերություն կազմող նախադասությունների հաղորդակցական տիպերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները և տեքստի ընդհանուր հնչերանգային ուղղվածության նկատմամբ դրանց ունեցած ազդեցությունը»<sup>4</sup>:

Մի կողմ թողնելով վերը նշված խնդիրները, որոնք կարևոր դեր ունեն տեքստի ուսումնասիրման համար և առանձին քննության նյութ են, մենք այստեղ կանդրադառնանք տեքստի նախադասությունների կապերն իրականացնող միջոցներից միայն երկուսին՝ *կրկնությանը* և *փոխարինմանը*:

Հայտնի է, որ բառերը կապակցվում են տարբեր միջոցներով (բառաձևեր, կապեր ու շաղկապներ և այլն) ու եղանակներով (համաձայնություն, կառավարում և այլն): Որոշակի միջոցներով ու եղանակներով են կապակցվում նաև բարդ նախադասության բաղադրիչները (հարաբերյալ-հարաբերականի համաձայնություն, բայ-ստորոցյալների եղանակաժամանակային համաձայնեցում և այլն): Տեքստի նախադասությունները ևս կապակցվում են տարբեր միջոցներով ու եղանակներով: Շարահյուսական կապակցման միջոցները քննելիս Գ. Ջահուկյանը տարբերակում է սրանք. «...շարահյուսության քննության առարկան են շարույթը, նախադասությունը և տեքստը: Այստեղից հասկանալի է դառնում, որ շարահյուսական կապակցության միջոցները երեք կարգի են՝ ներշարույթային, ներնախադասական և ներտեքստային: Ներշարույթային միջոցները բառերի, ավելի ճիշտ բառաձևի (ներառյալ վերլուծական միջոցները) շարույթի կազմում կապակցվելու միջոցներն են: Ներնախադասական միջոցները շարույթների՝ պարզ նախադասության և նախադասությունների՝ բարդ նա-

<sup>4</sup> Ա. Արամյան, Պարբերության կազմակերպման առանձնահատկությունները գիտական բանասիրական տեքստում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 11, Եր., 1988, էջ 6:

խաղաղության կազմում կապակցվելու միջոցներն են: Վերջապես ներտքստային միջոցները նախադասությունների և ավելի բարձր միավորների տեքստի կազմում կապակցվելու միջոցներն են»<sup>5</sup>: Ներտքստային կապակցման միջոցների շարքում ամենաէական դերը թերևս ունեն *կրկնությունն ու փոխարինումը*: Դրանք դրսևորվում են տարբեր ձևերով<sup>6</sup>:

*Կրկնությունը*՝ որպես տեքստային կապակցման միջոց, կարող է լինել բառային և քերականական: Առաջին դեպքում տեքստի տարբեր նախադասություններում կրկնվում է նույն բառը, իսկ երկրորդ դեպքում՝ քերականական նույն կարգը, ավելի ճիշտ՝ կրկնվում են նույն կարգով բառաձևերը:

*Փոխարինումը* կատարվում է չորս ձևով՝ դերանունով, փոխանունով, հոմանիշով, բնորոշմամբ: Անդրադասանք այս ամենին առանձին-առանձին:

Ժամանակակից հայերենի նախադասությունների կապակցմանը բավականին հանգամանորեն անդրադարձել է Ս. Աբրահամյանը: Նախադասությունների միջև նշելով *միավորական, ներհակական, մասնավորման, ընդհանրացման, մեկնական, տրոհական, պատճառահետևանքային, գիջական, ժամանակի, տեղի* և այլ հարաբերություններ՝ Ս. Աբրահամյանն առանձնացնում է նախադասությունների կապակցման երեք միջոց՝ *բառական, քերականական, շարահյուսական-ոճական*: Բառական միջոցներ է համարում շաղկապները, դերանունները, այն գոյականները, ածականները և այլ խոսքի մասեր, որոնք որոշակի հարաբերության մեջ են մտնում նախորդ կամ հաջորդ նախադասության հետ և դրանով էլ կատարում կապակցական գործառույթ: Առանձնացվում է չորս խումբ՝ *քերականական հարաբերություն արտահայտող բառեր, իրադրական հարաբերություն արտահայտող բառեր, անվանում արտահայտող բառեր, վերաբերումը արտահայտող բառեր*: Կապակցման քերականական միջոցներ Ս. Աբրահամյանը համարում է շարահարությունը և շարահարությունը, իսկ շարահյուսական-ոճական միջոց՝ զեղչումը կամ ընդհանուր անդամը<sup>7</sup>:

Այս դասակարգմամբ կրկնությունն ու փոխարինումը ընդհանրական մոտեցմամբ ներկայացվում են ըստ բառական միջոցների, այսինքն՝ կապակցության այդ միջոցները քննվում են արտահայտության ձևի տեսանկյունից: Մենք հարցը քննում ենք ըստ կապակցման միջոցի՝ դրա մեջ միավորելով արտահայտության տարբեր ձևերը: Նախ առանձնացնում ենք փոխարինումն ու կրկնությունը՝ որպես նախադասությունների կապակցման միջոցներ, ապա քննում դրանց իրականացման ձևերը:

<sup>5</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 86:

<sup>6</sup> Լեզվական տարբեր մակարդակներում կրկնության տարբեր գործառույթների մասին հանգամանակից տե՛ս Ա. Կարապետյան, Կրկնությունը և զեղչումը ժամանակակից հայերենում, Գիրք Ա, Եր., 2016:

<sup>7</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 826-849:

Արդեն ասվեց, որ կրկնությունը լինում է *բառային* և *քերականական*: Բառային կրկնության դեպքում միննույն բառը, թեկուզ քերականական տարբեր ձևերով (բառաձևերով), կրկնվում է տարբեր նախադասություններում, որի միջոցով էլ կապ է ստեղծվում այդ նախադասությունների միջև: Օրինակ՝ «Մենք նրան սիրում էինք հեռվից, վարից վեր, քաշվելով ու անհամարձակ, անհույս, առանց ակնկալության, հետևապես և առանց մրցության ու ինտրիգների: Բայց սիրում էինք լեռների պատանու անարատ սիրով: Մենք արտաքուստ կոշտ-կոպիտ էինք, բրդյա հագուստով, մազոտ տրեխներով, մոթալ փափախով, արևավառ դեմքերով ու ճաքճքված ձեռներով: Բայց մեր լեռնային սքանչելի բնությունն այնքա՛ն գեղեցկություններ էր ամբարել մեր ներսում... Ինձ թվում է, թե այն ժամանակ մեր սարահարթերում ինչքան ծաղիկներ կային, բոլորից էլ բացվել էին իմ հոգում»<sup>8</sup>: Վ. Անանյանի պատմվածքից բերված այս հատվածի տարբեր նախադասություններում հոգնակի թվով կրկնվում է *ես* անձնական դերանունը: Առաջին և երրորդ նախադասություններում այն գործածված է ուղղական հոլովով (մենք), չորրորդ և հինգերորդ նախադասություններում՝ սեռական հոլովով (մեր): Առաջին և երկրորդ նախադասություններում կրկնվում է նաև *սիրում էինք* բառաձևը: Այս բառակրկնությունը կապ է ստեղծում պարբերության նախադասությունների միջև, թեև կապ ստեղծող միակ միջոցը չէ (մեր նյութին առնչվող մյուս միջոցներին կանդրադառնանք ստորև): Ինչպես տեսնում ենք, կրկնվել են տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր՝ դերանուն և բայ: Ցանկացած խոսքի մասի պատկանող բառի կրկնության միջոցով հնարավոր է կապ ստեղծել տեքստի նախադասությունների միջև, ուստի որպես ներտեքստային կապակցման միջոց էականը կրկնության առկայությունն է, այլ ոչ թե կրկնվող բառի խոսքիմասային պատկանելությունը: Հիշենք, օրինակ, Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմից մի հատված, որում կրկնվում են ձայնարկություններ (նաև գոյականներ, դերանուններ).

-Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛ կ,  
 Վո՛ւշ քու սերին, քու յարին...  
 Վուշ-վո՛ւշ, Սարո՛ւ, վուշ-վո՛ւշ, իգի՛ թ,  
 Վո՛ւշ քու սիրած սարերին...<sup>9</sup>

Մենք դիտավորյալ այնպիսի օրինակ բերեցինք, որում հիմնականում կրկնված են ոչ նյութական խոսքի մասի պատկանող բառեր, որպեսզի ցույց տանք, որ կապակցական դեր կատարելու համար առաջին հերթին կարևորվում է կրկնությունը, այլ ոչ թե խոսքիմասային պատկանելությունը: Այդ պատճառով ենք հարցը քննում այս տեսանկյունից՝ առանձին-առանձին չանդրադառնալով գոյականի, ածականի, թվականի և մյուս խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությանը:

<sup>8</sup> Վ. Անանյան, Ուշացած խոստովանություն., Երկեր, հ. 1, Եր., 1984, էջ 350:

<sup>9</sup> Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1968, էջ 74:

Ինչպես նշվեց, կրկնությունը, բառայինից բացի, լինում է նաև *քերականական*: Այս դեպքում կրկնվում են քերականական նույն կարգն ունեցող բառեր, սակայն ոչ բոլոր դեպքերում են դրանք ներտեքստային կապի ստեղծման միջոց դառնում: Օրինակ՝ Վ. Անանյանի պատմվածքից վերը բերված հատվածի տարբեր նախադասություններում կան ներգոյական հոլովով (նաև այլ հոլովներով) դրված բառեր՝ *ներսում, սարահարթերում, հոգում*, սակայն դրանց միջոցով ներտեքստային կապեր չեն ստեղծվում: Բառաձևերի կրկնության միջոցով կապ արտահայտվում է այն դեպքում, երբ դրանց միջև իմաստային կապ կա: Դա սովորաբար լինում է այն դեպքում, երբ տարբեր նախադասություններում թվարկվում, համադրվում, հակադրվում են այդ բառաձևերը, խոսվում է հենց դրանց մասին, օրինակ՝ «*Ես հոգուս խորքում ձևեռանոց էի տարել ուսման կարոտը և այն աղջկա կարոտը: Այդ կարոտները ուռճանում, կլանում էին ողջ էությունս*»<sup>10</sup>: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին հերթին էական դեր խաղում է միևնույն ժամանակաձևով բայերի կրկնությունը: Վ. Անանյանի պատմվածքից մեջբերված նախորդ հատվածում կրկնվում են անկատար անցյալով բայաձևերը (*սիրում էինք, սիրում էինք, կային, իջնում էր*), որը ևս կապ է ստեղծում նախադասությունների միջև: Ս. Աբրահամյանը նախադասությունների հարաբերությունները քննելիս անդրադառնում է միավորական հարաբերությամբ կապակցվող նախադասություններին, նշում, որ միավորական հարաբերությունը լինում է երկու տեսակի՝ համաժամանակային, տարաժամանակային, և հավելում. «*Համաժամանակության հարաբերությամբ միավորված նախադասությունների արտահայտած երեկույթները, դեպքերը տեղի են ունենում, նկարագրված առարկաները ներկայացվում են միևնույն ժամանակում: Այս հարաբերության արտահայտման գործում կարևոր դեր է կատարում ստորոգյալները միևնույն ժամանակով դրվելը, պայմանով, որ տարբեր նախադասություններում չլինեն տարբեր ժամանակներ ցույց տվող բառեր*»<sup>11</sup>: Խոսքը վերաբերում է թե՛ պարզ ստորոգյալներին, թե՛ բաղադրյալ ստորոգյալների հանգույցներին: Գ. Ջահուկյանը ևս քերականական կրկնությունն ուսումնասիրելիս կարևորում է բայի ժամանակաձևերի կրկնությունը՝ նշելով, որ տարբեր իրադրություններում և գործառական տարբեր ռճերի պատկանող տեքստերում կապեր են ստեղծվում որոշակի ժամանակաձևերի կրկնությամբ. «*Կրկնության լայն ըմբռնումը մեկնաբանելու նպատակով խոսենք, օրինակ, քերականական ժամանակաձևերի գործածության մասին: Հայտնի է, որ հեղինակը որոշակի ընդհանուր ֆոն է ստեղծում ժամանակաձևերի հատուկ գործածությամբ. կենսագրության մեջ, օրինակ, գերակշռում է վաղակատարը («ծնվել եմ... ավարտել եմ... ամուսնացել եմ...»), վեպերի և պատմվածքների մեջ՝ անցյալի որևէ կոնկրետ ժամանակակետի հետ հարաբերվող անցյալ կատարյալը և անցյալ վաղակատարը, գիտական աշխատանքներում՝ ներկան և*

<sup>10</sup> Վ. Անանյան, նշվ. աշխ., էջ 351:

<sup>11</sup> Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 808-809:

այլն»<sup>12</sup>: Ժամանակաձևերի կրկնության կապակցական դերը քերականական այլ ձևերի կրկնության շարքում կարևորվում է բայի առանձնահատկության հետևանքով: Քանի որ դիմավոր բայը հանդես է գալիս որպես ստորոգյալ, իսկ ստորոգյալն էլ ձևավորում է հաղորդակցման միավոր՝ նախադասություն, ապա առաջին հերթին հաղորդակցման շղթայում հենց ստորոգյալների կարգերն են միմյանց միջև իմաստային շղթա ստեղծում և նպաստում նախադասությունների կապակցմանը: Նման կապակցություններում բայերից որևէ մեկի ժամանակաձևի փոփոխությունը խաթարում է այդ շղթան:

Ժամանակից բացի՝ դեմքի և թվի կարգերն էլ են կապակցական որոշակի դեր կատարում: Հնարավոր է, որ ենթական զեղչված լինի, բայց հասկանալի դառնա դիմավոր բայի (ստորոգյալի) դեմքից և թվից: Բերված օրինակի երկրորդ նախադասության ենթական՝ *մենք*-ը, զեղչված է. «Բայց սիրում էինք լեռների պատանու անարատ սիրով», սակայն հասկացվում է ստորոգյալից, և կապակցական շղթան չի ընդհատվում, թեև ենթական կրկնված չէ: Այդ դեպքում ուղղակի կրկնություն չկա, բայց զեղչված անդամը ենթադրվում է և մտովի վերականգնվում: Գ. Ջահուկյանը զեղչումը լայն իմաստով ներառում է կրկնության մեջ. «...եթե կրկնությունը և փոխարինումը հասկանանք ավելի լայն իմաստով՝ ներմուծելով նաև քերականական, իմաստային և հնչական կրկնություններն ու փոխարինումները, այլև զեղչումներն ու ակնարկումները (ինքնին՝ գործությամբ կամ իմպլիցիտ կերպով հասկացվելը), ապա կարելի է ասել, որ կրկնությունը, փոխարինումը և հարաբերման հատուկ միջոցները տեքստային կապերի կրողներն են»<sup>13</sup>: Անշուշտ, կրկնությունն ու զեղչումը միայն լայն ըմբռնման դեպքում են միավորվում, իսկ որպես ներտեքստային կապակցման միջոցներ դրանք տարբեր են, քանի որ մի դեպքում բառաձևը կրկնվում է, իսկ մյուս դեպքում՝ ենթադրվում, բայց դա քննության առանձին նյութ է, ուստի այստեղ չենք վերլուծում դրանց փոխհարաբերությունն ու առանձնահատկությունները:

Այժմ անդրադառնանք փոխարինմանը, որը տեքստի նախադասությունների կապակցման մեկ այլ միջոց է: Փոխարինումը, ինչպես նշվել է, կատարվում է չորս ձևով՝ *դերանունով*, *փոխանունով*, *հոմանիշով*, *բնորոշմամբ*: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Փոխարինման դեպքում առկա է *փոխարինվող-փոխարինող-փոխարինություն*: *Ղերանունով* փոխարինումն ամենից տարածվածն է, քանի որ դերանուն խոսքի մասի հիմնական գործառույթը հենց դա է: Նախադասություններից մեկում գործածված բառին մյուս նախադասության մեջ փոխարինում է որևէ դերանուն, և այդ փոխարինությունը սերտ կապ է ստեղծում նախադասությունների միջև: Օրինակ՝ *«Ինձ թվաց, որ այդ հայացքը թափանցեց մինչև Լևոնի*

<sup>12</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 65:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 65:

*հոգու խորքը: Եվ ո՞ւմ հոգու խորքը չէր թափանցիլ այն*<sup>14</sup>: Առաջին նախադասության մեջ գործածված *հայացքը* բառը երկրորդում փոխարինված է *այն* ցուցական դերանունով: Դերանունով փոխարինումը նախադասությունների կապերը սերտացնում է նրանով, որ փոխարինող դերանունը հասկանալի է դառնում փոխարինված բառի հիման վրա, իսկ այդ բառը մեկ այլ նախադասության մեջ է գործածված: Տեքստն ընկալելու համար անհրաժեշտ է լինում հիշել փոխարինված բառը, որը և կապի հիմքն է դառնում:

Դերանունով փոխարինումը չպետք է շփոթել ցուցաբառերի կիրառության հետ: Յուրաքանչյուր ոչ թե փոխարինում են որևէ բառի, այլ նշում, որ այդ բառն արդեն հիշատակված է նախորդ նախադասության մեջ, օրինակ՝ *«Առավոտյան արեգակի կիտրոնագույն շողերը սփռվել էին ներս: Լևոնի աչքերն անգիտակցաբար դարձան դեպի այդ շողերը, կարծես ինչ-որ գաղտնի մագնիսի գորույթյամբ: Ա՛խ, այդ վեր ուղղված աչքերը, այդ հեզ դեմքը»*<sup>15</sup>: Երկրորդ նախադասության մեջ գործածված *այդ* ցուցաբառը (ցուցական դերանունը) ևս ներտեքստային կապակցման միջոց է, սակայն այն ոչ թե փոխարինել է նախորդ նախադասության մեջ եղած *շողերը, աչքերը* բառաձևերին, այլ դրվել կրկնվող *շողերը*-ի ու *աչքեր*-ի հետ՝ հուշելով, որ նրանց մասին արդեն խոսվել է: Կամ՝ *«Նա դպրոցն ավարտում է 1968 թվականին: Նույն թվականին ընդունվում է բուհ»*: Այս օրինակում գործածվել է *նույն* ցուցաբառը՝ ընդգծելով կրկնվող *թվականին* բառաձևը:

*Փոխանունով* փոխարինման դեպքում գործածվում է փոխանուն բառ, օրինակ՝ *«Սեդանին դրված էին կարմիր, դեղին, կանաչ մատիտներ: Երեխան վերցրեց դեղինը»*: Այս դեպքում ևս նախադասությունների միջև սերտ կապ է ձևավորվում, քանի որ ինչպես դերանունով փոխարինվելու, այնպես էլ այս դեպքում փոխարինողի իմաստը հասկանալի է լինում միայն փոխարինվածի հիման վրա, իսկ այն արտահայտված է մեկ ուրիշ նախադասության մեջ: Սակայն բոլոր փոխանունները չեն, որ այսպիսի կապ են ստեղծում, օրինակ՝ *«Շատ վաղուց մի դեպք էր կատարվել: Երևի միայն տարեցները կհիշեն այդ դեպքը»*: Երկրորդ նախադասության մեջ գործածված *տարեցները* փոխանունը ներտեքստային կապ չի ստեղծում, քանի որ չի գործածվել նախորդ նախադասության մեջ եղած որևէ բառի փոխարեն: Այս դեպքում չի կիրառվել կապակցման *փոխարինում* միջոցը: Այն ընկալվում է որպես գեղչված, բայց նախորդ նախադասության մեջ չգործածված *մարդիկ* բառի փոխանուն:

*Հումանիշտով* փոխարինման դեպքում կապն այնքան ամուր չէ, ինչպես նախորդ երկու դեպքում, քանի որ փոխարինողը ինքնին արտահայտում է փոխարինվածի իմաստը և առանց նախորդի իմացության էլ հասկանալի է, օրինակ՝ *«Երբ հասանք լեռան գագաթին, մեր առջև բացվեց մի աննման գեղեցկություն»*:

<sup>14</sup> Ալ. Շիրվանզադե, Պատմվածքներ, Եր., 2009, էջ 7:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 17:

Բնության **սքանչելիությունը մեզ մի քանի թույլ քարացած պահեց, հետո կամաց-կամաց սկսեցինք ուշքի գալ**»: Առաջին նախադասության մեջ գործածված **գեղեցկություն** բառը երկրորդում փոխարինվել է **սքանչելիություն** հոմանիշով, որով (նաև այլ միջոցներով) նախադասությունների միջև կապ է ստեղծվել, սակայն այդ կապը, ինչպես ասվեց, նույնքան սերտ չէ, որքան դերանունով և փոխանունով փոխարինման դեպքում: Առանց առաջին նախադասության իմացության էլ ընկալվում է երկրորդի իմաստը, մինչդեռ փոխանունի վերաբերյալ բերված օրինակի «Երեխան վերցրեց **դեղինը**» նախադասության իմաստը լիովին պարզ չէ առանց նախորդի, քանի որ հայտնի չէ, թե դեղին գույն ունեցող ինչ առարկայի մասին է խոսքը: Այնուամենայնիվ, հոմանիշով փոխարինման միջոցով էլ ներտեքստային կապ է ձևավորվում, քանի որ հեղինակը պարզապես կրկնությունից խուսափելու նպատակով չի գործածում միևնույն բառը: Պատկերավոր ասած՝ իմաստային որոշակի շղթա կա, բայց փոխված է շղթայի օղակներից մեկը: Կրկնություն<sup>16</sup> ւն, թե՛ փոխարինում ընտրության համար էական դեր ունի ոճական գործոնը:

*Բնորոշմամբ* փոխարինումը կատարվում է փոխարինվողն այլ բառով կամ բառերով անվանելու միջոցով, օրինակ՝ «Մինյորա Ստեֆանիան համառոտ պատմեց ինձ Լևոնի մասին հետևյալը: Նրա **հայրը եղել է թատերական վարսավիր և չափազանց գեղարվեստասեր: Համեստ, գլուխը քաշ արհեստավորը հանկարծ անձնատուր է լինում հարբեցողության կործանիչ ախտին և ոչ առանց պատճառի**»<sup>16</sup>: Երկրորդ նախադասության մեջ գործածված **հայրը** բառաձևը հաջորդ նախադասության մեջ փոխարինված է **արհեստավորը** բառաձևով: Շարունակության մեջ հեղինակը գործածում է նաև **վարսավիր** բնորոշումը, ինչպես նաև դերանվանական փոխարինում՝ *նա*: Որպես բնորոշողներ՝ կարող են կիրառվել նաև դարձվածային միավորները, ինչպես՝ «**Խեղճ մարդը կրակն էր ընկել: Բայց ի՞նչ կարող էր անել այդ աստծու գառը, որին ոչ ոք չէր օգնում**»:

Բնորոշմամբ փոխարինումը որոշ չափով նման է հոմանիշով կատարվողին, սակայն այս դեպքում փոխարինողը փոխարինվողի հոմանիշը չէ, ինչպես բերված օրինակի **հայր, արհեստավոր, վարսավիր** բառերը: Պարզապես ներկայացվող նյութի բովանդակային ընդհանրության հիման վրա պարզ է դառնում, որ խոսքը նույն մարդու մասին է, և փոխարինող բառերը իմաստային շղթա են ստեղծում:

Բնորոշման դեպքում էլ կարող են գործածվել ցուցաբառեր, որոնք ավելի են սերտացնում նախադասությունների կապը: Օրինակ՝ «**Պարզվեց, որ տան կահույքը պատրաստել է նրա հայրը: Այդ հմուտ վարպետը ուրիշ շատ գեղեցիկ իրեր էր պատրաստել**»: Այդ ցուցաբառը, երկրորդ նախադասության մեջ լրաց-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 8:



ներով *հայրը* բառաձևին փոխարինող *վարպետը* բառաձևին, սերտացրել է նախադասությունների կապը՝ նաև շեշտելով փոխարինողին:

Ներտեքստային կապեր ստեղծող այս միջոցները գործառական տարբեր ուժերի տեքստերում կիրառական տարբեր հաճախականություն ունեն: Անշուշտ կարևոր է գործառական ոճը, սակայն կարևոր է նաև հեղինակի անհատական ոճը<sup>17</sup>: Օրինակ՝ չափածոյում ավելի հաճախ են հանդիպում բառային կրկնությունները, որոնք թե՛ ոճական միջոց են, թե՛ նախադասությունների կապակցման: Տեքստի (պարբերության) նախադասությունների կապերն ապահովող միջոցները բազմազան են, և բոլորի ամբողջական քննությունն առանձին ուսումնասիրման նյութ է: Այդ հարցերին մասնագետներն անդրադարձնում են տեքստի լեզվաբանությանը վերաբերող տարբեր աշխատություններում, սակայն կրկնությունն ու փոխարինումը դրանց շարքում առանցքային դեր են խաղում: Կապակցման միջոցները քննելիս Գ. Ջահուկյանն այսպես է բնորոշում. «Կարելի է ասել՝ բառակրկնությունը (անվանակրկնությունը) և բառափոխարինումը (ցուցաբառերի համահենքային գործածությունը) պարբերության ներքին և արտաքին կապերի հիմնական միջոցներն են, որոնք հարաբերիչների ծավալուն համակարգի կողքին կազմում են ներհենքային (ներտեքստային) կապերի հիմքը...»<sup>18</sup>:

Մի առանձին քննության նյութ է նաև կրկնվող կամ փոխարինվող միավորների քերականական հարաբերությունների հարցը, այսինքն՝ դրանք ո՞ր դեպքում են դրվում նույն կարգերով (թվի, հոլովի և այլն), արդյո՞ք նրանց միջև որոշ դեպքերում գործում է համաձայնական կապ և այլն: Այդ բոլորը տեքստի լեզվաբանության ուսումնասիրման առանցքային խնդիրներ են, որոնք հանգամանալից վերլուծման կարիք ունեն:

**АРТАШЕС САРГСЯН – Повтор и замена как средства связи предложений.** – Исследование связи предложений в абзаце является одной из важных задач лингвистики текста. Точно так же, как существуют способы соединения слов и компонентов сложного предложения, существуют способы соединения предложений в абзаце. Их довольно много, но важнейшую роль играют повтор и замена. Они имеют свои формы проявления, которые рассматриваются в статье. Повтор бывает словесным и грамматическим. Замена производится местоимением, субстантиватом, синонимом, описанием. Этими средствами между предложениями абзаца создаются связи, которые в одних случаях более сильные, в других — относительно слабые. Если между предложениями не создавать текстовых связей, то будет совокупность предложений, а не текст, хотя каждое предложение будет выражать свой смысл. Стилистический фактор также важен при выборе средств текстовой связи.

**Ключевые слова:** *связка предложений, текст, повтор, замена, местоимение, эллипсис, абзац, союз, синоним, определение*


<sup>17</sup> Տե՛ս Ն. Հակոբյան, Պարբերությունը Դ. Դեմիրճյանի պատմվածքներում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Եր., 1977, էջ 175:

<sup>18</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 65:

**ARTASHES SARGSYAN – *Duplication and Replacement as Means of Connecting the Prescriptions.*** - The study of the connection of sentences in a paragraph is one of the important problems of text linguistics. Just as there are ways to connect words and components of complex sentences, there are ways to connect sentences in a paragraph. There are quite a few of them, but repetition and replacement play the most important role. They have their own forms of manifestation, which are examined in the article. Repetition can be verbal and grammatical. The replacement is made with a pronoun, nominalization, synonym, description. By these means, connections are created between the sentences in the paragraph, which in some cases are stronger, in others, relatively weak. If intertextual connections are not created between sentences, then there will be a set of sentences, but not a text, although each sentence will express its meaning. The stylistic factor is also important in the choice of means of intertextual connection.

**Key words:** *sentence linking, text, repetition, substitution, pronoun, ellipsis, paragraph, conjunction, synonym, definition*

## ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵԿՅԱՆ \*   
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում են բառակազմական ձևայինների բազմիմաստության և համանունության տարանջատման հարցեր: Միևնույն հնչումն ունեցող ձևայինների համանունության որոշման սկզբունքները քիչ են առանձնացված: Հայ լեզվաբանական գրականության մեջ բազմիմաստ և համանուն ածանցները փաստորեն ուղղակի թվարկվում են: Քանի որ հոմանիշության, հակահիշության, համանունության և բազմիմաստության բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ կարելի է տարածել նույն չափանիշները, որոնք կիրառելի են բառային համանունների նկատմամբ: Հոդվածում նշվում են չափանիշներ համանուն ածանցների տարբերակման համար: Դրանց մեջ անչափ կարևոր նշանակություն ունեն այդ լեզվական միավորների իմաստային անփոփոխակի (ինվարիանտի) որոշումն ու առանձնացումը, ինչպես նաև ածանցի՝ բառակազմական տարբեր հիմքերի հետ բաղադրվելու հատկանիշը: Առաջարկվող չափանիշների հիման վրա քննվում են հայ լեզվաբանական գրականության մեջ իբրև բազմիմաստ ներկայացված մի շարք ածանցներ:

**Բանալի բառեր** - *ձևայինների համանունություն, բազմիմաստ ածանցներ, համանուն ածանցներ, ածանցների տարբերակներ, բառակազմական հիմք, իմաստային անփոփոխակ, բազմիմաստության և համանունության սահմանազատման չափանիշներ*

**Ներածություն:** Հայերենի բառային և քերականական համանունները վաղուց են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դրանց մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, կան բառարաններ և մենագրական ուսումնասիրություններ<sup>1</sup>: Սակայն բառակազմական ձևայինների համանունության վերաբեր-

\* **Մանուկ Ֆելեքյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ  
**Манук Фелекян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ  
**Manuk Felekyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language  
Էլ. փոստ՝ feleqyanmanuk@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0008-3510-6426>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.05.2024

Գրախոսվել է՝ 22.05.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Ա. Ա. Աբրահամյան**, Հայերենի քերականական համանունության շուրջ // Պատմա-բանասիրական հանդես, 1974, № 1, էջ 20-38: **Ռ. Շալունց**, Համանուն բառերը ժամանակակից հայերենում // Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Եր., 1977, էջ 5-76: **Ն. Պառնասյան**, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1979: **Ե. Գևորգյան**, Բառաքերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1983: **Ե. Գևորգյան**, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր. 1978:

յալ եղել են միայն առանձին դիտարկումներ, մասնակի անդրադարձներ՝ երբեմն այլ հարցերի քննության ժամանակ<sup>2</sup>:

Լեզվաբանական գրականության մեջ դեռ վերջնականապես մշակված չեն բառային համանունության և բազմիմաստության սահմանազատման սկզբունքները, թեև կան շատերի կողմից ընդունված մի քանի հիմնական չափանիշներ: Միևնույն հնչումն ունեցող ձևայինների համանունության որոշման սկզբունքները է՛լ ավելի քիչ են առանձնացված: Մենագրություններում և բուհական դասագրքերում բազմիմաստ և համանուն ածանցները փաստորեն ուղղակի թվարկվում են: Դրանց տարանջատման մեկ-երկու չափանիշ նշում է միայն Է. Աղայանը<sup>3</sup>: Իսկ Ս. Գալստյանը ավելի խիստ չափանիշ է ընտրում՝ գրելով. «Նյութական միևնույն արտահայտությունն ունեցող, բայց միաժամանակ տարբեր խոսքի մասեր կերտող ածանցները մեր սկզբունքով տարբեր ածանցներ են, որովհետև հանդես են գալիս բառակազմական տարբեր կաղապարներում»<sup>4</sup>:

Քանի որ հոմանիշության, հականիշության, համանունության և բազմիմաստության բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ կարելի է տարածել նույն չափանիշները, որոնք կիրառելի են բառերի նկատմամբ<sup>5</sup>:

**Ածանցների իմաստային անփոփոխակը:** Ինչպես և բառերի պարագայում է, բառակազմական ձևայինների բազմիմաստության և համանունության սահմանը որոշելու համար անչափ կարևոր նշանակություն ունեն այդ լեզվական միավորների իմաստային անփոփոխակի որոշումն ու առանձնացումը: Լեզվաբանության մեջ անփոփոխակ (ինվարիանտ) հասկացությունը, որը փոխառված է մաթեմատիկայից, առաջին անգամ ձևակերպվել է հնչյունաբանության բնագավառում Պրահայի լեզվաբանական խմբակի և մասնավորապես Ն. Տրուբեցկոյի կողմից: «Ցանկացած հնչյուն կարող է իրականացվել մի շարք տարբեր հնչումներով»<sup>6</sup>, – գրում էր Ն. Տրուբեցկոյը՝ առանձնացնելով հնչույթը՝ որպես անփոփոխակ, նրա խոսքային իրացումներից կամ տարբերակներից (փոփոխակներից)՝ հնչուններից: Հետագայում ինվարիանտի հասկացությունը տարածվեց լեզվաբանության նաև այլ բնագավառներում:

Մի կողմ թողնելով լեզվական անփոփոխակի առանձնացման հնարավորության կամ մինչև իսկ դրա գոյության մասին բանավեճերը՝ մենք ընդունում ենք, որ լեզվական ցանկացած իմաստակիր միավորի համար կարելի է առանձնացնել մի այնպիսի ընդհանուր (թեկուզ և երբեմն խիստ վերացական)

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 152-154: Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, երրորդ հրատարակություն, Եր., 1999, էջ 254-255: Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 288-290: Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 227-228:

<sup>3</sup> Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 288-290:

<sup>4</sup> Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 12:

<sup>5</sup> Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 287:

<sup>6</sup> Трубецкой Н. С. Основы фонологии, 2-е издание, изд. "Аспект пресс", М., 2000, с. 44.

նշանակություն, որը իր հիմնական կողմերով կրկնվում է այդ միավորի խոսքային յուրաքանչյուր իրացման մեջ: «Անփոփոխակը .... այն ընդհանուրն է, որն օբյեկտիվորեն գոյություն ունի համեմատաբար միատարր առարկաների կամ երևույթների դասում<sup>7</sup>, – նշում է Վ. Սոլնցևը: – Ինվարիանտությունը առարկաներում գոյություն ունի որպես ընդհանուրը յուրաքանչյուր առանձին առարկայի մեջ: Ինվարիանտությունն ու տարբերակայնությունը նույն առարկայի երկու կողմերն են: Որպես վերացական կամ մտովի պատկերացվող առարկա՝ անփոփոխակը մարմնավորում է դասային հատկություններ: Ինվարիանտը ներկայացնում է ինչպես ամբողջ դասը, այնպես էլ տվյալ դասի յուրաքանչյուր առարկա»<sup>8</sup>:

**Համաժամանակությունը և տարժամանակությունը անանցների համանունության որոշման ժամանակ:** Համանունությունը պետք է որոշել համաժամանակյա տեսանկյունից: «...Հայոց լեզվի զարգացման տարժամանակյա կամ պատմական իրողությունները բավարար հիմք չեն կարող տալ ժամանակակից հայոց լեզվի բառային և բառաքերականական համանունության կապերի որոշման համար»<sup>9</sup>: Սա հավասարապես վերաբերում է նաև ձևույթների համանունությանը: Եթե բառը, բառաձևը կամ ձևույթը լեզվի զարգացման ընթացքում ձեռք է բերել նոր ձև կամ իմաստ, ապա նախկին և ներկա միավորները չենք կարող համարել համանուններ<sup>10</sup>:

Այսպես, գրաբարի անցյալ դերբայի *-եալ* վերջավորությունը ժամանակակից հայերենում հնչյունափոխվել է *-ել-*-ի, իսկ դրանով կազմված մի շարք բառեր մեր լեզվում պահպանվել են իբրև ածականներ կամ գոյականներ՝ կազմված *-յալ* (<*եալ*) ածանցով (*սովյալ, ենթադրյալ, որակյալ, մեռյալ, անցյալ, հանգուցյալ, հեծյալ* և այլն): Եվ այսօր պնդել, որ մենք ունենք համանուն երկու (բառահարաբերական և բառակազմական) *-եալ* և *-յալ* (<*եալ*) ձևույթներ, սխալ կլինի, քանի որ արդի հայերենում *-եալ* վերջավորությամբ դերբայ ուղղակի չկա:

Կա նաև հակառակ երևույթը: Ժամանակակից հայերենի հարակատար դերբայի *-ած* վերջավորությունը ծագել է գրաբարի *-ած* գոյականակերտ և ածականակերտ ածանցից (որն էլ իր հերթին առաջացել է *ածել* բայի արմատից<sup>11</sup>)՝ *գործած* («շինվածք, կառուցվածք, կերտվածք»), *կազմած* («1. կազմություն, կառուցվածք, 2. հանդերձանք, 3. կահկարասի, 4. զարդարանք»), *ձուլած*

<sup>7</sup> Солнцев В. М. Язык как системно-структурное образование. Издание 2-е, дополненное, изд. «Наука», М., 1977, с. 214.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 218:

<sup>9</sup> Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), երրորդ հրատարակություն, Եր., 1999, էջ 115:

<sup>10</sup> Հմմտ. Ն. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1979, էջ 32:

<sup>11</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 8:

(«ձուլվածք, ձուլելը»)<sup>12</sup>, նաև *երկիւղած, ողորմած*: Ժամանակակից հայերենում *-ած*-ով գոյականներն առաջացել են համապատասխան հարակատար դերբայներից՝ խոսքիմասային փոխանցմամբ, և չի կարելի արդի լեզվում ընդունել երկու համանուն *-ած* ձևայիններ:

Անառարկելի է համանունությունը, երբ գործ ունենք տարբեր կիրառության, տարբեր գործառույթներ ունեցող ձևայինների հետ: Այսպես, ակնհայտ է համանունությունը հիմնական՝ արմատական ձևայինների և նույնական հնչյունական կազմն ունեցող երկրորդական ձևայինների միջև: Հայերենում կան **արտ**<sub>1</sub> արմատական բառը («մշակելի հող, անդաստան». *արտաստեր, արտամեջ, ցորենարտ* բարդությունների արմատներից մեկը) և նույնահունչ **արտ**<sub>2</sub>- նախածանցը («դրսում, դեպի դուրս» բառակազմական նշանակությամբ. *արտահանել, արտագաղթ, արտահաստիքային* և այլն): Լեզվում կան նաև **արտ**<sub>3</sub>- (հապավում *արտադրական* բառի. *արտմիավորում*) և **արտ**<sub>4</sub>- (հապավում *արտաքին* բառի, *արտգործնախարար, արտարժույթ*) հապավումները: Մրանք չունեն ո՛չ ծագումնաբանական, ո՛չ իմաստային, ո՛չ էլ այլ կարգի որևէ ընդհանրություն և լիակատար համանուններ են:

Իհարկե, ծագման ընդհանրությունը այսօր երբեմն խանգարում է նույնահունչ ձևայինների հստակ տարանջատմանը իբրև համանուններ: Ասենք՝ **գործ** արմատական բառը («աշխատանք, զբաղմունք, պարապմունք» հիմնական նշանակությամբ) և **-գործ** ածանցակերպը («նախատիպի զբաղմունքով՝ արհեստով՝ մասնագիտությամբ պրոֆեսիոնալ կերպով զբաղվող անձ, մասնագետ» բառակազմական նշանակությամբ) ունեն ընդհանուր ծագում: Ածանցակերպն առաջացել է արմատից. սրանց կապը չի մթազնել և արդի լեզվում հստակ գիտակցվում է: Սակայն քանի որ դրանց բառակազմական գործառույթները տարբեր են, այժմ սրանք պետք է համարվեն համանուններ. *մետաղագործ, ադամանդագործ, քանդակագործ, ատաղձագործ, ածխագործ* և նման բաղադրությունները չեն նշանակում «մետաղի՝ ադամանդի՝ քանդակի ևն գործ», այլ «նախատիպի առարկան մշակող՝ ստեղծող՝ արդյունահանող ևն մասնագետ անձ»: Նույն հարաբերությունն է նաև **բան** արմատի («գործ, աշխատանք», նաև «միտք, գաղափար» նշանակություններով. *բանել, բանվոր, բանաստեղծ* և այլն) և կրկին «նախատիպի ցույց տված զբաղմունքով՝ գործով՝ գիտությամբ՝ առարկայով մասնագիտորեն զբաղվող անձ» բառակազմական նշանակությամբ **-բան** վերջածանցի միջև (*լեզվաբան, մշակութաբան, կենսաբան, տեսաբան, երգիծաբան* և այլն):

**Անցումային կամ միջանկյալ փուլում գտնվող համանուն ածանցներ:** Պետք է առանձնացնել նաև անցումային փուլում գտնվող ձևայիններ: Հայերենի բազմիմաստ ածանցների թվում նշվում է *-ական* ածականակերտ վերջածանցը, որով կարող են կազմվել նաև գոյականներ: Բայց այդ գոյականները ծագում են

<sup>12</sup> Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հտ. 1-2, Եր., 2000:

ածականներից՝ խոսքիմասային փոխանցմամբ: Այս դեպքում խոսք չի կարող լինել համանունության մասին: Սակայն արդի լեզվում *-ական*-ը սկսել է գիտակցվել նաև որպես ինքնուրույն գոյականակերտ ածանց, և կան նրանով կազմված գոյականներ, որոնք չունեն ածականական նախատիպ և խոսքիմասային փոխանցմամբ չեն կերտվել: Դրանք կազմվում են *-ական* ածանցի գոյականական նշանակությամբ կերտված բառերի համաբանությամբ և մեծ մասամբ դիպվածաբանություններ են, ինչպես՝ *խմբայլական, ոչմիթիզական*, նաև հապավումներից՝ *ԵՊՂ-ական, ՀՀՇ-ական, ՔՊ-ական*:

Հայերենի ամենաարտադրողական վերջածանցներից *-որդ*-ը, ինչպես հայտնի է, հիմնականում բայական, մասամբ էլ այլ հիմքերից գոյականներ է կազմում՝ «որևէ գործով մասնագիտորեն կամ սիրողաբար զբաղվող անձ, որևէ բանի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (*վարորդ, գնորդ, սավառնորդ, հաճախորդ* են): Գոյականական, ածականական և մակբայական հիմքերով բաղադրություններում (*-որդ* ածանցի միևնույն բառակազմական նշանակությամբ) թեև երկրորդաբար, բայց շատ հստակ գիտակցվում է գործողության նշանակությունը. այսպիսի հիմքերը գրեթե ամբողջապես կազմված են բայանուններից<sup>13</sup>, օրինակ՝ *չմշկորդ* «չմուշկ քշելով՝ չմշկելով զբաղվող անձ», *ծանրորդ* «ծանրություններ բարձրացնելով պարապող մարզիկ», *գնդացրորդ* «գնդացիր կրակով զինվոր», *արշավորդ* (*արշավ* և *արշավել* հիմքերց), *լողորդ* (*լող* և *լողալ*), *հակառակորդ* (*հակառակ* և *հակառակել*), *վստահորդ* (*վստահ* և *վստահել*), *պակասորդ* (*պակաս* և *պակասել*) և այլն: Սակայն հայերենում կան այս կաղապարով կազմված կենսաբանական-բժշկական մի շարք տերմիններ, որոնցում *-որդ* ածանցը կորցրել է «անձ» նշանակությունը՝ *թելլորդ, գծորդ, ցցորդ, մագորդ, յուղորդ, բշտորդ* և այլն<sup>14</sup>: Ամեն դեպքում, այսպիսի բաղադրությունները կազմված են միևնույն կաղապարի տարբեր ենթակաղապարներով, և մենք գործ ունենք նույն ածանցի տարբեր նշանակությունների հետ: Իսկ թվականական կամ թվի, քանակի հետ առնչություն ունեցող հիմքերից կազմություններում (*քառորդ, կիսորդ, տասնորդ // տասանորդ, քանորդ*) և *-որդ* ածանցով կազմված մի քանի ածականներում (*ավելորդ, նախորդ, հաջորդ, լծորդ*) ստուգաբանորեն նույն այս ածանցի բառակազմական իմաստը այնքան է հեռացել նախորդ կաղապարներում ունեցած իմաստից, որ կարող է առանձնացվել որպես նախորդին համանուն ձև: Նշենք նաև, որ այս վերջին կաղապարները հայերենում արտադրողական չեն:

Բայակերտ *վեր(ա)-* նախածանցը<sup>15</sup> ունի բառակազմական երեք նշանա-

<sup>13</sup> Տե՛ս Մ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 158:

<sup>14</sup> Օրինակները վերցրել ենք Մ. Գալստյանի վերոհիշյալ գրքից (էջ 157):

<sup>15</sup> Մենք այս ածանցով կերտված այլ խոսքի մասերը (ածականներ, գոյականներ, երկրորդաբար՝ մակբայներ) չենք քննում, քանի որ դրանք փաստորեն բոլորը բայանուններ են կամ էլ իրենց բառակազմական հիմքերում ունեն բայական բաղադրիչ:

կություն: Դրանցից երկուսը իմաստային նույն անփոփոխակի տարբերակներն են: Այս դեպքում գործ ունենք ածանցի բազմիմաստության հետ. ա) գործողությանը տալիս է «դեպի վեր, վերևում» նշանակությունը՝ *վերնդել, վերընթանալ, վերհոսել, վերձգվել* և այլն, բ) «գործողությունը կատարվում է վրան մի բանի վրա»՝ *վերահսկել, վերադրել, վերարկել* (հնբ.) և էլի մեկ-երկու բառ: Այս երկու ենթակադապարներում *վեր(ա)*- նախածանցը արտադրողական չէ: Իսկ երրորդ նշանակությամբ այն հայերենի ամենագործուն ածանցներից է: Այս կադապարում ունի «նախատիպ բայի գործողությունը նորից, կրկին, վերստին, երբեմն նոր ձևով կատարվելու» նշանակություն՝ *վերաբացատրել, վերաբացել, վերաբնակվել, վերաբաշխել, վերախմաստավորել, վերադաստիարակել* և այլն, և այլն: Վերջածանցի իմաստային այս տարբերակը թեև ծագումով նույնն է նախորդների հետ (ծագել է *վեր* արմատական բառից), սակայն իմաստով բավականին հեռացել է նախորդներից: Սկսել է մթագնել այս տարբերակների իմաստային կապը, և *վեր(ա)*- նախածանցը կարող է ժամանակի ընթացքում դառնալ նախորդ իմաստներով գործածությունների համանունը, մանավանդ որ մեր նշած առաջին երկու նշանակություններով այժմ այս ածանցը արտադրողական չէ, և նրանցով նոր բառեր այլևս չեն կազմվում:

Ածանցների բազմիմաստությունը և համանունությունը տարանջատելու համար կարևոր է նաև տվյալ ածանցով կազմված բառերի բառակազմական կադապարների և բառակազմական հարացույցների առանձնացումը<sup>16</sup>: Այսպես, հայերենի *-ուստ* հնչյունական կազմն ունեցող ածանցը բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ *վերացական, մասամբ էլ կոնկրետ առարկայական իմաստով* (սրանք միննույն կադապարի երկու ենթակադապարներն են)՝ *գալուստ, փախուստ, կորուստ* և *հազուստ, պահուստ, էլուստ* և այլն: Նույն հնչյունն ունեցող ածանցը ածականական և մակբայական հիմքերից կազմում է մակբայներ՝ *այլուստ, վերուստ, արտաքուստ, ներքուստ, ամենուստ, հեռուստ*: Սրանք համանուն ածանցներ են: Այս դեպքում կարևոր է նաև այդ ածանցների տարբեր ծագում ունենալը. *-ուստ1* գոյականակերտ ածանցն ունի հնդեվրոպական ծագում, իսկ *-ուստ2* մակբայակերտ ածանցը ծագում է *ուստ* «որտեղից» բառից<sup>17</sup>:

**Ածանցների համանունության մի քանի դիտարկումներ:** Այժմ, վերոհիշյալ չափանիշները հաշվի առնելով, քննենք հայերենի լեզվաբանական գրականության մեջ իբրև բազմիմաստ ներկայացվող մի քանի ածանցներ՝ պարզելու համար՝ դրանք իսկապես՞ ս բազմիմաստ են, թե՞ դրանց մեջ կան նաև համանուններ:

<sup>16</sup> Բառակազմական հարացույց ասելով՝ մենք հասկանում ենք նույն նախատիպ հիմքից կազմված և բառակազմական նույն (առաջին) քայլում կերտված բառերի ամբողջությունը:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 35:



Նշվում է, որ *-ին* ածանցը<sup>18</sup> հիմնականում ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ նախատիպին տալով սաստկական նշանակություն՝ *մթին, լռին, նրբին, դյուրին* և այլն: Ապա նաև գործիականի հիմքից (նաև գրաբարի) կրկին սաստկական նշանակությամբ ածականներ՝ *լիովին, ազգովին, գլխովին, բոլորովին, ամեննին, տակավին* և այլն: Այս ածանցով ունենք նաև տեղ ցույց տվող հիմքից բաղադրություններ, որոնցում չկա սաստկություն իմաստը՝ *վերին, միջին, ստորին, տեղին, առաջին, հետին* և այլն: Այս դեպքում արդեն գործ ունենք համանուն ածանցի հետ:

Հայերենի ամենաբազմիմաստ ածանցների թվում նշվում է *-ակ* վերջածանցը: Հայերենի ամենակենսունակ այս ածանցը դրվում է երեք հիմքերի վրա՝ գոյականական, ածականական ու բայական, և կազմում է հիմնականում գոյականներ և ածականներ, իսկ նրանով կազմված *մենակ* և *միայնակ* բառերը ունեն նաև մակբայական նշանակություն: Այս ածանցով գոյականական հիմքերից կազմված գոյականներն ունեն «նախատիպի փոքրը, նվազը, փաղաքշականը, երբեմն էլ արհամարհական-նվաստականը» բառակազմական նշանակությունները՝ ա) *տնակ, լճակ, սայլակ*, բ) *աղջնակ, թռչնակ, որդյակ, պատանյակ*, գ) *գրչակ, իմաստակ, էշակ*: Այս նշանակությունների իմաստային անփոփոխակը նույնն է. յուրաքանչյուրի փոքրը կարող է լինել թե՛ փաղաքշելի և թե՛ արհամարհելի: Սրանք մինևույն ածանցի իմաստային տարբերակներն են: Գոյականական հիմքերից շատ կազմություններում *-ակ* ածանցը, ինչպես նշում է Ս. Գալստյանը, նվազական նշանակություն չի դրսևորում, այլ «հանդես է գալիս որպես բառակազմական բաղադրական ածանց, և *-ակ* ածանց ունեցող և չունեցող բաղադրությունները նման դեպքերում տարբեր հասկացություններ արտահայտող բառեր են»<sup>19</sup>, ինչպես՝ *աղյուսակ, գլանակ, գնդակ, խոյակ, կայծակ, նոնակ, վահանակ, օղակ*: Սակայն այս նշանակությամբ ածանցը չի կարելի նախորդի համանունը համարել, քանի որ իմաստային անփոփոխակը նախորդների հետ նույնն է. այս կազմություններում դեռևս հստակ գիտակցվում է նաև «նախահիմքի փոքրը» ուղղակի իմաստը, ինչն էլ հաճախ նշվում է հայերենի բառարաններում որպես այդ բառերի ոչ հիմնական նշանակություն:

Ածականներից *-ակ* ածանցը կազմում է ածականներ՝ նախահիմքի իմաստի վերահաստատման, երբեմն էլ փաղաքշական կամ սաստկական նշանակությամբ: Այս դեպքում նույնպես իմաստային ինվարիանտը նույնն է՝ «հատկանիշի վերագրում կամ հատկանիշի տարբեր աստիճանների վերագրում», ինչպես՝ *քառադիմակ* («չորս երես կամ կողմ ունեցող»), *լուսավալյակ* («լույսի

<sup>18</sup> Այս և հաջորդ ածանցների նշանակությունները և բառակազմական արժեքը նկարագրելիս մենք հիմնականում հենվել ենք Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում», մենագրության և Ա. Մուքիսյան, Ք. Մուքիսյան, Մ. Ֆելեքյան, «Ժամանակակից հայոց լեզու», Եր., 2017 բուհական դասագրքի վրա:

<sup>19</sup> Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 60:

փայլը՝ ցուքը վրան»), *կապուտակ, անուշակ, խառնակ, կլորակ* և այլն:

Ածականական հիմքերից այս ածանցը կազմում է նաև գոյականներ՝ գործողի անվան ընդհանուր նշանակությամբ (անձ կամ առարկա, «մի բան անողը»)՝ *սահնակ, կոչնակ, սողնակ, սպասավորակ* («սպասավորող, զինակիր»), *խոսնակ* և այլն: Սրանց բաղադրյալ հիմքերում կա բայական բաղադրիչ. հիմքում առկա հատկանիշի հասկացությունը արտահայտվում է գործողությամբ: Բուն ածականներից կազմությունները ցույց են տալիս առարկա, որն ունի նախատիպի հատկանիշը՝ *պաղպաղակ, փչակ, հարթակ, ամրակ, նաև միջնակ, ներքնակ* և այլն:

Բայական պարզ և բայական վերջնաբաղադրիչ ունեցող բաղադրյալ հիմքերից -*ակ* ածանցով կազմվում են գոյականներ՝ «մի բան անողի, գործողի» բառակազմական նշանակությամբ: Սրանք անձերի (*բուժակ, սուզակ, պատվիրակ, կատակերգակ, հեծելակ*) և առարկաների, մեծ մասամբ գործիքների անուններ են (*բռնակ, ծորակ, սավառնակ, սեղմակ, հեռադիտակ, վերելակ*):

Կան նաև բայական հիմքով կազմված ածականներ՝ «նախահիմքում նշված գործողությամբ բնութագրվող հատկանիշը ունեցող» բառակազմական նշանակությամբ՝ *գիտակ, սկսնակ, ունակ, ձախողակ* և այլն: Այս կիրառություններում ևս առկա է հատկանիշի չափի, տվյալ դեպքում՝ սաստկության իմաստային անփոփոխակը, ասենք՝ *գիտակ*՝ «տվյալ բանին լավատեղյակ, քաջածանոթ», *հաջողակ*՝ «իր ձեռնարկումներում միշտ կամ մեծամասնաբար հաջողող՝ հաջողության հասնող», *սկսնակ*՝ «որևէ գործունեություն դեռ նոր սկսող, անհմուտ» և այլն:

Ածականական և բայական հիմքերից գոյականներ կազմող -*ակ* ածանցը պետք է տարբերակենք համանուն -*ակ* նվազական-փաղաքշական վերջածանցից: Առաջին բաղադրություններում նույնիսկ ամենաընդհանուր ձևով չի կարելի առանձնացնել «նախատիպի փոքրը» իմաստային անփոփոխակը: Վերջին երկու խմբերի իմաստային ընդհանուր նշանակությունն է «մի բան անող առարկա կամ անձ»: Այսպիսով, ելնելով -*ակ* ածանցի բառակազմական նշանակություններից և տարբեր հիմքերի հետ զուգորդվելու ունակությունից՝ հայերենում կարող ենք տարբերակել երեք համանուն ածանցներ: -*Ակ*, ածանցը գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ ա) նախատիպի փոքրը, բ) նախատիպի նվազական-փաղաքշականը, գ) նախատիպի նվաստական-արհամարհականը ենթակադապարներով, և գոյականական հիմքերից, որպես բառակազմական բաղադրական ածանց, կազմում է գոյականներ, որոնք նախատիպի ածանցագուրկ ձևերի համեմատությամբ այլ հասկացությունների անվանումներ են, բայց երկրորդաբար պահում են «նախատիպի փոքրը» նշանակությունը: Այս ածանցի իմաստային անփոփոխակն է «նախատիպի փոքրը, նվազը»: Սրան համանուն -*ակ* ածանցը ածականական և բայական կամ բայական վերջնաբաղադրիչ ունեցող հիմքերից կազմում է ածականներ՝ «ածականական իմաստի վերահաստատման, երբեմն էլ փաղաքշական կամ

սաստկական նշանակությամբ», ընդ որում՝ բայափոխ կազմություններում ևս առկա է հատկանիշի չափի, տվյալ դեպքում՝ սաստկության իմաստային անփոփոխակր: Երրորդ համանունը՝ *-ակ3*, կրկին գոյականակերտ է, միանում է բայական պարզ, բայական վերջնաբաղադրիչ ունեցող և բայանուն ածականներից կազմված բաղադրյալ հիմքերին, սակայն նույնիսկ երկրորդաբար չունի «նախատիպի փոքրը» բառակազմական նշանակությունը: Մրա իմաստային անփոփոխակն է «գործողի անուն, մի բան անողը (անձ կամ առարկա)»:

### Եզրակացություններ

- Ածանցների բազմիմաստության և համանունության տարբերակման գլխավոր չափանիշը իմաստաբանականն է: Բազմիմաստ ածանցների բոլոր նշանակություններում առկա է միևնույն իմաստային անփոփոխակր: Համանուն ածանցները չունեն իմաստային առնչակցության որևէ եզր:
- Մյուս կարևոր չափանիշը ածանցի՝ բառակազմական տարբեր հիմքերի հետ բաղադրվելու հատկանիշն է, ինչպես նաև նոր կերտված բառի խոսքիմասային պատկանելությունը:
- Համանունության որոշման օժանդակ միջոց է ածանցների հոմանիշների ընտրությունը և դրանց հետագա համեմատումը:
- Ածանցների ծագումը ևս պետք է համարվի համանունների տարբերակման միայն օժանդակ միջոց: Համանուն ածանցները կարող են առաջացած լինել ոչ միայն տարբեր աղբյուրներից՝ հիմնականում հնչյունական այլևայլ փոփոխությունների ճանապարհով կամ պատահական նմանությամբ, այլև ստուգաբանական միևնույն նախահիմքից՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում իմաստային հետագա երկփեղկման արդյունքում:

**МАНУК ФЕЛЕКЯН – Многозначность и омонимия словообразовательных морфем в современном армянском языке.** – В статье рассматриваются вопросы дифференциации полисемии и омонимии лексических форм. Принципы определения омонимичности форм, имеющих одинаковое звучание, четко не выделены. В армянской лингвистической литературе многозначные и омонимичные суффиксы фактически просто перечисляются. Поскольку характеристики синонимии, антонимии, омонимии и полисемии являются общими для единиц всех уровней языка, в целом те же критерии, которые применимы к лексическим омонимам, могут быть распространены и на суффиксы. В статье указаны критерии дифференциации омонимичных суффиксов. Основным критерием дифференциации многозначности и омонимичности суффиксов является их семантика: во всех значениях многозначных суффиксов присутствует один и тот же семантический инвариант. Омонимичные суффиксы не имеют какой-либо семантической связи. Другим важным критерием является способность суффикса сочетаться с различными словообразовательными основами, а также частичечевая принадлежность вновь образованного слова. Происхождение суффиксов следует рассматривать лишь как вспомогательное средство для различения омонимов. На основе предложенных критериев исследуется ряд суффиксов, представленных в армянской лингвистической литературе как многозначные.

**Ключевые слова:** *омонимия морфем, многозначные суффиксы, омонимичные суффиксы, варианты суффиксов, словообразовательная основа, семантический инвариант, критерии разграничения многозначности и омонимии*


**MANUK FELEKYAN – *Polysemy and Homonymy of Derivational Morphemes in the Modern Armenian Language.*** – This article is about differentiation of polysemy and homonymy of lexical forms. Principles for determining the homonymous forms that are pronounced same are not much distinguished. In Armenian linguistic literature, polysemantic and homonymous suffixes are simply listed. Since the characteristics of synonymy, antonymy, homonymy and polysemy are common in all units of language, the criteria applicable for homonyms can be applied to suffixes as well. Criteria for differentiating homonymous suffixes are described in this article.

The main criterion for differentiating the polysemy and homonymy of suffixes is their semantics: all meanings of polysemous suffixes contain the same semantic invariant. Homonymous suffixes do not have any semantic connection. Another important criterion is the ability of the suffix to be combined with various word-forming stems, as well as the part-of-speech affiliation of the newly formed word. The origin of suffixes should be considered only as an aid to distinguishing homonyms.

Based on the proposed criteria, a number of suffixes knowns as polysemantic in Armenian linguistic literature, are studied.

**Key words:** *homonymy of morphemes, polysemous suffixes, homonymous suffixes, variants of suffixes, word-formation basis, semantic invariant, criteria for distinguishing polysemy and homonymy*

## ՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

ՄԱՐԻԱՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ   
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում է շեշտի գործածությունը՝ մասնավորապես կոչականի և հրամայական եղանակի բայաձևերի կետադրության առնչությամբ: Հրամայական եղանակի բայերի, ինչպես նաև կոչականի կիրառման դեպքերը տարակուսանք են առաջացնում՝ շեշտը լ, թե՛ ոչ: Հոդվածում փաստարկվում է, որ շեշտից խուսափելը մեծաթիվ դեպքերում ծուլության կամ կետադրական կանոնին չտիրապետելու նշան չէ, իսկ շեշտել-չշեշտելու միտումները ծանրութեթև անելը մասնավորապես լեզվաբանության բնագավառներից մեկի՝ գործաբանության կողմ է տանում: Հոդվածը գրելու առիթ դարձած հարցերից է այն, թե 1930-ականներին Չարլզ Մորիսի ստեղծած և 1970-ականներին իբրև լեզվաբանության ճյուղ զարգացած գործաբանության հղացականացումը կարո՞ղ է այսօր Հայաստանում կրճատել դրա «պատմական հետավորությունը», որ նշանակում է նաև հայաստանյան լեզվաբանության կուտակած ավանդույթի վերահղացականացման, հաճախ նաև դրա դիմադրության հաղթահարման հանգեցնել: Այս հետնախորքի վրա է հողվածի հիմնական նպատակներից մեկը՝ կետադրության հարցերը, սվյալ դեպքում՝ շեշտի գործածությունը գործաբանական տեսանկյունից գնահատելը: Այդ նպատակին հետամուտ՝ հարց է տրվում՝ արդյո՞ք ժամանակը չէ՞, որ կիրառման հաճախականությունը, կիրառման գերակա միջավայրերը, միտումներն ու համատեքստերը փոփոխեն որոշ կանոններ: Գործաբանությունից բացի՝ պարտադիր շեշտման կանոնները դիտարկվում են նաև լեզվաբանական այլ մակարդակների՝ ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության առնչությամբ:

՝ Մարիամ Կարապետյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի դոցենտ

Мариям Карапетян – кандидат филологических наук, доцент кафедры новых медиа и коммуникаций ЕГУ

Mariam Karapetyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of New Media and Communications

Էլ. փոստ՝ [mariamkarapetyan@ysu.am](mailto:mariamkarapetyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0003-4380-0294>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.03.2024

Գրախոսվել է՝ 07.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

**Բանալի բառեր** – հրամայական եղանակի բայաձևերի կետադրություն, կոչականի կետադրություն, շեշտի գործածություն, լեզու-խոսք հակադրություն, լեզվաբանական մակարդակների հարաբերություններ, շեշտի գործաբանական ներուժ

Այն, որ հայերենի կետադրական կանոնները հաճախ չեն պահպանվում նաև հայերենի կետադրությանը վերաբերող աշխատություններում, որ դրանց կիրառման խիստ հետևողականության և լիարժեք հիմնավորվածության գրեթե անհնար է հանդիպել, ակնհայտ է: Այս իրավիճակում անգամ պարզունակ թվացող տարակուսանք է հայտնվում. չի կարելի արդյոք կետադրությանն առնչվող հարցերին մոտենալ այլ կողմից՝ ոչ թե քերականական նորմի, այլ լեզվի կիրառության՝ խոսքի տրամաբանությունների: Այս հարցադրումն է, որ տանում է գործաբանության կողմ, որը, տարբեր տեսաբանների բնորոշմամբ, հետազոտում է լեզվի այն կողմերը, որոնք պահանջում են հղում լեզուն կիրառողներին, ավելի ամբողջական ընդգրկմամբ՝ խոսքի համատեքստին<sup>1</sup>:

Վերը բերված պարզ հարցը, սակայն, բարդանում է առնվազն լեզվաբանական ավանդույթների միջնորդության բերումով:

Նախ՝ մի մեջբերում Լեզվի կոմիտեի կայքից. «Ըստ հայերենի կանոնների՝ շեշտվում են կրկնադիր շաղկապները, օրինակ՝ թե՛ ..., թե՛ ..., և՛ ..., և՛ ..., ո՛չ..., ո՛չ... և այլն: Եթերից հնչող խոսքում այս շաղկապները շեշտելու փոխարեն սխալմամբ շեշտում են դրանց հաջորդող բառերը՝ ասելով.

«Ոչ կրթակա՛ն, ոչ սոցիալակա՛ն, ոչ տնտեսակա՛ն երաշխիքներ չկան»: «Վիճակախաղին մասնակցում են բոլոր՝ և շահա՛ծ, և չշահա՛ծ տոմսերը»:

Ճիշտ են այս տարբերակները.

«Ո՛չ կրթական, ո՛չ սոցիալական, ո՛չ տնտեսական երաշխիքներ չկան»: «Վիճակախաղին մասնակցում են բոլոր՝ և՛ շահած, և՛ չշահած տոմսերը»<sup>2</sup>:

Լեզվի կոմիտեի այս պնդմանն առարկելու մղում է առաջանում միանգամից երկու ուղղությամբ. նախ՝ հակաճառել խոսակցական լեզվի հնչերանգը հեշտությամբ գրական լեզվի հնչերանգով պայմանավորելուն, ապա՝ հակաճառել՝ վիճարկելով ինքնին գրական լեզվի կետադրական կանոնը: Եվ այնուհետև՝ եթե կրկնադիր շաղկապների պարտադիր շեշտումը տարակուսելի է, քանի որ դրանց արտասանությանն այդպիսով ձայնի մշտապես և պարտադիր առանձնացող ուժգնություն է վերագրվում, ապա գուցե առավել տարակուսելի է կենդանի խոսքում հնչերանգային տարրերի շատ ավելի մեծ բազմազանությամբ հանդես եկող կոչականի և հրամայական եղանակի բայաձևերի պարտադիր շեշտումը:

<sup>1</sup> St' u **St. C. Levinson**, Pragmatics, Cambridge University Press, 1983, էջ 3-5:

<sup>2</sup> Հայերենի շեշտի մասին, <https://www.langcom.am/%d5%b0%d5%a1%d5%b5%d%a5%d6%80%d5%a5%d5%b6%d5%ab-%d5%b7%d5%a5%d5%b7%d5%bf%d5%ab%d5%b4%d5%a1%d5%bd%d5%ab%d5%bb6/> (01.04.23):

Միանգամից նկատենք, որ թեպետ լեզվաբանական գրականությունը հիմնականում պարտադիր շեշտման պահանջ է դնում, սակայն կան նաև այլ կարծիքներ: Օրինակ՝ Ս. Աբրահամյանի՝ հայերենի կետադրությունն ուսուցանող ձեռնարկը, ընդունված կանոնների համաձայն, կետադրության մասնավոր դեպքի քննարկումը սկսելով կետադրական նշանների դասակարգումից (տրոհության, բացահայտության և առոգանության)<sup>3</sup>, այդուհետև քննադատական դիրքորոշում է հայտնում. «Արդի հայերենի կետադրության թերություններից մեկը մի շարք դեպքերում ձևաբանական գործոնին առաջնություն տալն է շարահյուսականի, խոսքայինի համեմատությամբ: Այսպիսի դեպքերից է, օրինակ, հրամայական բայաձևի, կրկնադիր համադասական շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջը, որ մինչև այժմ էլ տեղ է գտնում որոշ գրքերում և կետադրության պրակտիկայում»<sup>4</sup>:

Կարելի է համաձայնել մտքի հիմնական միտումին (մասնավորապես շեշտի քննության լեզվաբանական մակարդակների վիճելիության հարցի արծարծմանը)՝ միևնույն ժամանակ հավելյալ ճշգրտման պահանջ ներմուծելով. ի՞նչ հարաբերություններ ունեն շարահյուսությունը և «խոսքային»-ը, և առհասարակ, լեզվաբանական կոնկրետ ի՞նչ հղացքների ու առնչությունների տեսակետից դիտարկել խոսքայինը: Հավելյալ և դեպի լեզվաբանության պատմություն ուղղվող հարցեր են՝ ինչպե՞ս են հայաստանյան լեզվաբանության մեջ ըմբռնվել կամ ըմբռնվում խոսքը և լեզվաբանության մակարդակները, մասնավորապես շարահյուսությունը, իմաստաբանությունը, գործաբանությունը: Անմիջապես չպատասխանելով այդ հարցերին՝ ընթանանք օրինակների վերլուծության ճանապարհով. դիտարկենք հայերենի շեշտի գործածության մեկնաբանության մի քանի այլ օրինակներ լեզվաբանական գրականությունից՝ քննարկելով մի շարք պնդումների տարակուսելի կողմերը:

Թեև հայ լեզվաբանները նշում են կետադրության՝ բանավոր խոսքի առոգանությունը փոխանցելու գործառնությունը (օրինակ՝ «[...]բանավոր խոսքի հնչերանգային նրբությունները արտահայտելու, մտքի միավորների՝ նախադասությունների և նրանց բաղադրիչների կապն ու փոխհարաբերությունները ցույց տալու նպատակով, գրության տարբեր ձևերի հետ, գործածվում են կետադրության նշաններ»<sup>5</sup>), սակայն այս սկզբունքը, թերևս, բավարար հետևողականությամբ չի զարգացվում: Մ. Դարբինյանն, օրինակ, իր «Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն» աշխատության մեջ (խմբագիր՝ Էդ. Աղայան, գրախոսներ՝ Հ. Բարսեղյան, Ռ. Իշխանյան), «Առոգանության նշաններ» վերնագրի տակ նկատում է. «Առոգանության նշանները դրվում են այն դեպքում, երբ բառը ձևաբանական և շարահյուսական հասկանիչներով ձեռք է բերում

<sup>3</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., Լույս, 1999, էջ 5:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>5</sup> Մ. Դարբինյան, Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., Լույս, 1990, էջ 3:

ցայտուն երանգ: Կան բառեր, որոնք ցայտուն երանգ են ձեռք բերում զուտ ձևաբանական հատկանիշներով. դրանք ձայնարկություններն են (մեծ մասը) և կոչականները, որոնք գրավոր խոսքում պարտադիր ստանում են առոգանության նշան, իսկ մյուս բառերը ցայտուն երանգ են ձեռք բերում շարահյուսական դերով՝ հեղինակի հայեցողությամբ: Ուստի այս վերջին բառերի հետ առոգանության նշան գործածելիս՝ (մեջբերվող պարբերության կետադրությունը մեջբերվող տեքստի հեղինակին է - Մ. Կ.) պետք է ելնել տվյալ խոսքի կառուցվածքից»<sup>6</sup>: Բացի նրանից, որ այստեղ վիճելի է ձևաբանության ու շարահյուսության շրջանակների ըմբռնումը (այն է՝ ո՞ր բաժնում դիտարկել կոչականը), իսկ հեղինակի հայեցողությունը շարահյուսական դերի հետ կապելը կասկածելի ուղիղությամբ է արվում (մինչդեռ այստեղ է, որ լեզվաբանական համապատասխան ավանդույթի առկայության դեպքում պետք է հայտնվեին իմաստաբանությունն ու գործաբանությունը), առանցքային է նաև այն հարցը, թե որտեղից այն վստահությունը, որ որոշ բառեր «ցայտուն երանգ են ձեռք բերում զուտ ձևաբանական հատկանիշներով»: Առավել ակնհայտ պատասխանն այս հարցին այն է, որ մոտեցումը հիմնվում է լեզվաբանության շրջանակների մասին ընդունված պատկերացման վրա, որը հստակ սահմաններ է դնում լեզվաբանականի և արտալեզվաբանականի միջև և հոգում միայն *քերականության դիրքից տեսանելի*ի մասին<sup>7</sup>:

Հիմնվելով ասվածի վրա՝ կարելի է հաջորդ պնդումն անել. քերականության դիրքից տեսանելի գլխավոր հասկացությունը, որի առնչությամբ կամ որի օգնությամբ լեզվաբանական գրականության մեջ դիտարկվում է շեշտը, հնչերանգն է: Շեշտը ծառայում է որպես միջոց՝ «գրաֆիկական տեսքի» բերելու, տեսանելի դարձնելու հնչերանգը: Եվ հաղթում է հնչերանգը գրավոր խոսքում պարտադիր նշույթավորելու պահանջը՝ անգամ հնչերանգի նրբությունների կոպիտ անտեսման գնով, քանի որ լեզվաբանության այս ընկալմամբ լեզվին արվող առաջնահերթ վերագրություններից մեկը, թերևս սխալված չենք լինի, այն է, որ *լեզուն քերականորեն վերլուծելի կառուցվածք է, և որքան տեսանելի լինեն կառուցվածքի տարրերը, այնքան լավ*: Այս տրամաբանության մեջ անբացահայտ ձևով հոդավորված է այն պատկերացումը, որ քերականական իմաստի հստակությունը, դրանով՝ հաճախ կաղապարացումը նպատակ է, որին պետք է ստորադասել զգայունությունը տարբերությունների նկատմամբ:

Այսպես՝ «*Հնչերանգի եղանակավորային գործառնության*» հարցի առնչությամբ անդրադառնալով խորհրդային լեզվաբանության մեջ «եղանակավորում» եզրույթի մեկնաբանություններին՝ Ս. Ղուկասյանը նկատում է, որ ընդհանուր առմամբ լեզվաբաններն առանձնացրել են եղանակավորման երկու տեսակ

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>7</sup> Է. Աղայանի ձևակերպմամբ, օրինակ, քերականագիտական տեսանկյունից «ամեն մի վերլուծություն միայն քերականորեն դրսևորվող միավորի վերլուծություն է»: Է. Աղայան, Նախադասություն և ասություն, 1987, №1, էջ 129, [http://www.old.yasu.am/files/10E\\_Aghayan.pdf](http://www.old.yasu.am/files/10E_Aghayan.pdf) (18.02.23):



օրյեկտիվ և սուբյեկտիվ: Օրյեկտիվ եղանակավորման հիմքում ընկած են այն իմաստները, որոնք գործում են անկախ հաղորդակցման գործընթացից, իսկ սուբյեկտիվ եղանակավորումը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով<sup>8</sup>: Հնչերանգի ամենակարևոր գործառույթներից մեկը համարելով նախադասությունների հաղորդակցական տիպերի տարբերակումը՝ լեզվաբանը նշում է նաև հնչերանգի «հուզատարբերակիչ գործառույթունը», որը, ըստ նրա, շեշտում են շատ հնչյունաբաններ: «Հուզա-զգացական գործառույթունը», ըստ Ս. Ղուկասյանի, որոշ դեպքերում նույնացվում է «նրա եղանակավորային գործառույթան հետ», իսկ ըստ մեկ այլ կարծիքի՝ «հնչերանգի հուզա-զգացական գործառույթունը լեզվաբանության ուսումնասիրության ոլորտից դուրս է», քանի որ դրա միջոցով արտահայտվում են «ոչ թե բուն լեզվական հարաբերություններ, այլ խոսողի վերաբերմունքը հաղորդման նկատմամբ» (էջ 176): Հնչերանգի «հուզատարբերակիչ գործառույթների» կարևորումը մի դեպքում հնչյունաբաններին վերապահելը, մեկ այլ դեպքում՝ առհասարակ լեզվաբանության սահմաններից դուրս թողնելը, ինչպես դժվար չէ տեսնելը, պարզապես հակադրվող առանձին կարծիքներ չեն, այլ մեկ ընդհանուր և հիմնարար պատկերացման դրսևորումներ, որոնց հետ կապված մեկ այլ դրսևորում է *հաղորդակցային մտադրությունների նրբությունների պակաս կարևորումը* մասնավորապես կետադրության հարցում:

Ասվածը հաստատվում է հաջորդ օրինակով ևս: Ըստ նույն լեզվաբանի՝ «կոչականը, որպես նախադասության կազմի մեջ մտնող միավոր, որը միաժամանակ խոսողի վերաբերմունքն է արտահայտում խոսակցի և խոսքի նկատմամբ, առաջին հերթին օժտված է առանձնահատուկ հնչերանգով: Բառը կոչական է դառնում հնչերանգի միջոցով: [...] Ըստ իրենց ռճախմաստային արտահայտչական բազմազանության ու շարադասության՝ կոչականներն ունեն հնչերանգային հարուստ նրբերանգներ. մի դեպքում դրանք արտաբերվում են ուժեղ, բարձրացող հնչերանգով, մի այլ դեպքում՝ մեղմ կամ թույլ: Կոչականի հնչերանգը պայմանավորված է նաև նախադասությունների հնչերանգային տեսակով, ինչպես նաև կոչականներ անվանող անձերի դիրքով, պաշտոնով, խոսակիցների մակարդակով, տրամադրությամբ, միջավայրով և այլն»<sup>9</sup>: Թվարկվող այս բոլոր տարբերությունները, սակայն, ամենևին չեն մտածվում կետադրության հարցի շրջանակում. «Կոչականի կետադրությունը բարդ չէ. այն տրոհվում է ստորակետով և իր վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է կրում, իսկ եթե կոչականն ունենում է նախադաս որոշիչ, շեշտն անցնում է այդ որոշիչ վրա»<sup>10</sup>: Իմաստային-ռճակական տարբերությունների թվարկման, իսկ կետադրության մեջ դրանց համահարթեցման նույն

<sup>8</sup> Տե՛ս Ս. Վ. Ղուկասյան, Հնչերանգի որոշ ըմբռնումներ ժամանակակից լեզվաբանության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1999, №1 (97), էջ 176:

<sup>9</sup> Ս. Դաբբինյան, նշվ. աշխ., էջ 193:

<sup>10</sup> Նույն տեղում:

մոտեցումն է նաև հրամայական եղանակի բայաձևերի առնչությամբ<sup>11</sup> :

Առհասարակ լեզվաբանական մոտեցումների վերլուծության՝ ուշագրավ բացահայտումներ խոստացող ուղղություն է այն հարցի ուսումնասիրությունը, թե *ինչպես են հայ լեզվաբաններն արձարծում արտաբերականագիտական մակարդակների առկայության հարցը*: Այս հարցը բաղադրիչ հարց է հայաստանյան լեզվաբանության մեջ լեզվաբանական մակարդակների բնորոշման և դրանց հետ կետադրության խնդրի առնչման տեսածիրում: Ինչպես տեսանք նախորդիվ, նույնպիսի բաղադրիչ հարց է *կետադրության հարցում ձևաբանությունն ու շարահյուսությունը հակադրելու մոտեցումը՝ խոսքայինի հետ շարահյուսականի նույնացմամբ*:

Այսպես՝ ավելելով, որ հայերենում հնչերանգը չի կարող փոխարինել ստորոգմանը, Է. Աղայանն անդրադառնում է Գ. Ջահուկյանի այն տեսակետին, որ «ստորոգման համար հնարավոր» է նաև հնչերանգը՝ «որպես արտահայտության միջոց», և գրում է. «Բայց պետք է նկատի ունենալ, նախ՝ որ այդ հոդվածում նա քննության է առնում ստորոգումը ընդհանուր լեզվաբանական մոտեցումով, և երկրորդ՝ *ոչ թե մասնավորապես քերականագիտական, այլ ավելի լայն՝ խոսքի լեզվաբանության հայեցակետից, այսինքն լեզվաբանության այժմ բռնող զարգացումն ապրող մի շատ ավելի լայն բնագավառի, որի մեջ միավորվում են թե՛ լեզվաբանական, թե՛ տրամաբանական և թե՛ հոգեբանական մոտեցումները*»<sup>12</sup> (ընդգծումն իմն է- Մ. Կ.):

Լեզվաբանական համակարգերի շրջանակների մատնանշման և լեզվաբանական այս կամ այն մոտեցման համատեքստայնացման այս օրինակը, անշուշտ, լայնախոհության օրինակ է, թեպետ նաև վիճարկելի է: Որպես ժամանակի լեզվաբանության զարգացումների հետ հարաբերվելու օրինակ՝ լեզվի ուսումնասիրման մակարդակների մասին է. Աղայանի մոտեցումները<sup>13</sup> սույն հոդվածի համատեքստում հիշատակելի են ոչ միայն իրենց որոշակի բովանդակությամբ, այլև *որպես լեզվաբանական ավանդույթի մի շեմ*, որտեղից ավելի հեշտ է անցում կատարել ավելի համարձակ հարցադրումների: Այնինչ, ինչպես այլ հետազոտողներ<sup>14</sup> ևս նկատում են, հայ լեզվաբանության մեջ մշակված այն տեսությունները (Մ. Աբեղյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի), որոնց զարգացումը թույլ կտար արդի լեզվաբանության հետ համաքայլ զարգացնել հայոց լեզվի դիտարկման հայեցակետերը, էթե չեն անտեսվում, ապա մնում են միայն չքննարկվող հոդվածներում:

Այդուամենայնիվ, ինչ-որ կերպ կիրառվո՞ւմ են արդյոք արդի լեզվաբանության

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 74-77:

<sup>12</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 129:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Մ. Աբրահամյան, Էդուարդ Աղայանի ներդրումը տեսական լեզվաբանության և նրա ուսուցման մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», №2, 2014, էջ 15-22, **նույնի՝** Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Եր., 2023, էջ 190-197:

<sup>14</sup> Տե՛ս, օրինակ, Բ. Ներսիսյան, Մանուկ Աբեղյանը գրական արևելահայերենի քերականության տեսաբան, «Բանբեր Երևանի համալսարանի». Բանասիրություն, V. 3, 2024, էջ 67-78:

մտտեցումները հայ լեզվաբանների ուսումնասիրություններում այսօր:

Պարզ համացանցային որոնումն էլ բավական է պնդում անելու համար, որ, օրինակ, մեզ հետաքրքրող բնագավառը՝ գործաբանությունը, հայ հեղինակների կողմից ուշադրության է արժանանում հիմնականում տարբեր օտար լեզուների վերաբերող հետազոտություններում: Բայցևայնպես, հասկացությունը որոշ դեպքերում կիրառվում է նաև հայոց լեզվին անդրադարձող լեզվաբանական տեքստերում, ուստի ուսումնասիրության հաջորդ կանգառն այն հարցն է, թե ինչպես է այն մեկնաբանվում, և «լիագորությունների» ինչ ծավալ է դրան վերագրվում:

Մտորն ներկայացվող մեջբերումները գործաբանության վկայակոչման օրինակներից են:

Այսպես՝ Շ. Գևորգյանը նկատում է. «Մանուկ Աբեղյանը եղանակը բնութագրում է որպես «խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ»: *Այս սահմանման մեջ գիտակցվում է խոսողի դերը* (ընդգծումն իմն է - Մ. Կ.) և այն, որ խոսքը հարաբերության մասին է»<sup>15</sup>: Հետաքրքիր է, որ մետալեզվաբանական բնույթի այս նկատառմանը հաջորդող էջերում խոսողի դերը հեշտությամբ անտեսվում է: Կրկնենք մեկ անգամ էլ. ոչ թե հերքվում, այլ անտեսվում է: Հրամայական եղանակի կիրառությանը վերաբերող նույն հոդվածում մեջբերելով Գ. Ջահուկյանի դիտարկումը հրամայական եղանակի բազմիմաստության մասին (այն արտահայտում է գործողության կատարման հրաման, հորդոր, խնդրանք, թելադրանք, կոչ, ողջույն, զգուշացում, պատվեր, պատվիրան, պատգամ և այլն)<sup>16</sup> Շուշանիկ Գևորգյանը հաջորդ էջում գրում է. «Յուրաքանչյուր նախադասության մեջ առկա է խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ: Հրամայական նախադասությունների հաղորդակցական գործառույթը *հրաման կամ կարգադրություն* (ընդգծումն իմն է-Մ. Կ.) արտահայտելն է»<sup>17</sup>: Նշանակությունների՝ բազմաթիվ լեզվաբանական տեքստերի բնորոշ այս սղումից բացի, առնվազն տարակուսելի է, որ այս բնութագրումներին հետևյալ պնդումն է հաջորդում. «Գործաբանական տեսանկյունից հրամայական կառույցները դրսևորում են տարաբնույթ իմաստներ՝ *սկսած ամենամեղմ քաղաքավարի խնդրանքից մինչև կտրուկ ու վճռական կարգադրություն* [...]»<sup>18</sup> (ընդգծումն իմն է-Մ. Կ.): Պնդումների նման հաջորդականությունը նշանակում է, որ «հաղորդակցական գործառույթը» և «գործաբանական տեսանկյունը» կա՛մ հակադրվում են, կա՛մ դրանց նշանակություններն առնվազն մտածված չեն:

<sup>15</sup> Շ. Գևորգյան, Հրամայական եղանակի կիրառությունը, «Կանթեղ: Գիտական հոդվածներ», գլխ. խմբ.՝ Ա. Սաստրյան, 2 (2016), էջ 43:

<sup>16</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 272: Մեջբերվում է ըստ Շ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>17</sup> Շ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 45:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 46:

Հնչեքանգը, որը, ինչպես նկատեցինք վերևում, կետադրության հարցի դիտարկման առանցքային հասկացություններից է, նաև համարվում է ըստ *հաղորդակցման նպատակի* չորս տեսակի (պատմողական, հարցական, հրամայական և բացականչական) բաժանվող նախադասությունների հիմնական տարբերակիչը: Ըստ մեկնաբանություններից մեկի՝ այն «բոլոր պարագաներում պարտադիր քերականական հատկանիշ է այս նախադասությունները զանազանելու համար»<sup>19</sup>: *Հաղորդակցման նպատակն* իբրև նախադասությունների դասակարգման հիմք ընդունելը, սակայն, հայաստանյան լեզվաբանության մեջ միակ մոտեցումը չէ: Որպես նախադասությունների տվյալ դասակարգման հիմք՝ հաճախ նշվում է բնույթը: Ս. Աբրահամյանը, օրինակ, նկատում է, որ քանի որ «նախադասության տրամաբանական կողմի և վերջինիս ձևավորման լեզվական-քերականական միջոցների միջև միշտ չէ, որ գոյություն ունի ուղղագիծ համապատասխանություն»<sup>20</sup>, ուստի ճիշտ է տվյալ դասակարգման հիմք համարել ոչ թե խոսողի նպատակը, այլ նախադասության բնույթը: Նա նաև հավելյալ փաստարկ է բերում. «Նախադասությունների տիպերը շարահյուսության ուսումնասիրման օբյեկտ պետք է լինեն ամենից առաջ իրենց կառուցվածքային, արտահայտության հատկանիշներով (այդպիսին է հենց նախադասության բնույթը) և ապա միայն տրամաբանական-նպատակային կողմով» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): Այստեղ գործ ունենք շարահյուսության՝ որպես լեզվաբանական կատեգորիայի լիագործությունների սահմանափակության գիտակցման հետ, և կարելի է տեսնել «հաղորդակցման նպատակ» եզրի ներառման համար համապատասխան լեզվաբանական մակարդակի բացակայության խնդիրը: Չնայած այդ խնդրի առկայությանը՝ շարահյուսությունն իբրև «հաշվարկման համատեքստ» գիտակցող այս պնդումը, թերևս, ավելի ճշգրիտ է իր տրամաբանական ընթացքի մեջ, քան այն մեկնաբանությունը, որը հաղորդակցման նպատակի բաժանարարը ներառում է փաստորեն իբրև շարահյուսական կատեգորիա՝ առանց բավարար չափով հղացականացնելու այս փոխառումը:

Սակայն այս տրամաբանությունն էլ սեփական տարակուսելի կողմերն ունի: Լեզվաբանը ստորոգյալի բնույթ ասելով նկատի ունի «բայաձևի եղանակային հատկանիշները և բաղադրյալ ստորոգյալի հանգույցի առանձնահատկությունն այդ նույն տեսակետից» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): «Պարզ ստորոգյալի բնույթը կարևոր նշանակություն ունի նախադասության բնույթի որոշման հարցում, քանի որ այն արտահայտվում է բայի եղանակային ձևերով,

<sup>19</sup> Ս. Բաղդասյան, Պարզ նախադասության դրսևորումները հայերենի առանձնություն և ասացվածքներում՝ ըստ հաղորդակցական նպատակի, «Լեզու և խոսք -2»: Գիտական հոդվածների ժողովածու (Էլ. հրապարակում).– Եր., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2020, էջ 3:

<sup>20</sup> Ս. Աբրահամյան, Նախադասության տեսակներն ըստ բնույթի ժամանակակից հայերենում, էջ 86, [https://arar.sci.am/Content/196519/file\\_0.pdf](https://arar.sci.am/Content/196519/file_0.pdf) (18.08.23): Այսուհետև սույն աշխատանքին հղում անելիս տեքստում կնշվի՝ Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», այնուհետև՝ էջը:

իսկ վերջիններին մեջ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 86): Բայի եղանակային ձևերի հետ նախադասության բնույթի համապատասխանությունը նախադասության բնույթի որոշման հարցում իբրև փաստարկ դիտարկելն առնվազն «կարճ միացման» տպավորություն է թողնում, թեկուզ հեղինակը նկատում է, որ այդ համապատասխանությունը զգալի է, բայց ոչ լրիվ (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 87): Խնդիրն այստեղ այն է, որ այս տրամաբանությունն անբացահայտ կերպով բայի եղանակային ձևերին առաջնայություն է վերագրում խոսողի մտադրությունների, մոդալության նկատմամբ, մինչդեռ բայաձևերը *վերաբերմունքի արտահայտիչներ են և ոչ թե պայմանավորողներ*: Այսպես կարելի է հակաճառել բերված տեսակետին՝ դիմելով հենց հեղինակի մեկնաբանություններին և անգամ չանցնելով լեզվի կառուցաբանական ընկալման դիրքի: Ս. Աբրահամյանի մեկնաբանությունը, ինչպես նաև այլ լեզվաբանների նույնաբնույթ մեկնաբանությունները, այսպիսով, կարևոր է դիտարկել նաև դրանց բնորոշ մինչկառուցաբանական տրամաբանությամբ՝ բացահայտելու համար պակասող օղակները կամ այլ հանգամանքներ հենց այդ տրամաբանության մեջ:

Ըստ լեզվաբանի՝ բայի եղանակային ձևերի և նախադասությունների բնույթների միջև անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ առկա է նախադասության բնույթի ձևավորման ևս մեկ կարևոր գործոն՝ հնչերանգը (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 87): Հրամայական եղանակի անվանումը, սակայն, լեզվաբանը զգալի չափով պայմանական է համարում (տե՛ս Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 106)՝ նշելով. «Հրամայական նախադասությունների շեշտը գրավոր խոսքի մեջ ոչ միշտ է անհրաժեշտ, և դա պայմանավորված է նախադասության երանգային նրբին հատկանիշներով» (Ս. Աբրահամյան, «Նախ. տես.», 110):

Ուշագրավ է, որ խորհրդային տարիներին առկա այս որոշ վերապահությունը գրեթե անհետանում է հետխորհրդային Հայաստանում ստեղծված լեզվաբանական տեքստերում: Թե հնարավոր է արդյոք, որ դա կապ ունի անկախության տարիներին տեղի ունեցած կրթական փոփոխությունների հետ, ուսումնասիրելու արժանի իրողություն է: Գուցե այստեղ դեր ունի այն հանգամանքը, որ լեզվական կանոնները պիտի հնարավորինս սպառիչ լինեին՝ քնությունների թեսթային համակարգին համապատասխանելու համար, իսկ լեզվաբանական ուսումնասիրությունները հիմնականում անբաժան էին դասավանդման պրակտիկաներից. գրվում և տարածվում էին հիմնականում դասավանդման նպատակով: Այսպիսով՝ միանգամայն հնարավոր է, որ իմաստային նրբերանգների անտեսումները պայմանավորված լինեն նաև նշված գործոններով:

Այսպես. «Բայի եղանակի քերականական կարգը ցույց է տալիս գործողության և իրականության հարաբերությունը, ինչպես նաև գործողության կամ եղելության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը»<sup>21</sup>, - ասվում է բուհական դասավանդման համար նախատեսված գրքում: Սահմանումը, սակայն, չի լրացվում մեկնաբանություններով: Լեզվական սահմանումը ուսուցման պարզեցված տրամաբանության մեջ արագորեն վերածվում է կետադրական կանոնի՝ անմիջապես միտվելով դրա պարզ կիրառմանը. «Առողջության նշաններն են շեշտը, հարցականը, բացականչականը՝ (մեջբերման կետադրությունը մեջբերվող հեղինակին է - Մ. Կ.): Նրանցով նշվում են հնչման ելևէջները՝ համապատասխան վերաբերմունք, հաղորդակցային երանգ արտահայտելու համար»<sup>22</sup>: Եվ եթե անգամ կանոնի մակարդակում որոշ փոքր վերապահում երբեմն լինում է (օրինակ՝ «Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, պատվեր, հորդոր, խնդրանք և արտասանվում են հատուկ հնչերանգով, որը գրավոր լեզվում *տնվորաբար* (ընդգծումն իմն է - Մ. Կ.) նշվում է շեշտով»<sup>23</sup>), ապա կիրառության վերահսկվող ասպարեզներում (քննություններ, դպրոցական դասագրքերի տեքստերի և առաջադրանքների լեզու) հիմնականում դա էլ է անհետանում:

Կարող ենք, իհարկե, հարցեր չտալ կանոնների հաստատման այս խորքային պատճառների ու նուրբ ընթացքների մասին, սակայն դասագրքերի նշանակությունը լեզվի կանոնավորման գործում, միևնույն է, չենք կարող չտեսնել: Ինչպես նկատում է Չ. Աղաջանյանը. «Լեզվական ցանկացած օրինաչափություն, ցանկացած շեղում ու ցանկացած միտում կանոն է դառնում, եթե ներառվում է դպրոցական դասագրքերում. նորմատիվ քերականությունն ամենից առաջ դպրոցական դասագիրքն է: Բնականաբար հասկանալի է՝ հայագիտական տարբեր աղբյուրներում եղած կարծիքների՝ տեսակետների վերհանումից, լեզվաշինության ընդհանուր պատկերը ներկայացնելուց հետո դասագրքերի միջոցով անհրաժեշտ է պարզել, թե դրանք ինչ չափով են նպաստել մեր լեզվի նորմավորմանը [...]»<sup>24</sup>:

Այսպիսով՝ մեզ հուզող հարցը քննարկելու ուղղություն է նախ հայաստանյան լեզվաբանության պատմությունն ու արդի վիճակը որպես դրա համատեքստ դիտարկելը: Թեև ԳԱԱ լեզվի ինստիտուտի կայքում խոսվում է հայ լեզվաբանների նշանակալից ավանդի մասին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են «լեզվի և մտածողության, տրամաբանական ու լեզվաբանական **կատեգորիաների** (ընդգծումը Լ. Ն.-ի), լեզվի և արտալեզվական իրականության

<sup>21</sup> Լ. Եգեկյան, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 291:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 391:

<sup>23</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն: Ուս. ձեռնարկ հայկ. բանասիր. ֆակ. համար, Եր., Երևանի համալս. հրատ., 2004, էջ 311:

<sup>24</sup> Չ. Աղաջանյան, Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում, Եր., Նաիրի, 2019, էջ 87:

փոխհարաբերությունը, լեզվական ու արտալեզվական աշխարհների ընկալման սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների դիալեկտիկան, աշխարհի լեզվական և հասկացական կադապարների ստեղծումը, լեզվական նշանի իմացաբանական հարցերը, լեզվական նշանի էության բացահայտումը, լեզվական գիտակցության և լեզվական հաղորդակցման հիմնախնդիրները, ընդհանրական լեզվաբանական կադապարի ստեղծումը և այլն»<sup>25</sup>, սակայն հայերենին վերաբերող բազմաթիվ կարևոր, ավելին՝ գործնական նշանակություն ունեցող հարցեր դեռևս մնում են չմտածված կամ առնվազն չլուծված: Թեև տարբեր ձեռնարկներում կետադրության տեսական հիմքեր են նշվում, օրինակ՝ տրամաբանական-իմաստային, շարահյուսական և հնչերանգային հայեցակետերը<sup>26</sup>, դրանց առնչությունները բավարար խորությամբ չեն մտածվում: Խնդիր է առնվազն այն, որ այդ կողմնորոշիչներն իրենք չեն բնութագրվում լեզվաբանական ավելի ընդգրկուն հղացքների տեսակետից, որոնք թույլ կտային առավել համակարգային և հիմնավոր վերլուծել կետադրության հարցերը:

Յու. Ավետիսյանը, օրինակ, անդրադարձ կատարելով հայաստանյան լեզվաբանության մեջ կետադրության զարգացման պատմությանը և փորձելով հղկել տարբեր ուսումնասիրություններում առաջադրվող մի շարք մոտեցումներ, ընդունում է, որ կետադրությունը պայմանավորող սկզբունքները երեքն են, ապա հավելում է. «Այդ պայմանավորվածությունը իրացվում է հետևյալ տարբերակներով՝

ա) ստորադասական հարաբերությամբ, որտեղ սովորաբար գերիշխող է դառնում տրամաբանական-իմաստային հիմունքը, բ) հավասարազոր իրավունքներով, որտեղ ակտիվանում է շարահյուսական հիմունքի դերը, և գ) առանձնաբար, որը գործնականում սահմանափակ դրսևորումներ ունի»<sup>27</sup>:

Այս և նման այլ մոտեցումները, չնայած ճշգրտման, գործածության շրջանակների սահմանափակման ու հղկման, հետևաբար որոշակիացման փորձին, դեռևս կարիք ունեն ռացիոնալացման ավելի հետևողական ջանքի: Ռացիոնալացում, որը լեզվաբաններին թույլ կտա տեսական առավել ամուր դիրքերից պնդումներ անել և *հակասություններ, պակասություններ* կամ *բաց հարցեր* նկատել նաև հենց իրենց ստեղծած կամ նկարագրած համակարգերում: Ինչպես կարելի է պնդել լեզվաբանական գրականության մանրակրկիտ ընթերցման արդյունքում, չլուծվող խնդիրները, հակասություններն ու պակասությունները հաճախ են անտեսվում՝ չխանգարելով դյուրին եզրահանգումներ անելուն: Օրինակ՝ «Պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ և այլն), զեկուցում-

<sup>25</sup> Լ. **Հովսեփյան**, Լեզվաբանությունը Հայաստանում, <http://language.sci.am/hy/linguistics/lezvabanowtyowne-hayastanowm.html> (17.08.23):

<sup>26</sup> Տե՛ս, օրինակ, **Գ. Զահուկյան**, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր», 1990, 7(75), **Վ. Ա. Մահակյան**, **Վ. Վ. Մահակյան**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Եր., 2010, **Յու. Ավետիսյան**, Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ, Եր., 2019:

<sup>27</sup> **Յու. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 24:

ներում և այլ կարգի փաստաթղթերում՝ դիմում-կոչականի կամ դրան նախորդող լրացման վրա կարելի է շեշտ չդնել՝ շարադրանքը ավելորդ նշաններով չծանրաբեռնելու համար» (Յու. Ավետիսյան, 169): Ինչպե՞ս է պատահում, որ պաշտոնական գրագրություններում կոչականի շեշտն ավելորդ նշան է դառնում, իսկ, օրինակ, սոցանցային գրառման մեջ, դասագրքում կամ այլուր՝ ոչ, չի բացատրվում: Ավելորդ չէ նշել նաև, որ նույն հեղինակը դեմ է արտահայտվում հրամայական եղանակի բայաձևերի պարտադիր շեշտմանը՝ նկատելով, որ «շեշտի գործածությունը և՛ տրամաբանական-իմաստային, և՛ հնչերանգային առումներով հաճախ բնավ էլ պարտադրական չէ» (Յու. Ավետիսյան, 41):

Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ կետադրական այս կամ այն կանոնը քննադատելիս լեզվաբանները, այդուամենայնիվ, չեն խիզախում մինչև վերջ զարգացնելու իրենց սկզբունքները՝ տեղի տալով լեզվաբանական ավանդույթների առաջ և բավարարվելով որոշ «կոսմետիկ» փոփոխություններով: Իսկ այդ ավանդույթները խախտելուց չվախեցող հարցը կարող էր հասնել ընդհուպ նրան, թե կարող է արդյոք գերազանցապես «շարահյուսական օրենքների և օրինաչափությունների վրա» (Յ. Ավետիսյան, 16) հենվող կետադրության քննադատությունը դիմել լեզվաբանական այլ բնագավառների՝ հարցերը մինչև վերջ արելու, «ոսկե միջիններով» չգոհանալու և նոր մոտեցումներ օրինավորելու համար: Այդպիսի «սրված հարց» կարող է լինել, օրինակ, այն, թե ի՞նչ աստիճանի վերափոխություններ կունենանք հայերենի կետադրության մեջ, եթե շարահյուսական կողմնորոշիչը փոխարինենք կամ առնվազն ավելի վստահորեն լրացնենք *գործարանական կարողության* (pragmatic competence) կողմնորոշիչով: Այս և այլ հարցեր պետք է ուսումնասիրվեն առնվազն որպես տեսական քննարկման նյութ՝ քերականական իրողություններին ուղղված հայացքը թարմացնելու նպատակով:

**МАРИАМ КАРАПЕТЯН - Использование армянского ударения. Лингвистические традиции Армении как контекст пунктуации.** - В статье обсуждается использование ударения в письменном армянском языке, в частности, в отношении пунктуации глагольных форм повелительного наклонения, а также обращения. Практические примеры использования обращения и глаголов повелительного наклонения ставят вопрос относительно того ставить ударение или нет. В статье утверждается, что избегание ударения во многих случаях не является признаком лени или незнания грамматического правила, а необходимость понимания текущих примеров использования и тенденций направляют, в частности, в сторону одной из областей лингвистики - прагматики. Один из вопросов, лежащих в основе статьи, заключается в следующем: может ли концептуализация прагматики, созданной Чарльзом Моррисом в 1930-х годах и развившейся в качестве отрасли лингвистики в 1970-х годах, сократить «историческую дистанцию», то есть привести к переосмыслению накопленных традиций лингвистики в Армении. Соответственно, одной из основных целей статьи – ставить вопрос о прагматическом потенциале знаков препинания. Преследуя эту цель, ставится вопрос, не пора ли изменить правила постановки ударения? Правила обязательного ударения также рассматриваются в отношении других лингвистических уровней, таких как морфология, синтаксис, семантика.



**Ключевые слова:** *противопоставление языка и речи, использование ударения, пунктуация повелительного наклонения, пунктуация обращения, взаимосвязь лингвистических уровней, прагматический потенциал ударения*

**MARIAM KARAPETYAN – *The Use of the Armenian Stress. Linguistic Traditions of Armenia as a Context of Punctuation.*** – The article discusses the use of stress in the written Armenian, in particular, with regard to punctuation of imperative verb forms, as well as vocatives. Practical examples of the use of vocatives and imperative verbs raise the question of whether to stress or not. The article argues that avoiding stress in many cases is not a sign of laziness or ignorance of a grammatical rule, and that the need to understand current usage examples and trends leads particularly in the direction of one of the fields of linguistics - pragmatics. One of the questions underlying the article is whether the conceptualization of pragmatics, created by Charles Morris in 1930s and developed as a branch of linguistics in the 1970s, can reduce the “historical distance”, that is, lead to a rethinking of the accumulated traditions of linguistics in Armenia. Accordingly, one of the main goals of the article is to raise the question of the pragmatic potential of punctuation marks. In pursuit of this goal, the question is raised, isn't it time to change the rules of stress?

The rules of obligatory stress are also considered in relation to other linguistic levels, such as morphology, syntax, semantics.

**Key words:** *the opposition of language and speech, the use of stress, punctuation of the imperative mood, punctuation of vocatives, the relationship of linguistic levels, the pragmatic potential of stress*

## ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆՈՒՄ

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ\*   
Երևանի պետական համալսարան

Հնագույն քաղաքակրթություններում չափման միավորների հիմքում ընկած են եղել նախ և առաջ մարդու մարմնի մասերը: Տարբեր երկրների, ժողովուրդների առևտրա-տնտեսական, մշակութային, քաղաքական տնական շփումները նպաստել են նաև փոխառություններին, ուստի զարմանալի չէ, որ տարբեր, հաճախ անգամ ոչ ցեղակից լեզուներում գոյություն ունեն նույն չափման միավորները: Մարմնի մասերին առնչվող այդ միավորների մի մասն այսօր դուրս է եկել գործածությունից (ինչպես, օրինակ, հայերենի կանգունը կամ ռուսերենի *локоть*-ը), սակայն մեծ մասը շարունակում է գործածվել առօրյա խոսքում, կենցաղում, հանդիպում է դարձվածքների, կայուն բառակապակցությունների կազմում:

Հոդվածում առաջին անգամ զուգադրական քննության են ենթարկվել մարմնի մասերին առնչվող չափման միավորները հայերենում, ռուսերենում և բուլղարերենում: Աշխատանքի նպատակն է վեր հանել երեք լեզուների ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները: Այդ տարբերությունները երբեմն խնդիր են դառնում մի լեզվից մյուսը թարգմանության ժամանակ, հատկապես երբ այս կամ այն չափման միավորը հանդիպում է դարձվածքի կազմում:

**Բանալի բառեր** - *ժողովրդական չափագիտություն, չափման միավորներ, ոտնաչափ, պտղունց, թիզ, սոմատիկ դարձվածքների թարգմանություն*

Չափման միավորների մասին առաջին տեղեկությունները մեզ են հասել մ.թ.ա. 3-4 հազարամյակից. գոյություն են ունեցել եգիպտական, հին հրեական, հին հունական, հին հռոմեական և այլ չափման համակարգեր: Չափագիտության պատմության նկատմամբ գիտական հետաքրքրությունը ձևավորվել է հիմնականում 19-20-րդ դդ.: Տարբեր լեզուներում չափման հնագույն միավորների մա-

\* **Արևիկ Քամալյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

**Արևիկ Կամալյան** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ

**Aravik Kamalyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ [a.kamalyan@ysu.am](mailto:a.kamalyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0004-1721-3106>.



սին բավականին ուսումնասիրություններ, աշխատություններ, հանրագիտական բառարաններ են գրվել<sup>1</sup>: Բոլորովին վերջերս բավականին մեծ աշխատանք է կատարել հետազոտողների մի խումբ՝ ուսումնասիրելով մարմնի մասերով արտահայտված չափման միավորները 186 մշակույթներում և էթնիկ խմբերում<sup>2</sup>:

Հայերենի համար օգտվել ենք Շ. Մանանդյանի<sup>3</sup>, Ստ. Ագոնցի<sup>4</sup> աշխատություններից, ինչպես նաև ստուգաբանական, բացատրական, դարձվածաբանական բառարաններից<sup>5</sup>: Ռուսերենի համար օգտվել ենք Լ. Մոլչանովայի<sup>6</sup>, Ն. Շոսայինի<sup>7</sup> աշխատություններից, հանրագիտական, բացատրական, դարձվածաբանական, ստուգաբանական բառարաններից<sup>8</sup>: Բուլղարերենում չափման միավորների մասին տվյալները վերցրել ենք Խ. Վակարելսկու «Етнография на България» աշխատությունից<sup>9</sup>, Վ. Շառլանովայի «Народна метрология» մենագրությունից<sup>10</sup>, Դ. Կոենի հոդվածաշարից<sup>11</sup>, ստուգաբանական, բացատրական և դարձվածաբանական բառարաններից<sup>12</sup>:

<sup>1</sup> Չափման հնագույն միավորների մասին տեղեկությունների համար օգտվել ենք Jewish Encyclopedia, 1906, Weights and measures բաժնից; A Dictionary of Greek and Roman Antiquities. 1890, 3 ed. (<https://shorturl.at/eksJM>). The Brill Dictionary of Ancient Greek. 2015; A Greek–English Lexicon (LSJ) Oxford University Press. (<https://rb.gy/trl371>); Dilke, Oswald Ashton Wentworth. Mathematics and measurement. University of California Press. էջ 23–28 (<https://rb.gy/ggmy0u>); Словарь библейских образов. [Справочник] Под общ. ред. Лиланда Райкена, Джеймса Уилхойта, Тремпера Лонгмана III; [пер.: Скороходов Б.А., Рыбакова О.А.]. - Санкт-Петербург : Библия для всех, 2005, 1423 ст.:

<sup>2</sup> Աշխատանքի արդյունքները տպագրվել են Science ամսագրում՝ Science, 1 June, 2023, Vol 380, Issue 6648, էջ 948–954. Body-based units of measure in cultural evolution | Science:

<sup>3</sup> Տե՛ս **Շ. Մանանդյան**, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, ՀՄԽՀ ԼՈՒՍԾՈՂՎՈՄՍՍ; Մանկավարժական ինստիտուտ: Հրատարակչություն Մելքոնյան ֆոնդի: Եր., 1980 (<https://rb.gy/3escl4>):

<sup>4</sup> Տե՛ս **Ստ. Ագոնց**, Հասարակախօսութիւն աշխարհագրութեան, 1817, Վենետիկ, Գրուխ Դ, Պէսպէս չափք այլևայլ ազգաց, 15, 12–31 («Հասարակախօսութիւն աշխարհագրութեան. Endangered Archives Programme»):

<sup>5</sup> Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան (ՀԱԲ), ԵՊՀ հրատ., 1926–1935 (<https://rb.gy/ohpaoc>): Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), հայր **Գարրիէլ Աւետիքեան**, հայր **Խաչատուր Սիրմելեան**, հայր **Մկրտիչ Աւգերեան**, հ. 1, 2, Վենետիկ, 1836–1837 (<https://rb.gy/sfts6e>): **Ստ. Սալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944–1945 լն:

<sup>6</sup> Տե՛ս **Մոլչանова Լ.Ա.** Народная метрология (к истории народных мер длины). Минск, 1973, 84 էջ:

<sup>7</sup> Տե՛ս **Шостьин Н.А.** Очерки истории русской метрологии. XI - начало XX века. М., 1975, 272 էջ:

<sup>8</sup> Տե՛ս Библейская энциклопедия архимандрита Никифора (БЭАН). Вып. 1-4, М., 1891—1892 (<https://rb.gy/39nxf7>); Еврейская энциклопедия Брокгауза и Ефрона (ЕЭБЕ). СПб., 1908–1913 (<https://rb.gy/339rb6>):

<sup>9</sup> Տե՛ս **Вакарелски Х.** Етнография на България. София, 1977:

<sup>10</sup> Տե՛ս **Шарланова В.** Народна метрология. София, 1999, 164 էջ:

<sup>11</sup> Տե՛ս **Коен Д.** За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. — Архивен преглед, 1986, № 1, 42–59; За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. Продължение от свезка 1. — Архивен преглед, 1986, № 2, 73–85; За предмета на историческата метрология и някои по-разпространени стари мерки за дължина и тегло в България и българските земи. Продължение от свезка 2. — Архивен преглед, 1986, № 3, 54–69. <http://surl.li/pynlk>

<sup>12</sup> Տե՛ս Речник на българския език (гълковен, правописен, словоформен), Речник на българския език (онлайн). <https://ibl.bas.bg/rbe/>; Речник на съвременния български книжовен език (онлайн). <https://>

Չափման հնագույն միավորների մասին բավականին հետաքրքիր տեղեկություններ կարելի է ստանալ նաև Աստվածաշնչի՝ տարբեր լեզուներով թարգմանությունների գուգադրական քննությունից<sup>13</sup>: Աստվածաշնչի թարգմանությունը հսկայական ազդեցություն է թողել բոլոր քրիստոնյա ժողովուրդների լեզվի և առհասարակ մշակույթի վրա: Բազմաթիվ փոխառություններից բացի շատ են նաև բառացի պատճենումները, իմաստափոխության դեպքերը (երբ բառը նոր իմաստ է ստանում թարգմանության լեզվի ազդեցությամբ):

Մարմնի մասերով չափման միավորների մեջ կան ինչպես քիչ թե շատ հստակ չափ ցույց տվողներ (*ոտնաչափ, թիզ*), այնպես էլ խիստ մոտավոր միավորներ (*աչքաչափ*): Չասկանալի է, որ այդ չափման միավորները այսօրվա գիտության տեսանկյունից խիստ ճշգրիտ չէին. օրինակ՝ տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում արմունկ/արմնկաչափը հավասար է եղել 445-528 մմ<sup>14</sup>: Նշենք, որ հողվածում ընդգրկել ենք նաև այնպիսի միավորներ, որոնք պայմանականորեն կարելի է համարել չափման միավոր. դրանք սովորաբար զուտ կենցաղում մինչ օրս էլ կիրառվող միավորներ են, բնորոշ են այսպես կոչված ժողովրդական չափագիտությանը (օր.՝ *փոր (մի փոր հաց)*):

Որոշ չափման միավորներ քննվող լեզուներում ունեն նույն բառով համարժեքներ (օր.՝ *պտղունց - щепотка - щипка*), որոշ դեպքերում նույն չափման միավորը տարբեր լեզուներում արտահայտված է մարմնի տարբեր մասերով (*պորտ-колено-коляно*), կան նաև չափման միավորներ, որոնց բացարձակ համարժեքը բացակայում է լեզուներից մեկում կամ երկուսում:

Նախ դիտարկենք չափման այն միավորները, որոնք ունեն նույն բառով համարժեք գոնե երկու լեզվում:

Դեռ հնագույն ժամանակներից ամենատարածված չափման միավորներից է **արմունկը** (լատ. *cubitum*, հուն. *πῦγος (պեխտիս)*): Տարբեր դարաշրջաններում ու տարբեր մշակույթներում այն տատանվել է 450-528 մմ միջև<sup>15</sup>:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
<i>արմունկ (գրք.՝ արմուկն), արմնկաչափ կամ արմկաչափ</i>	ЛОКОТЬ	ЛАКЪТ

ՆՀԲ-ում արմնկաչափը մի արմունկի չափն է, «որ է կանգուն փոքր» (հտ. 1, ցուցակ 1, էջ 370): Դատելով բառարաններից՝ *արմնկաչափ/արմկաչափ* բառը («լայնություն պարսպին գուրիդում է, որ է արմնկաչափ») հայերենում սկսել է կիրառվել

ibl.bas.bg/rbe/; Български етимологичен речник. София, 2007-2010, тт. 1-8 (<https://ibl.bas.bg/ber/>); Български фрази и изрази:

<sup>13</sup> Համեմատել ենք Աստվածաշնչի հայերեն (Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ երբայական եւ յունական բնագրաց (Վիեննա, Սմերիկեան Ընկերութիւն Գրոց Սրբոց, 1929) Classical Armenian Bible [1895 Constantinople] - English Concordance [KJV], ռուսերեն (Библия. Синодальный перевод на русском языке.) և բուլղարերեն (БИБЛИЯ) թարգմանությունները:

<sup>14</sup> Տե՛ս ԵՅԵ/Меры и вес:

<sup>15</sup> Տե՛ս A Dictionary of Greek and Roman Antiquities (1890) (<https://rb.gy/1v1fsg>); ԵՅԵ/Меры и вес:

միջին հայերենի շրջանից<sup>16</sup>, իսկ մինչ այդ cubitum-ը թարգմանել են *կանգուն*: Ըստ ՀԱԲ-ի՝ հին կանգունը արմունկից մինչև մատների ծայրը երկարությունն էր, իսկ արդի կանգունը դրա կրկնակին է՝ արշինը. Աճառյանը նշում է նաև, որ բուն հին հայկական կանգունը պիտի որ մարդու հասակի չափ լիներ (ՀԱԲ, հտ. 2, էջ 511):

*Локоть*-ը Ռուսաստանում երկարության չափման միավոր է, հիշատակվում է 11-րդ դարից սկսած, հավասար էր 455-445 մմ, 16-րդ դարից *ЛОКОТЬ*-ը փոխարինվել է *արշինով* (թուրք. փխռ., մատների ծայրից մինչև ուսագլուխը ≈0,71 մ)<sup>17</sup>: Բուլղարերենում ևս արշինը եկել է փոխարինելու *лакът*-ին:

Բերենք օրինակ Աստվածաշնչի հայերեն, ռուսերեն և բուլղարերեն թարգմանություններից<sup>18</sup>:

Գիրք Օճնոց, 6:15: Եւ այսպէս արասցես զտապանն. յերեք հարեր *կանգնոյ* զերկայնութիւն տապանին, եւ ի յիսուն *կանգնոյ* զլայնութիւնն, եւ յերեսուն *կանգնոյ* զբարձրութիւնն:

Ռուս. 6.15: И сделай его так: длина ковчега триста *локтей*; ширина его пятьдесят *локтей*, а высота его тридцать *локтей*.

Բուլղ. 6.15: И го направи тъй: дължината на ковчега - триста *лакти*, ширината му - петдесет *лакти*, а височината му - трийсет *лакти*.

**Մատը** (լատ. *digitus*, հուն. *δάκτυλος* (դակտիլոս) ևս հնագույն միավորներից է, ըստ տարբեր աղբյուրների՝ ≈1,85-2,5 սմ (ցուցամատի կամ բթամատի լայնությունն է).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մատ	палец/перст	пръст
<i>մատնաչափ</i>	<i>с палец/с пальчик</i>	

Հանդիպում է նաև Աստվածաշնչում.

Երեմիա, 52:21: (...) եւ մանեակ յերկոտասան կանգնոյ շուրջ գնովաւ, եւ թանձրութիւն նորա շուրջ առ չորս *մատունս*:

Ռուս. (...) и шнурок в двенадцать локтей обнимал его, а толщина стенок его, внутри пустого, в четыре *перста*.

Բուլղ. (...) и връв от дванайсет лакти го обгръщаше, вътре беше кух, а стените му бяха дебели четири *пръста*.

Մատը՝ որպէս չափման միավոր, երկակի կիրառություն ունի՝ մատի երկարությունը և մատի լայնությունը: Քննվող լեզուներում կան կայուն բառակապակցություններ և դարձվածքներ, որոնց մի մասն ունի բացարձակ, մի մասը՝ հարաբերական համարժեք մյուս լեզվում/լեզուներում.

<sup>16</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի; Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009:

<sup>17</sup> Տե՛ս *Локоть* — Большая советская энциклопедия:

<sup>18</sup> Հաշվի առնենք այն հանգամանքը, որ Աստվածաշունչը հայերեն և ռուսերեն ու բուլղարերեն թարգմանվել է տարբեր դարերում՝ տարբեր միջնորդ լեզուներից, ինչի հետևանքով տեքստերում կան որոշակի տարբերություններ:

երկու մատ լայնությամբ/հաստությամբ - в 2 пальца шириной/толщиной - с широчина два пръста

Մի մատ խորքից կայուն բառակապակցությունը (որտեղ մատը մատի լայնությունն է) ռուսերենում թարգմանվում է հարաբերական համարժեքով՝ с красной строки:

Հայերենում կա մի մատ երեխա դարձվածք (որտեղ մատը մատի երկարությունն է)՝ չափազանց փոքր (տարիքի մասին) -1. դրական կոննոտացիայով, 2. բացասական կոննոտացիայով.

դր. - Շունը մի մատ երեխայի առաջ էլ պոչն իրեն է քաշում ու լուռ հեռանում իր սարեր (Հր. Մաթևոսյան, Տաշքենդ),

բցսկ. - Մի մատ երեխա էս, ի նչ էս քիթդ մեծերի գործերի մեջ խոթում:

Կախված համատեքստից այս դարձվածքը կարող է թարգմանվել բառով, բառակապակցությամբ, հարաբերական համարժեք դարձվածքով. օր. ռուս. - ребенок, дитя ևն (դր. կոնն.), мал еще; молокосос; сопляк, щенок, нос не дорос ևն (բցսկ. կոնն.), բուլղ. дете, маляк (դր.), пале (բցսկ.):

Հայտնի հեքիաթի վերնագիրը հայերեն թարգմանված է «Մատնաչափիկը», ռուսերեն “Мальчик с пальчик”, բուլղարերեն “Малечко-палечко”.

Բուլղարերենն ունի с два пръста чело դարձվածք (բառացի՝ 2 մատ ճակատ (ունեցող), որ նշանակում է ոչ այնքան խելացի մարդ: Հայերենում և ռուսերենում դարձվածքը կարող է թարգմանվել բառով կամ հարաբերական համարժեք դարձվածքով. օր. հայ. - անխելք; դատարկազուխ; մի գրամ խելք չունի; խելքի ծով (հեգն., ծաղր.); ռուս. - тупой, тупица, кретин, дуб дубом, ума палата ևն:

Մատը հայերենում ունի նաև «նյութի քանակություն, որ կարելի է վերցնել մի մատ զարկելով» իմաստ՝ մի մատ մեղր, որ բացակայում է մյուս 2 լեզուներում:

Ունենք մի մատ մեղր դառնալ/դարձնել դարձվածք՝ «խայտառակվել, բամբասանքի առարկա դառնալ/խայտառակել, բամբասանքի առարկա դարձնել»: Դարձվածքը կարող է թարգմանվել միայն հարաբերական համարժեքներով կամ նկարագրական եղանակով. ռուս. - опозорить/опозориться (на весь мир), сделать/стать предметом сплетен ևն, բուլղ. - позоря, охульвам, подлагам на хула ևն:

Ափը (լատ. palmus, հուն. παλαιστή (պալաիստե)՝ հնագույն չափման միավորներից ևս մեկը, դաստակից մատների հիմքն ընկած հատվածն է (palmus minor (փոքր ափ) =4 մատ), ≈8-10 սմ: Հայերենում ունի հոմանիշ՝ ուղուկ (հիմքում ռդն բառն է (ՀԱԲ, հտ. 3, 554)=4 մատնաչափ, ափ: Ափը նաև բուռն է (ՆՀԲ, հտ. 1, ցուցակ 1, էջ 397). 1. ձեռքի ափի մեջ տեղավորվող քանակությունն է, 2. փխբ. նշանակում է շատ քիչ:

Ռուսերենում և բուլղարերենում ևս ափն ու բուռը հոմանիշ են և գործածվում են palmus-ի թարգմանության համար.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ափ, ափաչափ	ладонь	длан
ուղուկ, բուռ	горсть, пригоршня	шепа

Եսայի, 40:12: Ո՞չափեաց *ափով* իւրով զջուրս (...):

Ռուս. - Кто исчерпал воды *горстью* своею (...).

Բուլղ. - Кой е изчерпал водите *с шепата* си (...).

Ելից, 25:25: Եւ արացես նախ ասակ *ուղկեան* շուրջանակի:

Ռուս. - И сделай вокруг него стенки *в ладонь*.

Բուլղ. - Наоколо ѝ направи страници колкото *една длан*.

Եզեկիել, 13:19 (...) եւ բամբասեին զիս՝ առաջի ժողովրդեան իմոյ վասն *ափով* *ափով* զարւոյ:

Ռուս. - И бесславите Меня пред народом Моим *за горсти* ячменя.

Բուլղ. - И Ме безчестите пред Моя народ *за шеп* ечемик.

Թագավորություններ, Գ, 17:12: (...) է որչափ *բռնար* *ափ* ալեր ի սափորի, եւ սակաւ մի եւղ ի կամփասակի:

Ռուս. -(...) у меня ничего нет печеного, а только есть *горсть* муки в кадке и немного масла в кувшине.

Բուլղ. -(...) нямам нищо печено, а имам само *шепа* брашно в делвата и малко дървено масло в гърнето.

Երեք լեզվում էլ կան բացարձակ համարժեք դարձվածքներ.

*ափ բուռն հող -горсть земли -шепа земя,*

*ափ բուռն մարդ/ժողովուրդ -горсть людей -(една) шеп* хора:

Իսկ «*ափ/կես բուռն դառնալ*» (=սաստիկ փոքրանալ, կծկվել), «*ափ բուռն (պառնալ)*» (=փոքրամարմին) դարձվածքների համար բացարձակ համարժեք մյուս երկու լեզուները չունեն:

Գոյություն է ունեցել նաև *palmus major* (մեծ ափ)՝ բթամատից ճկույթի ծայրը, որ **թիզ** է (հուն.՝ *σπιθαμή* (սպիտամե)), ≈22-23 սմ: Ըստ Մանանդյանի՝ 1 թիզը =0,266 կ 1/3: Թիզ է կոչվել նաև բթամատից ցուցամատի ծայրն ընկած բացվածքը (հուն.՝ *λίχας*=10 մատի), որ հայերենում ունի հոմանիշ՝ **քիլ**<sup>19</sup> (մեծ թզից պակաս է ցուցամատի մի հողի չափով, փոքր թիզ)<sup>20</sup>:

Ռուսերենում *пядь/пядень*-ը բթամատից ցուցամատի ծայրը ընկած բացվածքն է (*малая пядь*=18-19 սմ), նաև բթամատի ծայրից ճկույթի ծայրն ընկած բացվածքը (*большая пядь*=22-23 սմ): Ըստ ЭСБЕ-ի՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ *пядь*-ով թարգմանվել է հունարենի *παλαίση*՝ ափը<sup>21</sup>:

Բուլղարերենում *педя*-ն բթամատից ճկույթն ընկած բացվածքն է, իսկ *чепёрек* (բրբռ.)՝ բթամատի և ցուցամատի միջև ընկած տարածությունը:

<sup>19</sup> Նշենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ թիզը հանդիպում է 11 անգամ, քիլը՝ 1, ուղուկը՝ 4 անգամ (տվյալներն ըստ <https://arak29.org/classical-armenian-bible-with-parallel-king-james-version/> [https://www.arak29.org/bible/book/index\\_1\\_az.htm](https://www.arak29.org/bible/book/index_1_az.htm)):

<sup>20</sup> Տե՛ս չԱԲ, ՆՀԲ:

<sup>21</sup> «*Пядь — старинная мера протяжения. В славянском переводе Священного Писания словом «П.» передано греческое παλαίση = пальма, длань*».

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
թիզ քիլ	пядь, пядень (հնգ.)	педа чеперек

Աստվածաշնչի թարգմանությունից բերված օրինակներում երևում է, որ նույն բառի դիմաց երբեմն տարբեր հոմանիշներ են.

Եսայի, 40:12: Ո՞չափեաց *ափով* իւրով զջուրս, եւ զերկինս *թզաւ*, եւ զերկիր ամենայն՝ *քիւլ*:

Ռուս. - Кто исчерпал воды *горстью* своею и *пядью* измерил небеса, и вместил в меру прах земли.

Բուլղ. - Кой е изчерпал водите с *шепата* си и с *педа* е измерил небесата, и е вместил в мяра праха земен.

Ելից, 28:16: Եւ արասցես զնա չորեքանկիւնի՝ *թզաւ* յերկայնութիւն եւ *թզաւ* ի լայնութիւն:

Ռուս. - Он должен быть четырёхугольный, двойной, в *пядень* длиною и в *пядень* шириною.

Բուլղ. - Той трябва да бъде четириъгълен, двоен, *педа* дълъг и *педа* широк.

Եզեկիել, 43:13: Եւ այս չափ սեղանոյն. կանգուն մի ի կանգնոց, եւ *կանգուն մի եւ ուղուկ* զոգած խորութեան նորա. եւ *կանգուն մի* լայնութիւն, եւ պսակ շուրջ զծնօտիք նորա շուրջանակի *թզաւ մի*:

Ռուս. 43.13. Потом намерил он в воротах от крыши одной комнаты до крыши другой двадцать пять *локтей* ширины; дверь была против двери; 43.14: А в столбах он насчитал шестьдесят *локтей*, в каждом столбе около двора и у ворот.

Բուլղ. 43.13: И это размерите на жертвенника в *лакты*, като се смята за *лакът* *лакът* и *длан*: основата лакът, ширината пак *лакът*, и поясът по всичките му краища *една педа*.

Հայերենում ունենք **թիզուկէս** -1. չափման միավոր=1,5 թիզ կ 2. փխր., հեզն., արհմ. *շատ կարճահասակ*: Այս բառով ունենք «բոլոր *թիզուկէս*, լեզուն *զազուկէս*», «*թիզուկէս*, զետնի *բզեզ*» արտահայտությունները:

Բուլղարերենում կարճահասակ մարդու մասին ասում են *две педи человек* (բառացի՝ երկու թիզ մարդ): Իսկ ռուսերենում «շատ կարճահասակ» (հեզն., ծաղր.) իմաստի համար կան *ростом не вышел, метр с кепкой, от горшка два вершка* կն հարաբերական համարժեք դարձվածքներ:

Ռուսերենն ունի *7 пядей во лбу* (բառացի՝ *7 թիզ ճակատ (ունեցող)*), որ նշանակում է չափազանց խելացի. դարձվածքը կարող է թարգմանվել բառով կամ հարաբերական համարժեք դարձվածքով՝ հայ. -*խելքի ծով*, *խելքի կտոր*, *խելքը (ամեն ինչից) կտրել*, *բուլղ.* - *умна глава, сече му умът/глава* կն:

Երեք լեզվում էլ կա լիակատար համարժեք կայուն բառակապակցություն՝ *ոչ մի թիզ հող -ни пяди земли -ни педа земля*: Ամենայն հավանականությամբ՝ սրանք ծագել են նույն աղբյուրից:

**Ոսրբ/ունաչափը** (լատ. *pes*, հուն. *πούς*) կս գործածվել է հնագույն



ժամանակներից, իսկ որոշ երկրներում մինչ այժմ էլ կիրառվում է (օր.՝ անգլ. ֆուտը (*foot*=30,48 սմ): Տարբեր ժամանակներում և մշակույթներում տարբեր է եղել  $\approx 29,6-32,4$  սմ: Հունական ոտքը=30,8 սմ: ՆՀԲ-ում ոտնաչափը 4 ուղղուն է կամ 16 մատ: Ըստ Մանանդյանի՝ Աշխարհացույցից համառոտում=0,268464 մ, ընդարձակում՝ 0,266 1/3: Հայերենում ոտքը ստացել է նաև **քայլ, քայլափոխ** իմաստը:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ոտք/ոտնաչափ	стопа, фут (փխռ. անգլ.)	стъпка

Երկրորդ օրենք, 2:5: ... մի՛ գրգռիցիք ընդ նոսա ի պատերազմ, զի ոչ տաց ձեզ յերկրէ նոցա եւ ոչ *քայլ մի ոտին*...

2:4, 2:5. ...но остерегайтесь начинать с ними войну, ибо Я не дам вам земли их ни на *стопу ноги*...

2:4, 2:5. ...но пазете се, да не почвате с тях война, понеже Аз няма да ви дам от земята им ни *една стъпка*.

Գործք, 7:5: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա եւ ոչ *քայլ մի ոտին*:

И не дал ему на ней наследства ни на *стопу ноги*.

И не му даде в нея наследство ни *една стъпка*.

Հայերենում ունենք հետևյալ դարձվածքները՝ *կես/մի/երկու ոտ(ք) ճանապարհ* (շատ մոտիկ), *մի ոտ առաջ տեղ հասնել* (մեկից առաջ անցնել շատ կարճ ժամանակով), *մի ոտի տեղ* (1. մի ոտքի ներքանի չափով, 2. շատ քիչ, 3. շատ մոտիկ), որոնք ունեն բացարձակ կամ հարաբերական համարժեք ռուսերենում և բուլղարերենում (տե՛ս «քայլ» բառի տակ):

**Քայլը** երկակի նշանակությամբ է գործածվել՝ քայլափոխի երկարությունը՝  $\approx 70-75$  սմ (լատ. *gradus*, հուն. *ἀπλοῦν βήμα* (հապլում բիմա) և կրկնակի քայլը  $\approx 1,48-1,54$ մ (լատ. *passus*, հուն. *βήμα<sup>22</sup>* (*բեմա/բիմա*)):

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
քայլ	шаг	разкрач, крачка

ՆԱԲ-ում քայլը= 6 ոտք կամ 36 մատ: Ըստ Մանանդյանի՝ համառոտ Աշխարհացույցում =1,610784 մ, ընդարձակում՝ = 1,598 մ:

Աստվածաշնչում հանդիպում է հետևյալ նախադասությունը.

Թագավորություններ, Բ, 6:13: Եւ էին ընդ նմա որ բառնային զտապանակն *ելթն դաս պարուց*: Սակայն ծանոթագրության մեջ ասվում է, որ եբրայերեն բնագրում «քայլ» բառն է՝ «Եբր. եղև իբրև գնացին որ բառնային զտապանակն Տեառն *քայլս վեց*»:

Ռուս. -И когда несшие ковчег Господень проходили по *шести шагов*...

Բուլղ. -И когато тия, които носеха Господния ковчег, преминаха *шест крачки*.

Երեք լեզվում էլ կան *ոտք* և/կամ *քայլ* բառով բացարձակ կամ հարաբերական համարժեք դարձվածքներ.

*Մի/երկու ոտ(ք) կամ քայլ -в двух шагах -на една крачка/на две крачки/на два разкрача*:

<sup>22</sup> Ի դեպ, ըստ Աճառյանի՝ այս բառն է ընկած հայերեն *բեմ* բառի հիմքում (տե՛ս <https://shorturl.at/ICDV7>):

Երեք լեզուներում էլ **գլուխը** ևս հանդես է գալիս իբրև չափման միավոր. 1. քանակ, հատ (սովորաբար կենդանիների), նաև կլորավուն, գնդաձև ուտելիքի մասին, 2. բարձրության չափման միավոր.

*10 գլուխ անասուն - 10 голов скотины- 10 главы добитък,*

*1 գլուխ սոխ - 1 головка лука - глава лук,*

*մի գլուխ բարձր/ցածր -на голову выше/ниже -висок на ръст/бой,*

*գլխի չափ -размером с голову:*

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
գլուխ	голова/головка	глава

Բացարձակ համարժեք ունի նաև «**եղունգ**» չափման միավորը: Ըստ Մանանդյանի 1 եղունգը=0,016 մ: Երեք լեզվում էլ «եղունգի չափ» նշանակում է չափազանց քիչ, շատ փոքր:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
եղունգ <i>եղունգի չափ (խելք ունենալ)</i>	НОГОТЬ/НОГОТОК <i>(мужичок) с НОГОТОК</i>	НОКЪТ <i>с размер на НОКЪТ</i>

**Պտղունցը** երկու կամ երեք մասների միացումով վերցված քանակությունն է:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պտղունց <i>մի պտղունց աղ</i>	щепотка <i>щепотка соли</i>	щипка <i>щипка сол</i>

**Աչքաչափը** երեք լեզուներում էլ ինչպես երկարության, այնպես էլ կշռի պայմանական միավոր է, հանդիպում է խոսակցական լեզվում, բարբառներում և մինչև օրս էլ կիրառվում է կենցաղում:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
աչքաչափ/աչքաչափով <i>աչքաչափով աղ անել</i>	глазомер/на глаз <i>посолить на глаз</i>	окомер/на око <i>добавям сол на око</i>

Բացարձակ համարժեք ունեն նաև հետևյալ չափման միավորները.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մարդաբոյ/մարդաչափ <i>մարդաբոյ ծառ</i>	с человеческий рост <i>дерево с человеческий рост</i>	човешки ръст/бой <sup>23</sup> <i>дърво с човешки ръст/бой</i>
կում <i>մի կում ջուր</i>	ГЛОТОК <i>ГЛОТОК ВОДЫ</i>	ГЛЪТКА <i>ГЛЪТКА ВОДА</i>
մազ <i>մազաչափ, մի մազ</i>	волосок/волосинка <i>с/на волосок</i>	КОСЪМ <i>на (един) КОСЪМ</i>
բռունցք <i>բռնցքաչափ, բռունցքի չափ</i>	кулак <i>размером с/в кулак</i>	пестник, юмрук (թուրք. փխռ.) <i>с размер на юмрук</i>
բութ, բթամատ <i>բութ մատի չափ, բթաչափ</i>	большой палец <i>(размером) с большой палец</i>	Палец

<sup>23</sup> Բուլղ. бой (խսկց.) բառը, ինչպես և հայերենի բոլը (հասակ) փոխառություն է թուրքերենից:

		<i>с размер на палеца, клекавец<sup>24</sup></i>
ճկույթ	мизинец	малкия пръст/ кутре
ճկույթի չափ	(размером) с мизинец	с размер на малкия пръст/ кутре

Մինչև կապի հետ (ռուս.-ում՝ *до, по* նախդիրների, բուլղ.՝ *до* նախդիրի) չափ են ցույց տալիս հետևյալ մարմնի մասերը, որոնց մեծագույն մասը ունի բացարձակ համարժեք երեք լեզվում էլ:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
մինչև կոկորդը	по горло	до гуша
մինչև վիզը	по шею	до шия
մինչև ծունկը/ծնկները	по колено/до колен	до коляното
մինչև ականջների ծայրը	по уши	до ушите
մինչև կոճր/կոճերը	до щиколоток	до глезените
մինչև մազերի ծայրը	до корней волос	до корена на космите
մինչև գոտկատեղ	до пояса/по пояс	до пояса
մինչև արմունկները	по локоть	до лакътя
մինչև քիթը	-	-

Նկատենք, որ որոշ չափման միավորներ երկակի իմաստ ունեն. կարող են նշանակել ինչպես մարդու մարմնի վերնից, այնպես էլ ներքնից սկսած մինչև այսինչ մասը (օր.՝ *զգեստը հասնում է մինչև ծունկը* և *մինչև ծունկը ջրի մեջ*):

Վերը նշված մարմնի մասերով կազմված դարձվածքները սովորաբար ունեն բացարձակ կամ հարաբերական համարժեք քննվող լեզուներում.

*մինչև կոկորդը կուշտ/զգված/խրված գործերի մեջ* - *сыт по горло/дел по горло* - *дойде ми до гуша*

*մինչև ականջների ծայրը սիրահարված* - *по уши влюблен* - *влюбен до уши*

*մինչև արմունկները արյան մեջ* - *по локоть в крови* - *кръв по ръцете си*:

Այժմ քննենք այն դեպքերը, երբ նույն չափման միավորը արտահայտված է տարբեր մարմնի մասերով, կամ լեզուներից մեկում դրանք չունեն մարմնի մասով արտահայտված տարբերակ:

Հայերենում ազգակցական կապը հաշվում են **պոքրտով**, իսկ ռուսերենում և բուլղարերենում՝ **ծնկներով**:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պոքրտ	колено	коляно

*7-րդ պոքրտ* - *7-е колено* - *7 коляно*

Հայերենում **պճեղը** սկզբնական նշանակությամբ ոտքի կոճն է, հետագայում զանազան իմաստներ է ստացել՝ 1. ոտքի մատ, 2. կճղակ, 3. սխտորի գլխի յուրաքանչյուր մասնիկը: Ռուսերենում «սխտորի մաս» իմաստին համարժեք է *зубчик*-ը (зуб -ատամ բառից):

<sup>24</sup> *Клекавец*-ը նաև բթամատից ցուցամատի ծայրն ընկած բացվածքն է (տե՛ս Речник на българския език. <https://ibl.bas.bg/rbe/>):

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
պղեճ	зубчик	-

Բուլղարերեն համարժեքը՝ *скилидка*, փոխառություն է հունարենից՝ *σκελίδα*, որն էլ իր հերթին ծագում է *կողոսկր* բառից<sup>25</sup>: Ըստ այլ վարկածի՝ բառի ծագումը կապված է *ազոր* բառի հետ<sup>26</sup>: Ամեն դեպքում, բուլղարերեն բառը ևս մարմնի մասի է առնչվում, թեև ժամանակակից լեզվում ծագումը չի գիտակցվում:

Բանավոր խոսքում, խոսակցական կան լեզվում իբրև չափման միավոր է հանդես գալիս նաև **բերանը**.

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
բերան	рот	уста

Հայերենում կա *մի բերան/մի բերանի* (=մի կծելու չափով, շատ քիչ) - *մի բերան քան ուտել, մի բերանի հաց*:

Ռուսերենում այս իմաստով գործածվում է *один кус* (*кусать* - կծել բայից) հարաբերական համարժեքը:

Ունենք նաև *մի/կես բերան (ասել)* - «*ակնարկել, հպանցիկ ասել*» դարձվածք, որ չունի բացարձակ համարժեք մյուս երկու լեզուներում:

*Կես բերան ասել*-ը հայերենում ունի նաև «*չուզելով, չկամությամբ ասել*» նշանակություն, որի համար բուլղարերենն ունի բառացիորեն նույն դարձվածքը՝ *с половин уста* («*Борисов се извини с половин уста*» - «Բորիսովը կես բերան ներողություն է խնդրել»):

Բերանը հայերենում և ռուսերենում ունի նաև «*շունչ, անձ, ուտող միավոր*» իմաստը.

*5 սոված բերան - 5 голодных ртов*:

Իսկ բուլղարենում այս իմաստն արտահայտվում է *гърло* (կոկորդ) բառի միջոցով.

*5 гладни гърла*:

Ի դեպ, հայերենի բարբառներում, օր.՝ Ղարաբաղի բարբառում, նույնպես «շունչ, անձ» իմաստը արտահայտվում է *բողազ* (փխտթ. թուրք.-ից, կոկորդ) բառով՝ *5 բողազ=5 շունչ, ուտող*<sup>27</sup>:

Բավականին հետաքրքիր է **գիրկ** (հուն. *οργιά* կամ *οργια* (*օրգիա*)) չափման միավորը: Հնագույն գիրկը՝ գրկաչափը, լայն տարածած ձեռքերի մատների մի ծայրից մյուսն ընկած երկարությունն էր: Տարբեր աղբյուրների համաձայն՝ գիրկը ≈ 1,5-2 մ: Ըստ ՆՀԲ-ի՝ նաև դրա կեսն է՝ արշինը: Ըստ Մանանդյանի՝ գիրկ = 1,598 մետր: Ստ. Ազնոցի աշխատության մեջ գիրկ = 6 ոտնաչափ, իսկ մեծ

<sup>25</sup> Տե՛ս A Greek-English Lexicon (LSJ) Oxford University Press (<https://rb.gy/1st7us>) :

<sup>26</sup> Տե՛ս Български етимологичен речник. Том VI. София, 2002, էջ 747 («*Скилида* (*скилидка*) - от „скелида“ с редукция на „и“, което пък е заемка от новогръцкото *skilída*, идващо от старогръцкото *σκελίς*, -*ίδος* „бедро, бутче“):

<sup>27</sup> Տե՛ս Ս. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013:

գիրկ=10 ոտնաչափ<sup>28</sup>: Հունական օրգիան եղել է ≈1,85 սմ:

Ռուսերենն ու բուլղարերենը այս հին գիրկ/գրկաչափի համար չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք, այն թարգմանում են սաժենով (*сажень, сажень*), բուլղարերենում՝ նաև հունանիշով՝ *разтег*:

Գործք, 27:28: Եւ ընկեցեալ զգունդսն՝ գտին *գիրկու* քսան, եւ սակաւ ինչ դարեալ՝ դարձեալ ընկեցին եւ գտին *գիրկու* հինգետասան:

И, вымерив глубину, нашли двадцать *сажен*; потом на небольшом расстоянии, вымерив опять, нашли пятнадцать *сажен*.

И, като измериха дълбочината, намериха двайсет *разтега*; отидоха малко по-нататък, измериха пак и намериха петнайсет *разтега*.

Գիրկը հայերենում ստացել է նաև «*գրկի/գոգի/ճոցի մեջ տեղավորվելու չափ*» իմաստ: Այս իմաստի համար կան մարմնի մասերին առնչվող հարաբերական համարժեքներ՝ ռուսերենում *охапка* (հիմքում *хапать*՝ ձեռք(եր)ով վերցնել, բռնելն է), *пазуха*, բուլղարերենում՝ *наръч* (հիմքում *ръка* (ձեռք) բառն է), *пазва*:

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
գիրկ/գրկաչափ	охапка, пазуха	наръч, пазва

*մի գիրկ ծաղիկ/խոտ/փայտ* - *охапка цветов/травы/дров* - *наръч цветя/дърва/слама*:

**Ձեռքը** ևս չափման միավոր է հայերենում և բուլղարերենում, սակայն տարբեր է դրա կապակցելիությունը (կապակցվում են տարբեր բառերի հետ).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
ձեռք	-	ръка

*Մի ձեռք* (մի քանի իր, որոնք միասին մի ամբողջություն են կազմում) - *մի ձեռք սպիտակեղեն, մի ձեռք շոր, մի ձեռք անկողին*,

*Ръка*- (իսկց.) որևէ բան մշակելու, հավաքելու առանձին փուլը՝ *трета ръка малина*:

Կան չափման միավորներ, որոնք չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք մյուս լեզուներում:

Այդպիսի չափման միավոր է հայերենում **շալակը**՝ 1. թիկունքը ուսերից մինչև մեջքը, 2. բեռի այն քանակը, որ կարելի է մեջքին կրել:

(...) *մի շալակ* լիքն յուր սրտի ուզած *մրգեղեն* մեջքը կապած (...) թռչկոտելով տուն դառնում (Պերճ Պռոշյան); (...) նա *մի շալակ ցախ* կամ հսկա կոճղ անտառից բերելով, նետել էր կրակի մեջ (Խաչիկ Դաշտենց); Գնացի ձորիցը *մի շալակ թթան տերև* բերի (Հովհ.Թումանյան):

Ռուսերենում և բուլղարերենում չկա այս միավորին բացարձակ համարժեք. այն կարող է թարգմանվել նկարագրական եղանակով կամ հարաբերական համարժեքներով՝ *մի կապ, մի խուրձ* ևն.

*Մի շալակ ցախ/փայտ* - *вязанка/связка дров- сноп дърва за огрев*:

<sup>28</sup> Տե՛ս Մտ. Ագոնց, Հասարակախօսութիւն աշխարհագրութեան, 1817, Վենետիկ, էջ 17: (<https://rb.gy/bqwbhv>):

Հետաքրքիր օրինակ կա Համո Սահյանի պոեզիայում.

Ի՞նչ եմ բերել սարից .../Մի ծոց տաք-տաք երազ/Եվ մի շալակ երկինք...

Թարգմանիչը «ծոցի» համար ընտրել է համարժեք «пазуха», իսկ «մի շալակ երկինքը» թարգմանել է նկարագրական եղանակով՝ «ուտերիս մի ամբողջ երկինք է».

*Что я принес с гор?/ Полную пазуху теплых снов/ И па плечах целое небо...*

(թարգմ.՝ Մ. Դուդին)

Հայերենն ունի նաև «փոքր» չափման միավոր, որ բացարձակ համարժեք չունի մյուս 2 լեզվում: Հետևյալ դարձվածքները կարող են թարգմանվել միայն հարաբերական համարժեքներով կամ նկարագրական եղանակով.

*Կես փոքր* կամ կեսփոքր (չկշտացած, կիսակուշտ) – ռուս. *в проголодь*, բուլղ. *полугладен*,

*մի փոքր հաց* (մի փոքրի մեջ տեղավորվելու չափ (ուտելիքի մասին)) - մի թեթև կշտանալու չափ,

*մի փոքր հացի համար* (նվազագույն վարձատրության դիմաց (սվրբ. հեգն., հանդիմանական) - ռուս. *за кусок хлеба, за здорово живешь, за тарелку супа*, բուլղ. *за парче хляб, за къс хляб (работя)* նև:

Այս դարձվածքի հետ է անմիջապես կապված *հացափոքրի/հացփոքրի բանվոր* արտահայտությունը (հեգն., ծաղր.), որ նշանակում է «մի փոքր հացի համար սև աշխատանք կատարող»:

Փորը հայերենում ունի նաև «արգանդ» իմաստ, որից ունենք *«այսքան փոքր դատարկել»* (=այսքան երեխա ունենալ) դարձվածք:

Հայերենում և բուլղարերենում մարմնի մասով արտահայտված համարժեք չունեն հետևյալ միավորները (թեև կարող են թարգմանվել տառադարձման միջոցով, նկարագրական եղանակով կամ հարաբերական համարժեքներով).

հայերեն	ռուսերեն	բուլղարերեն
- (հեգն., կտկ.՝ <i>յուրաքանչյուրից, յուրաքանչյուր մարդուց</i> )	<b>с носа</b> (нос-քիթ)	-
- (գոհ., արհ., <i>յուրաքանչյուրից, յուրաքանչյուր մարդուց</i> )	<b>с рыла</b> (рыло - քրոշ <i>կենդանիների քթի վերին հատվածը, 2. փիւբ., գոհ. ռեխ, մոռլթ</i> )	-
վերջուկ (տառադարձված հանդիպում է հիմնականում թարգմանական գրականության մեջ)	<b>вершок</b> (≈4,4-4,5 մմ) (սկզբնապես նշանակել է ցուցամատի առաջին ֆալանգի չափ) <sup>29</sup>	-

<sup>29</sup> Sէ՛ u вершок / Этимологический онлайн-словарь Фасмера М., ЛГΩ.

Նշենք, որ թեև հայերենում առանձին բառ չունենք, սակայն ունենք ոչ վերբալ միջոցով *вершок*-ի չափն արտահայտելու ձև. ցուցամատի ծայրը շարժույթով ցույց ենք տալիս և ասում՝ ա՛յ այսքան: Ի դեպ, նույն կերպ շարժույթով ենք ցույց տալիս նաև չափման այլ միջոցներ՝ *մինչև այստեղ* (և ձեռքով ցույց ենք տալիս կոկորդը, գլխից վերև), *ա՛յ այսքան* (և ձեռքով ցույց ենք տալիս եղունգը, մատի 1 կամ 2 ֆալանգը):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, մարմնի մասերին առնչվող չափման միավորների մեծ մասն ունի նույն բառով համարժեք քննության առարկա լեզուներում: Այդ չափման միավորները հիմնականում ընդհանուր են գրեթե բոլոր հին քաղաքակրթությունների համար: Կան նաև չափման միավորներ, որոնք չունեն մարմնի մասով արտահայտված համարժեք մյուս լեզվում/լեզուներում, կամ նույն չափման միավորը արտահայտված է այլ մարմնի մասով: Սակայն նույնիսկ համարժեքի առկայության պարագայում կարող են թարգմանության ժամանակ խնդիրներ ծագել, հատկապես երբ այդ չափման միավորները կիրառվում են կայուն բառակապակցություններում, դարձվածքներում, կամ ժամանակի ընթացքում դրանք ձեռք են բերել նոր իմաստ:

**АРЕВИК КАМАЛЯН** – *Единицы измерения, связанные с частями тела в армянском, русском и болгарском языках.* – В древних цивилизациях основой для единиц измерения служили прежде всего части человеческого тела. Многовековые торгово-экономические, культурные и политические контакты разных стран и народов способствовали также заимствованиям, поэтому неудивительно, что одни и те же единицы измерения существуют в разных языках. Некоторые из этих единиц сегодня вышли из употребления (например, армянский «կանգուն» или русский «локоть»), но большая часть продолжает использоваться в разговорной речи, повседневной жизни, встречается в устойчивых словосочетаниях и идиомах. В статье впервые подвергнуты сравнительному анализу единицы измерения, связанные с частями тела, в армянском, русском и болгарском языках. Цель работы – выявить как общие черты, так и различия трех языков. Эти различия иногда становятся проблемой при переводе с одного языка на другой, особенно когда та или иная единица измерения встречается в идиомах.


**Ключевые слова:** народная метрология, единицы измерения, части тела, фут, щепотка, пядь, перевод соматических фразеологизмов

**AREVIK KAMALYAN** – *Body-Based Units of Measure in Armenian, Russian and Bulgarian Languages.* – In ancient civilizations, the basis for units of measurement was primarily human body parts. Centuries of trade, economic, cultural and political contacts of different countries have also contributed to borrowing, so it is not surprising that the same units of measurement exist in different languages. Some of these units have fallen out of use today (e.g. Armenian "կանգուն" or Russian "локоть"), but most of them continue to be used in colloquial speech, everyday life, and are found in set phrases and idioms.

In the article the units of measurement related to body parts in Armenian, Russian and Bulgarian languages are subjected to comparative analysis for the first time. The main purpose of the paper is to identify both common features and differences of the three languages. These differences sometimes become a problem when translating from one language to another, especially when a particular unit of measurement occurs in idioms.

**Key words:** ethno-metrology, units of measurement, body-based units of measure, foot, pinch, span, translation of somatic idioms and phrases

## ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՆԵՐԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԻՐԱՆՈՒՇ ԿԵՍՈՅԱՆ \* 

Ներիմաստը լեզվաբանության մեջ քննվել է տարբեր տեսանկյուններից, և, ըստ տարբեր չափանիշների, առանձնացվել են ներակա իմաստների տարբեր տեսակներ: Մասնավորապես, ըստ խոսողի կամ հեղինակի նպատակադրման, որոշակի միտումի բացակայության կամ առկայության, առանձնացվում են չկանխամտածված և կանխամտածված ներիմաստներ: Սույն հոդվածում քննվում է կանխամտածված ներիմաստը, մասնավորապես՝ այն, թե ինչ հանգամանքներով և միտումներով կարող է պայմանավորված լինել ներիմաստի միտումնավոր ներառումը խոսքում: Կանխամտածված ներիմաստի հաղորդման դեպքում լեզվական միավորների ընտրությունը հեղինակի/խոսողի կողմից կշռադատված է. նա բավականին ծանրութեթև անելուց հետո, իրադրությունը և իր նպատակին համապատասխան, ընտրում է լեզվական միավորներ՝ իր ասելիքը լավագույնս ներակայորեն հաղորդելու համար: Եվ ամենապարզ, ամենահասարակ միտքն անգամ նա հատուկ միտումով կարող է քողարկել՝ փոխանցելով այն որպես կանխամտածված ներիմաստ: Հայ լեզվաբանության մեջ առհասարակ ներիմաստը քիչ է ուսումնասիրվել, և այս հոդվածը փորձ է որոշ չափով լրացնելու այդ դաշտում եղած բացը:

**Բանալի բառեր** – ներակա իմաստ, կանխամտածված ներիմաստ, չկանխամտածված ներիմաստ, միտում, էթիկա, քաղաքավարություն, խոսքային անուղղակի ակտեր, ֆոնային գիտելիքներ, մանկր, ներակա վերաբերմունք

Լեզուն մտքերը, գաղափարներն արտահայտելու բազմազան միջոցներ ու հնարավորություններ ունի: Դրանք կարող են արտահայտվել ուղղակիորեն, բացահայտ ձևով, այնպես, ինչպես կան, բայց և անուղղակիորեն, քողարկված ձևով: Եթե ամեն ինչ ասվեր ուղիղ, պարզ ձևով՝ արտակայորեն, խոսքն առհասարակ շատ պարզունակ, աղքատիկ կլիներ, երբեմն՝ ձանձրալի, ձգձգված, մինչդեռ ներակա հաղորդումը հարստացնում է խոսքը, յուրօրինակ նրբերանգներով օժտում այն: Շատ հաճախ հենց ներակա տեղեկատվությունն է կազմում

\* Միրանուշ Կեսոյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ

Мирянуш Кесоян – аспирантка кафедры армянского языка ЕГУ

Miranush Kesoyan – PhD Student at YSU Chair of the Armenian language.

Էլ. փոստ՝ kesoyan1996@mail.ru. ORCID: <https://orcid.org/0009-0001-9402-4913>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 17.05.2024

Գրախոսվել է՝ 25.06.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024



հաղորդման բուն բովանդակությունը, իսկ արտակայորեն արտահայտվածը հիմք է ծառայում այն վեր հանելու համար, քանզի «խոսքում պարունակվող տեղեկությո՞րը զգալիորեն ավելի հարուստ է նրանից, որը նրանում արտահայտված է ուղղակիորեն: Դեռ ավելին՝ արտակա նշանակությունը ոչ միայն չի սպառում խոսքի ողջ բովանդակային պաշարը, այլև հաճախ չի կազմում նրա ամենակարևոր մասը: Ներակա իմաստները զգալիորեն լրացնում են արտահայտված նշանակությունը և փոխգործակցում են դրա հետ: Խոսքի՝ որպես գործունեության արվեստը ոչ միայն այն է, որ արտահայտի անհրաժեշտ նշանակություններն արտակայորեն, այլև այն, որ հմտորեն առաջացնի ներակա նշանակություններ ու կառավարի ներակա և արտակա իմաստների փոխհարաբերությունը»<sup>1</sup>:

Ներիմաստը լեզվաբանության մեջ քննվել է տարբեր տեսանկյուններից, և, ըստ տարբեր չափանիշների, առանձնացվել են ներակա իմաստների տարբեր տեսակներ: Այսպես, ըստ այն բանի՝ ներակա իմաստը կապված է կոնկրետ-համատեքստային իմաստի, թե ասույթի լեզվական բովանդակության հետ, առանձնացվում են երկու տիպի ներիմաստներ՝ **կոնկրետ-համատեքստային** և **ընդհանուրհաղորդակցական**<sup>2</sup>, ըստ հաղորդման միջոցի՝ **լեզվաբանական**, **ոչ բուն լեզվաբանական** և **արտալեզվական**<sup>3</sup>, ըստ հաղորդվող տեղեկատվության բնույթի՝ **թելադրական** (диктальный) և **եղանակավորող**<sup>4</sup>, ըստ դրսևորման մակարդակի՝ **համակարգային-լեզվական** և **խոսքային**<sup>5</sup>: Իսկ Վ. Բաղդասարյանը, ըստ համատեքստի ընդարձակության և բնույթի, առանձնացնում է **ներիմաստ միկրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ ասույթի շրջանակներում, **ներիմաստ մակրոհամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այնպիսի համատեքստի, որը ներառում է տվյալ ասույթի խոսքային միջավայրը՝ ընդհուպ մինչև խոսքի տվյալ ամբողջական միավորը (ամբողջ նամակը, պատմվածքը և այլն), և **ներիմաստ մետահամատեքստի հիման վրա**, այսինքն՝ այն իրավիճակի, որում իրացվում է խոսքի տվյալ միավորը<sup>6</sup>:

Ներիմաստի տեսակների առանձնացման մեկ այլ չափանիշ է խոսողի կամ

<sup>1</sup> Никитин М. В. Курс лингвистической семантики. Учебное пособие. – 2-е изд., доп. и испр., СПб.: Изд-во РГПУ им. А. И. Герцена, 2007, с. 549.

<sup>2</sup> Տե՛ս և Комиссаров В. Н. Современное переводоведение. Учебное пособие, М.: ЭТС, 2002, էջ 61, **Уморова М. В.** Импликация в семантической структуре текста, [https://studylib.ru/doc/286807/ implikaciya-v-semanticheskoy-strukture-teksta](https://studylib.ru/doc/286807/implikaciya-v-semanticheskoy-strukture-teksta) (մուտք՝ 15.10.2022), էջ 9:

<sup>3</sup> Տե՛ս և Воронюшкина О. В. Виды скрытых смыслов и способы их экспликации // Вестник АлтГПА: гуманитарные науки, 2014, № 21, էջ 65-66:

<sup>4</sup> Տե՛ս և Лисоченко Л. В. Высказывания с имплицитной семантикой (логический, языковой и прагматический аспекты): монография, Ростов н/Д: Изд-во Рост. ун-та, 1992, էջ 15, **Иванкова И. В.**, Модальный имплицитный смысл в художественном тексте, Тамбов: «Грамота», 2011, № 9 (52), էջ 131:

<sup>5</sup> Տե՛ս և Бондарко А. Эксплицитность/имплицитность в общей системе категоризации семантики // Эксплицитность/имплицитность выражения смыслов, Калининград-Светлогорск, 2006, էջ 24:

<sup>6</sup> Տե՛ս և Багдасарян В. Х. Проблема имплицитного, Ер.: Изд-во АН Армянской ССР, 1983, էջ 8-9:

հեղինակի նպատակադրման, որոշակի միտումի բացակայությունը կամ առկայությունը, ըստ որի՝ առանձնացվում են **չկանխամտածված** կամ **ոչ միտումնավոր** և **կանխամտածված** կամ **միտումնավոր** ներքինաստներ<sup>7</sup>: Երբեմն ասույթում առանձին մտքեր, տեղեկություններ կարող են հաղորդվել անուղղակիորեն՝ ներակայորեն՝ անկախ հեղինակի կամքից, այսինքն՝ հեղինակը որևէ նպատակ չի հետապնդում կամ հատուկ միտում չունի իր մտածածը ներակայորեն արտահայտելով, կարելի է ասել՝ ներքինաստը նման դեպքերում ծագում է ինքն իրեն: Սակայն ավելի հաճախ խոսողը կամ հեղինակը ներքինաստ է ներդնում իր խոսքում՝ հետապնդելով որոշակի նպատակ կամ ելնելով որոշակի հանգամանքներից: Քանզի, ինչպես նշում է ռուս լեզվաբան Մ. Վ. Նիկիտինը, «կարող են լինել բազմաթիվ պատճառներ, որոնց դեպքում մտքի, կամքի, ցանկության առաջնային, ուղղակի արտակա արտահայտությունը դիտվում է անցանկալի կամ անարդյունավետ», և խոսողը կարող է ավելի լավ իրագործել իր նպատակը, եթե դիմի անուղղակի հաղորդակցական գործողության՝ իմաստային ծանրաբեռնվածություն մտցնելով ասույթում այնպես, որ լսողն ինքը դատի այդ մասին<sup>8</sup>:

Կանխամտածված ներքինաստի հաղորդման համար հեղինակը/խոսողն իր մտադրությունը կյանքի կոչելու, ցանկալի արդյունքի հասնելու նպատակադրմամբ, կարծես առաջնորդվելով «յոթ չափի՛ր, մեկ կտրի՛ր» սկզբունքով, ընտրում է կոնկրետ լեզվական միջոցներ, հաշվի առնում դրանց կիրառական առանձնահատկությունները, համատեքստում դրանց իրացման հնարավորությունները: Այդ լեզվական միջոցները, ռուս լեզվաբան Վ. Ն. Կոմիսարովի պատկերավոր մեկնաբանմամբ, ծառայում են որպես յուրատեսակ «մտքի աղյուսիկներ» և յուրաքանչյուր ասույթում ընտրվում և իրացվում են այնպես, որ հաղորդակիցները, որոնք ունեն անհրաժեշտ լեզվական և ֆոնային գիտելիքներ, կարողանան դուրս բերել ասույթից հաղորդվող տեղեկությունը, որը «չի հանգում «մտքի աղյուսիկների» պարզ գունարին, որոնցից կազմված է ասույթը»,

<sup>7</sup> См. у **Никитин М. В.**, նշվ. աշխ., էջ 533, **Безуглая Л. Р.** Терминосистема имплицитности в лингвистике // Вісник Харківського національного університету імені В. Н. Каразіна. Серія: Іноземна філологія. Методика викладання іноземних мов, 2016, Вип. 83, էջ 10, <http://surl.li/seowz> (մուտք՝ 01.11.2023): Ներակալի խնդրին անդրադարձած հայ լեզվաբան Վ. Խ. Բաղդասարյանը նախ և առաջ տարբերակում է հեղինակի կողմից **գիտակցված** և **չգիտակցված** ներքինաստներ, ապա առաջին խմբում առանձնացնում է հեղինակի կողմից **կանխամտածված** և **չկանխամտածված** ներքինաստները (տե՛ս **Багдасарян В. X.**, նշվ. աշխ., էջ 9): Իսկ ռուս լեզվաբան Օ. Վ. Վորոնուշկինան, բացի լայն տարածում ունեցող այս երկու տեսակներից, առանձնացնում է նաև երրորդ՝ միջանկյալ տեսակ՝ **ունիվերսալ թաքնված մտքեր**: Սա այն դեպքում է, երբ մտադրությունն աստիճանաբար ձեռք է բերում կիրառական ունիվերսալություն, ինչի օրինակ կարող են ծառայել հանրաճանաչ փոխաբերությունները, խորհրդանիշները և այլաբանությունները, որոնցում առկա է թաքնված և բառացի իմաստների «ունիվերսալ» հարաբերակցություն (տե՛ս **Воронушкина О. В.** Концептуальная база системного описания скрытых смыслов // Филология и человек, Барнаул: Изд. Алтайского университета, 2016, № 1, էջ 14):

<sup>8</sup> **Никитин М. В.**, նշվ. աշխ., էջ 531:

քանի որ «լեզվական միավորների կապակցությունն ասույթում ստեղծում է նոր տեղեկություն, որը բացակայում էր օգտագործված «մտքի աղյուսիկներում»<sup>9</sup>: Եթե խոսքը մասնավորեցնենք բառերի առումով, կարող ենք ասել, որ հատուկ միտումով կիրառված յուրաքանչյուր բառ խոսքում ստանում է նոր կյանք, ձեռք բերում լրացուցիչ իմաստային ծանրաբեռնվածություն, դառնում անհրաժեշտ «ավագե գանգվածը» այն շաղախի, որով հեղինակը կերտում է իր «կառույցը»՝ հատուկ ներդրված նշանակությամբ: Այս առումով միանգամայն դիպուկ է հետևյալ բնորոշումը. «Նախադասությունը չի ձևավորվում որպես բառերի պարզ գումար՝ իրենց նշանակություններով, այլ ավելի շուտ՝ հակառակը. բառերն իրենց նշանակություններով իրական գոյություն են ձեռք բերում միայն որպես համատեքստի մաս ասույթի շրջանակներում»<sup>10</sup>:

Փաստորեն, լեզվական միջոցների ընտրությունն իսկ վկայում է խոսողի կամ հեղինակի որոշակի միտումի առկայության մասին: Այսինքն՝ կարելի է ասել, որ կանխամտածված ներիմաստն ունի իր, այսպես ասած, «ցուցիչները»: Բերենք մեկ-երկու օրինակ: Որպես այդպիսի «ցուցիչներ» կարող են ծառայել **իրար տրամաբանորեն հակասող արտահայտությունները**, օրինակ. **«Շարք օրը՝ փակ դռների ետևում, առանց լրատվամիջոցների ներկայության, իրեն ժողովրդավար հռչակած իշխող կուսակցությունը** հերթական համագումարն արեց նաև կուսակցական ղեկավար մարմնի վարչության ընտրություններ անցկացնելով» («Հրապարակ», Եր., 2022, № 185 (3412), էջ 3). այստեղ հեղինակը միտումնավոր ներակա տեղեկույթ է ներդրել իր ասույթում, որի մասին վկայում է ընդգծված հատվածների միջև եղած հակասությունը: Այդ տեղեկույթը վեր հանելու համար պետք է կատարել որոշակի ենթադրություն, այն է՝ «եթե իշխող կուսակցությունը ժողովրդավար է, ապա ինչո՞ւ է «փակ դռների ետևում, առանց լրատվամիջոցների ներկայության» անցկացնում համագումարը. չէ՞ որ ժողովրդավարությունը ենթադրում է, որ այն պետք է լիներ բացահայտ»: Այդպիսով հեղինակը ներակայորեն արտահայտում է նաև իր բացասական գնահատականը տվյալ իրողության վերաբերյալ:

Կամ նշենք թևավոր դարձած խոսքերը, օրինակ. «Ընդհանրապես, ադրբեջանական կողմում հնչած կարծիքների մասով պետք է նկատել, որ հիմնականում խոսում են ոչ միայն տեղի փորձագետները, այլ նաև Ռուսաստանի ադրբեջանական լոբբիստական կառույցների կողմից սնվող ռուս փորձագետները՝ ներկայացնելով հիմնականում ադրբեջանական կողմի համար ականջահաճո տեսակետներ, ինչը բնական է, եթե հիշենք, որ **«ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը»**» («Հրապարակ», Եր., 2022, № 187 (3414), էջ 4). ընդգծվածն անուղղակիորեն այն միտքն է արտահայտում, որ «ռուս փորձագետներին հենց ադրբեջանական կողմն է վճարում, ուստի նա էլ թելադրում է նրանց ասելիքը»:

<sup>9</sup> Комиссаров В. Н. Современное переводоведение. Учебное пособие, М., ЭТС, 2002, с. 55-56.

<sup>10</sup> Колшанский Г. В. Проблемы коммуникативной лингвистики // Вопросы языкознания, 1979, № 6, с. 52.

Իհարկե, խոսողը կամ հեղինակը կարող է իր միտքն արտահայտել պարզ, բացահայտ ձևով, առանց այլնայությունների, բայց ոչ, նա միտումնավոր դիմում է այլընտրանքային արտահայտման՝ անուղղակիության, ինչի միջոցով մեծացնում է ասույթի իմաստային ընդգրկման ծավալը, ընդգծում իր միտքը, արտահայտիչ դարձնում այն, լսողին կամ ընթերցողին ստիպում լարել միտքը, ջանքեր գործադրել, վերլուծություններ անել այն հասկանալու համար և այլն: Առհասարակ հեղինակը/խոսողն ասույթում տեղեկույթը կանխամտածված ներակայում է՝ ելնելով տարբեր հանգամանքներից, մասնավորապես՝

1. **Էթիկայի նորմերը պահպանելու համար:** Քաղաքավարությունից ելնելով, կոպիտ չլինելու, դիմացինին չվիրավորելու, նրան անհարմար վիճակի մեջ չդնելու համար հաճախ խոսողը դիմում է իր ասելիքն անուղղակիորեն արտահայտելու տարբերակին: Ինչպես նշում է անգլիացի լեզվաբան Ջ. Լիչը, համագործակցության սկզբունքի հետ գործում է նաև **քաղաքավարության սկզբունքը**, որը շատ հաճախ ավելի բարձ է գնահատվում, քան համագործակցության սկզբունքը, և որոշակի դեպքերում փրկում է վերջինիս լուրջ փորձանքից: Քաղաքավարության սկզբունքն ունի ավելի մեծ կարգավորիչ դեր, քան համագործակցության սկզբունքը, քանզի նրա նպատակն է պահպանել սոցիալական հավասարակշռությունը և ընկերական հարաբերությունները, ինչը հնարավորություն է տալիս մեզ ենթադրելու, որ մեր գրուցակիցները համագործակցում են<sup>11</sup>: Ջ. Լիչն առանձնացնում է քաղաքավարության սկզբունքի հետևյալ վարքականոնները.

- ✓ **տակտի վարքականոն.** նվազագույնի հասցնել վնասը գրուցակցի կամ 3-րդ անձի համար (առավելագույնի հասցնել օգուտը գրուցակցի կամ 3-րդ անձի համար),
- ✓ **մեծահոգության վարքականոն.** նվազագույնի հասցնել օգուտը իր համար (առավելագույնի հասցնել վնասը իր համար),
- ✓ **հավանության վարքականոն.** նվազագույնի հասցնել գրուցակցին կամ 3-րդ անձին ուղղված նախատինքը (առավելագույնի հասցնել գրուցակցին կամ 3-րդ անձին ուղղված գովասանքը),
- ✓ **համեստության վարքականոն.** նվազագույնի հասցնել սեփական անձի գովքը (առավելագույնի հասցնել սեփական անձին ուղղված նախատինքը),
- ✓ **համաձայնության վարքականոն.** նվազագույնի հասցնել անհամաձայնությունը իր և գրուցակցի միջև (առավելագույնի հասցնել համաձայնությունը իր և գրուցակցի միջև),
- ✓ **համակրության վարքականոն.** նվազագույնի հասցնել հակակրանքը իր և գրուցակցի միջև (առավելագույնի հասցնել համակրանքը իր և գրուցակցի միջև)<sup>12</sup>:

<sup>11</sup> Տե՛ս G. N. Leech, Principles of Pragmatics, London and New York: Longman, 1983, էջ 81-83:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 132:

Քաղաքավարության այս կանոններով առաջնորդվելով՝ խոսողը հաճախ դիմում է իր ասելիքի անուղղակի ձևակերպմանը: Պատահական չէ, որ, ըստ արտահայտման եղանակի, լեզվաբանության մեջ տարբերակվում է քաղաքավարության երկու տեսակ՝ արտակա և ներակա: Արտակա քաղաքավարությունը այս կամ այն հանրության շրջանում ընդունված նորմալ, տեղին, բառացի կամ ոչ բառացի դրսևորված վարքագիծն է և բնութագրվում է գործող նորմերի պահպանմամբ: Իսկ ներակա քաղաքավարությունը ենթադրում է գիտակցաբար կիրառված մարտավարություններ, որոնք խոսողին հնարավորություն են տալիս խուսափելու հաղորդակցի հեղինակությունը վնաս հասցնելուց, պահպանելու նրա հեղինակությունը և միաժամանակ նպաստում են խոսողի «ինքնաներկայացմանը» որպես հանրության զգուշավոր և նրբանկատ անդամի<sup>13</sup>: Երկրորդ դեպքում խոսողը, կախված իրադրությունից, օգտագործում է լեզվական տարբեր միջոցներ՝ անուղղակիորեն հաղորդելու իր միտքը՝ պատշաճ մակարդակում պահելով հաղորդակցությունը: Այդ միջոցների միավորող հատկանիշը հենց արտահայտման անուղղակիությունն է:

Կանխամտածված ձևով կարող է արտահայտվել մերժումը: Այսպես՝ որպեսզի մերժումը կտրուկ չհնչի, կամ մերժման տպավորությունը մեղմելու համար կարող է ուղղակի բացասական պատասխանի փոխարեն նշվել մերժման պատճառը, օրինակ.

- Վաղը կգա՞ս մեր տուն:
- **Աշխատանքի եմ:**

Բերված օրինակում «Աշխատանքի եմ» ասույթը ներակայում է հաղորդակցության մասնակցի բացասական պատասխանը՝ ինքնին նշելով հրավերի մերժման պատճառը. «Չեմ կարող գալ, քանի որ աշխատանքի եմ»:

Երբեմն էլ հաղորդակցության մասնակիցը ուղղակի մերժման փոխարեն կարող է նշել տվյալ գործողության վատ հետևանքը կամ հետևանքները՝ այդպիսով նպատակ հետապնդելով հասկացնելու դիմացինին իր մերժումը: Այսպես, օրինակ.

- Գնա՞նք զբոսնելու:
- **Պարապմունքից կուշանանք:**

Խոսակիցը մերժում է առաջարկը՝ նշելով հետևանքը, այն է՝ զբոսանքի գնալու հետևանքով պարապմունքից կուշանան:

Կանխամտածված ներակայորեն կարող է արտահայտվել նկատողությունը կամ դիտողությունը՝ տվյալ անձին վատ վիճակի մեջ չդնելու, հնարավոր ծանր ազդեցությունը մեղմելու համար: Այսպես, օրինակ, երբ կարդում ենք ինչ-որ հարցի կամ թեմայի շուրջ մեկի գրած աշխատանքը, որում ինչ-ինչ մտքեր սխալ են ձևակերպված, փոխանակ ուղիղ ասելու՝ «Այս միտքը սխալ է / սխալ ես ներկայացրել», կարելի է դա ներակայելով ասել. «Ինչո՞ւ այս միտքը փոքր-

<sup>13</sup> St' u Ерзинкян Е. Л. Лингвистическая категория вежливости: семантика и прагматика, Ер.: Изд. ЕГУ, 2018, էջ 128-130:

**ինչ այլ կերպ չձևակերպել»:** Նման դեպքերում օգնության է գալիս մեղմասությունը, որը կոպիտ խոսքի փոխարինումն է մեղմ տարբերակով:

Բերված օրինակները ներկայացնում են խոսքային անուղղակի ակտեր, որոնց «կատարողական մտադրությունը չի համապատասխանում արտաբերվող ասույթի լեզվական ձևավորմանը, բայց շփման իրադրության համագործակցային սկզբունքների կիրառմամբ ընկալվում է լսողի կողմից»<sup>14</sup>: Դրանք ներակայորեն արտահայտում են այնպիսի միտք, որը համակարգայնորեն համապատասխանում է մեկ այլ ասույթի, վերջինիս բուն նշանակությունն է:

**2. Հասարակական դիրքով, հարաբերություններով պայմանավորված՝ հաղորդակցությունը պատշաճ մակարդակում պահելու համար:** Մարդկանց միջև հարաբերություններն ընդհանուր առմամբ որոշում են նաև ասելիքի արտահայտման եղանակը, միջոցը: Այսպես՝ նույն միտքը մենք շատ հաճախ չենք կարող արտահայտել նույն ձևով, երբ խոսում ենք վերադասի կամ առհասարակ դիրքով ավելի բարձր անձի հետ և երբ խոսում ենք, օրինակ, ընտանիքի անդամների կամ ընկերոջ հետ: Օրինակ.

– **Եթե շահն հաճի լսել**, ես կբացատրեմ պատճառը,– խոսեց Շահռուխը, որ կանգնած էր իշխանների մոտ<sup>15</sup> (ՄԵ, էջ 195):

Իշխանական հիերարխիան թույլ չէր տալիս, որ Շահռուխ բեկն ուղղակիորեն հարց հղեր շահին՝ հարցնելով նրա ցանկությունը (օրինակ. «Ուզո՞ւմ եք լսել»): Այդ պատճառով նա իր միտքը՝ հարցը, որը տվյալ դեպքում հաղորդվում է ներակայորեն, ձևակերպում է պատմողական նախադասությամբ, բայց հասկանալի է, որ նա այդպես իրականում շահի թույլտվությունն էր հայցում:

**3. Ասելիքը քողարկելու ձգտումով:** Կյանքում շատ են դեպքերը, երբ մենք պարզապես չենք կարող բացահայտ ասել այն, ինչ մտածում ենք: Հաճախ անհրաժեշտ է լինում, որ ասելիքը հասկանալի լինի կոնկրետ թիրախային անձին կամ անձերին միայն, իսկ մյուսներն անհաղորդ մնան ասվածին: Այդ իսկ պատճառով բուն ասելիքը կողավորվում է: Ճիշտ է, տվյալ դեպքում հարց է, թե որքանով կողավորված հաղորդումը կրնակալի նա (նրանք), ում (որոնց) հասցեագրված է: Օրինակ.

– Բարի է, Նար իշխան,– և ավագ Համունին, հեծնելով նժույզը, կռացավ և նորից խոսեց կիսաձայն.– սակայն ինձ և ամենքիս մտահոգում է Անգեղաց իշխանիկը: Գնա հանկարծ և...

– **Եղիբ անհոգ: Նա կդառնա անվտանգ.**– Կամսարականը հանգստացնող մի շարժում արավ, որից Համունին թեև չհասկացավ ոչինչ, բայց գլխով արավ<sup>16</sup> (ՍՁ, էջ 40):

<sup>14</sup> Ռ. Դոխայան, Խոսքային անուղղակի ակտերը արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում // Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Եր.: «Լինգվա», 2022, № 1 (60), էջ 91:

<sup>15</sup> Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր.: Հայպետհրատ, 1963:

<sup>16</sup> Ստ. Զորյան, Հայոց բերդը, Եր.: Հայպետհրատ, 1959:

Կամսարական իշխանը չէր կարող այլոց ներկայությամբ բացահայտ ասել Նար իշխանին իր ձեռնարկած քայլի մասին, որ իր թիկնապահներին ուղարկել է սպանելու Անգեղաց իշխանիկին, որպեսզի նա այլևս վտանգ չներկայացնի իրենց համար, քանզի նա հակառակ թևում էր: Այսինքն՝ Կամսարական իշխանը հատուկ դիտավորությամբ ուղղակիորեն նշում է այն պատճառ-գործողության հետևանքը, որը ներակայվում է, որպեսզի մյուսները չհասկանան. «Անգեղաց իշխանիկին կսպանեն, ուստի նա կդառնա անվտանգ»:

**4. Խոսողի համար բուն միտքն ուղղակիորեն արտահայտելու անհնարինությունը:** Նախորդիվ նշեցինք, որ հաճախ հանգամանքները թույլ չեն տալիս ուղղակիորեն արտահայտել մեր միտքը, բայց և կան դեպքեր, երբ դա պարզապես անհնար է. «Ներակայորեն մենք կարող ենք արտահայտել ոչ միայն այն, ինչի մասին չենք ուզում խոսել ուղիղ ձևով, այլև այն, որ և ավելի կարևոր է, ինչն առհասարակ չի կարող ամբողջապես և հստակ արտահայտվել արտակայորեն»<sup>17</sup>:

Որպես օրինակ բերենք մի հատված Արշակավանում ապաստանած շինական Թորգոմի և Գնունի իշխանի գրույցից.

– Եվ ի՞նչը կուզեիր իմանալ...

– Մի շինական, որ իշխան է սպանել, կարո՞ղ է գալ այստեղ... քաղաք, և դուրա համար չե՞ն պատժի նորան կամ... չեն վերադարձնի տիրոջը (ՄՁ, էջ 86):

Թորգոմը չէր կարող ասել, որ իշխանի է սպանել՝ Դավիթ Համունուն, բայց ուզում էր իմանալ, թե ինչ պատիժ կսահմանվեր իր համար, եթե պարզվեր դա: Ուստի նա, փոխանակ ասելու, որ ինքն է սպանություն գործել, քանի որ դա նա իր համար անկարելի էր համարում, իր հարցը ձևակերպում է ընդհանրական իմաստով, թեև կարելի է հասկանալ, որ մասնավորեցված իմաստ է քողարկվում, և հարցի սուբյեկտը՝ այդ շինականը, որն ուղղակիորեն չի անվանվում, հենց ինքն է:

**5. Ուշադրություն գրավելու համար:** Լսարանի ուշադրությունն իր խոսքի վրա հրավիրելու, այդպիսով նրա միտքը լարելու համար հեղինակը/խոսողը որոշակի տեղեկույթ թողնում է տողատակում, որպեսզի ընթերցողը/լսողն ինքը մի պահ կանգ առնի, անդրադառնա ասվածին, վերլուծի և վեր հանի հեղինակի «չասածը»: Օրինակ. «Իսկ «Հայաստան» դաշինքը, ավաղ, կարծես թե խանդավառ վազում է երրորդ արտահերթ ընտրությանը նույն հին ձևերով, նույն փոցխը երրորդ անգամ տրորելու» («Իրավունք», Եր., 2023, № 129 (3740), էջ 4). իր ասելիքի մի մասը հեղինակը ձևակերպել է այլ կերպ, որն այժ է ծակում և ստիպում ընթերցողին որոշակի վերլուծություն անել՝ վեր հանելու դրա տակ թաքնված իրական իմաստը: Նախ վերլուծվում է, թե ինչ է ենթադրում փոցխը տրորելը. երբ մարդը տրորում է փոցխը, այսինքն՝ կանգնում է փոցխի գլխին, պոչը հետ է դառնում՝ հարվածելով նրա դեմքին: Այնուհետև ընթերցողը

<sup>17</sup> Хоанг Фэ, Семантика высказывания // Новое в зарубежной лингвистике, Выпуск 16. Лингвистическая прагматика, М.: «Прогресс», 1985, с. 399.

ջանում է հասկանալ, թե հեղինակն ինչ իմաստ է ներդրել դրա մեջ, ինչ է ցանկացել ասել. տվյալ դեպքում հեղինակն ընդգծված պատկերավոր արտահայտությամբ ներակայում է այն, որ «դաշինքը, անցած երկու փորձից դասեր չքաղելով, երրորդ անգամ գնում է նույն քայլին՝ գործողությանը, որի հարվածը նորից անդրադառնալու է հենց իր վրա»:

6. **Մթնոլորտը շիկացնելու, դիմացինին է՛լ ավելի գրգռելու միտումով:** Այս խմբում կարելի է ներկայացնել այն դեպքերը, երբ հարցմանն ուղղակի պատասխանելու փոխարեն տրվում է լրացուցիչ տեղեկություն, ինչի նպատակն է է՛լ ավելի մեծացնել լարումը: Հիշենք Արշակ արքայի և Տիրիթի գրույցը Գնելի մասին: Տիրիթը նպատակ ուներ Արշակ արքային տրամադրելու Գնելի դեմ, որպեսզի վերջինիս ձեռամբ վերացնեն Գնելին իր ճանապարհից, այդ պատճառով նա Արշակ արքայի հարցերին ուղղակի պատասխան տալու փոխարեն այլ տեղեկություն էր զուգահեռաբար հաղորդում: Այսպես՝ Արշակը հարցնում է, թե ինչով են զբաղվում Գնելն ու նրան այցելած նախարարների որդիները.

– Եվ զբաղվում են զինախաղով:

– Երբեմն և որսագնացությամբ, արքա, – ասաց Տիրիթը և լռեց՝ խուսափուկ հայացքը նորից հաճելով գահասրահում (ՄՁ, էջ 110):

Տիրիթը պարզապես պատասխանելու, որ հենց զինախաղով են զբաղվում, հավելում է անում՝ ներակայելով հարցի դրական պատասխանը՝ այդպիսով ցանկանալով ավելի գրգռել Արշակին և է՛լ ավելի տրամադրել Գնելի դեմ:

7. **Խոսքն ավելի ազդեցիկ, արտահայտիչ ու պատկերավոր դարձնելու համար:** Խոսողը/հեղինակը շատ հաճախ միտում ունի ոչ միայն հաղորդելու ինչ-որ բան անուղակիորեն, այլև դա այնպես հաղորդելու, որ իր խոսքն ավելի ազդեցիկ լինի, և ներազդման ուժը՝ ավելի մեծ: Օրինակ. «... Բաքուն հսկայական լոբբիստական աշխատանք էր կատարել՝ ջանալով հասնել նրան, որ իր դաշնակից Իսրայելի ԱԲ-ն Հայաստանը ճանաչի հակասեմական երկիր: Գործը գրեթե 100 տոկոս հաջողած էր, սակայն ըստ Տելեգրամ ալիքներում առկա տեղեկատվության, «անհայտ» երկրի իրավասու կառույցից Թեյ-Ավիլ փոխանցվել է տեղեկատվություն հրկիզման իրական կազմակերպիչների և կատարողների մասին: Այս անգամ սև խավիարը չօգնեց...» («Իրավունք», № 129 (3740), էջ 1): Թաքնված ներիմաստն ընկալելու համար օգնության են գալիս ֆոնային գիտելիքները: Պետք է նախ իմանալ, թե ինչ է խավիարային դիվանագիտությունը, որը վերագրվում է Ադրբեջանին: Դա Ադրբեջանի լոբբիստական ռազմավարություն է, ըստ որի՝ երկիր հրավիրված օտարերկյա պատվիրակները որպես նվեր ստանում են սև խավիար, դրա հետ՝ նաև այլ թանկարժեք «նվերներ»՝ ոսկի, գումար և այլն, որոնց հետևում կոնկրետ նպատակ է թաքնված: Տվյալ օրինակում «սև խավիար» ասելով հեղինակը զուտ խավիարը նկատի չունի, այլ դրանով ներակայում է հենց այն «նվերները», նյութական միջոցները, որոնք Բաքուն ներդրել էր իր ուզածին հասնելու համար, որոնք, սակայն, չճառայեցին իրենց նպատակին, այսինքն՝ ընդգծվածը ներակայում է «Բաքվի



դիվանագիտությունն այս անգամ ձախողվեց» իմաստը:

Առհասարակ խոսքը տպավորիչ ու արտահայտիչ դարձնելուն ծառայում են արտահայտչական-պատկերավորման միջոցները, որոնք շատ դեպքերում հանդես են գալիս որպես ներիմաստի կրողներ՝ միաժամանակ կատարելով երկու գործառույթ՝ խոսքի պատկերավորման և ներիմաստի հաղորդման<sup>18</sup>:

8. **Հաղորդվածի նկատմամբ սեփական վերաբերմունքն արտահայտելու և այն գնահատելու համար:** Հեղինակը կամ խոսողը երբեմն իր խոսքը կառուցում է այնպես, միտումնավոր ընտրում է այնպիսի միջոցներ, որ, բացի որոշակի տեղեկությոցից, անուղղակիորեն ներակայորեն արտահայտի իր վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ, օրինակ. ««Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ-ի և «Բալասանյան դաշինք»-ի **«ապահարգանի»** գործընթացից» (<https://armkur.am/1324916/>): Խոսքը ՔՊ-ի և «Բալասանյան դաշինք»-ի միջև համագործակցության խզման մասին է, իսկ **ապահարգան**-ը ամուսնության օրինական լուծարումն է, որը հողվածագիրը, տվյալ դեպքում կիրառելով այլ իմաստով, ներակայորեն արտահայտում իր քամահրական վերաբերմունքը նշյալ երևույթի նկատմամբ<sup>19</sup>:

9. **Բուն հարցին պատասխանելուց խուսափելու՝ մանևրելու միտումով:** Երբեմն, տարբեր հանգամանքներով պայմանավորված, օրինակ՝ հասարակական հարաբերությունների թելադրանքով, բախումից խուսափելու համար և այլն, խոսակիցն ընտրում է հարցին անուղղակիորեն պատասխանելու տարբերակը՝ ներակայելով բուն պատասխանը, որի վերականգնումը առանձին դեպքերում կարող է միանշանակ չլինել: Օրինակ.

– Հավանական չէ ս գտնում այս բացատրությունը,– հարցրեց Շահր Ամիրգյունեին:

– Եթե իմ արեզակնափայլ տերը հավանական է գտնում...

– Բոլորովին հավանական, ընդհատեց շահր գայրագին... (Մ<sup>Ե</sup>, էջ 195):

Պատասխանողը Ամիրգյունեն, զգուշանալով<sup>20</sup>, որ իր պատասխանը կարող է հակասել շահի համոզմանը, ինչը նրա համար ցանկալի չէր, ուղղակի պատասխանելու, որ հավանական է համարում կամ ոչ, այնպես է ձևակերպում իր

<sup>18</sup> Խոսքի արտահայտչական-պատկերավորման միջոցների այս գործառույթին անդրադարձել ենք առանձին քննությամբ (տե՛ս Մ. Կետյան, Պատկերավորման-արտահայտչական միջոցները որպես ներիմաստի արտահայտման ոճական հնարանքներ: Քննություն նոր լրսյսի ներքո // ՎԼԸ, Եր., 2022, № 4, էջ 173-190):

<sup>19</sup> Մասնավորապես հայերենում խոսողի կամ հեղինակի բացասական-հեզմական վերաբերմունքի ներակա արտահայտման առնչությամբ տե՛ս մեր «Խոսողի/հեղինակի բացասական-հեզմական վերաբերմունքի ներակա արտահայտումը արդի հայերենում» հոդվածը («Գիտական Արցախ», Եր., 2023, № 3, էջ 109-120):

<sup>20</sup> Զգուշավորության և ներիմաստի միտումնավոր արտահայտման մի քանի այլ պատճառների մասին տե՛ս Ն. Սանուկյան, Ե. Երզնկյան, Կանխամտածված ներիմաստի արտահայտումը զեղչված և անավարտ նախադասություններում // Օտար լեզուները Հայաստանում, Եր., 2013, № 1 (22), էջ 19-32:

կարծիքը, որ բոլոր դեպքերում համընկնի շահի կարծիքին՝ այդպիսով ներակայելով պատասխանի հնարավոր տարբերակները, որոնք կարող են մեկնաբանվել, օրինակ, այնպես, որ եթե արեգակնափայլ տերը հավանական է համարում, ապա այո՝, դա միանգամայն ճիշտ է, և ինքը ևս հավանական է համարում, իսկ եթե արեգակնափայլ տերը հավանական չի համարում, ինքը՝ նույնպես: Ընդ որում նրա մտադրությունը շահը հասկանում է՝ ընդհատելով նրա խոսքը:

Առհասարակ խոսքային մանրը հնարավորություն է տալիս խուսափելու հաղորդակցական ռիսկերից, հաղորդակցության անհաջող կամ անցանկալի ելքից, և ներակայումը, որը նպատակ ունի քողարկելու բացասական ենթատեքստը և թույլ չտալու խոսակցի հուզական բացասական ռեակցիան, դիտվում է որպես խոսքային մանրի միջոցներից մեկը<sup>21</sup>: Մանրելու, հարցին ուղղակիորեն պատասխանելուց խուսափելու միջոց է հարցին հարցով պատասխանելը, որով միաժամանակ գրուցակիցը ներակայորեն հասկացնում է սրված հարցի անտեղին լինելը: Օրինակ.

– Դուք ծածուկ քարոզարշավ եք արել, որ գիտեք, թե երևանցիներն ինչ են ուզում:

– Իսկ Դուք քանի՞ հոգու հետ եք ինտերվյու արել, որ ինձնից շատ գիտեք երևանցու ուզածը, թող անհամեստություն չհնչի («Հրապարակ», Եր., 2023, № 93 (3548), էջ 2):

Լրագրողի հարցին, որում ներակայորեն դրսևորվում է նաև նրա հեզնական վերաբերմունքը, գրուցակիցը, որն ընկալում է հարցում թաքնված ներմաստը, մասնավորապես՝ լրագրողի հեզնանքը, պատասխանում է ոչ թե ուղղակիորեն, այլ հարցով, որում ինքը ևս ներակայորեն արտահայտում է իր հեզնանքը և այն, որ հարցը անպատշաճ է:

Երբեմն էլ գրուցակիցը հարցի բուն պատասխանից խուսափելու համար հիմնվում է հենց սրված հարցի վրա՝ օգտագործելով դրանում արտահայտված որոշ կետեր: Օրինակ.

– Պարոն Խաչատրյան, լավ եղավ, որ Արթուր Դավթյանը դուրս եկավ հավակարգից, **նրա հետ կոնֆլիկտ ունեիք**:

– Ես որևէ մեկի հետ կոնֆլիկտ չունեմ («Հրապարակ», № 187 (3414), էջ 2):

Լրագրողի հարցը ձևակերպված է այնպես, որ դրա համար հիմք է ծառայում **«նրա հետ կոնֆլիկտ ունեիք»** իրողությունը, այսինքն՝ ըստ դրա պետք է ասել՝ լավ եղավ նշվածը, թե՛ ոչ: Քաղաքական գործիչը հիմնվում է այդ իրողության վրա և ոչ թե տալիս է կոնկրետ պատասխան, այլ ժխտում է հարցման հիմքը՝ այդպիսով ներակայորեն հասկացնելով լրագրողին, որ հարցն անտեղի է, գուրկ հիմքից:

<sup>21</sup> Sté u O. C. Иссере, А. В. Журова, Имплицитность как способ речевого маневрирования в публичной коммуникации // Вестник Омского государственного педагогического университета. Гуманитарные исследования, 2022, № 1 (34), էջ 83:

10. **Ընդգծելու համոզման ուժը:** Երբեմն խոսողն իր համոզումն ընդգծելու համար այն ներկայացնում է մեկ այլ կաղապարով, քանի որ շատ հաճախ ուղղակիորեն ասված միտքը հասարակ ու պարզ է լինում, մինչդեռ այլակերպ ձևակերպումն այն կարող է ավելի գորեղ ու ազդեցիկ դարձնել: Օրինակ. «Առուշան Հակոբյանը հայտարարեց. «Բայց Արծվաշեն հայկական շուն էլ ուղարկես չի գնա: Արծվաշենի փոխանակումը կործանում է»» («Առավոտ», Եր., 2023, № 221 (6993), էջ 2): Հայտնի է, որ Արծվաշենը Ադրբեջանի կազմում Հայաստանի անկլավ է, որտեղ իշխող պայմանների պատճառով հայերի բնակության մասին խոսք լինել չի կարող, այսինքն՝ ընդգծվածը ներակայում է այն միտքը, որ այնքան վատ են պայմանները, որ հայը չի գնա այնտեղ ապրելու: Ներակայելով դա և արտահայտելով ավելի կոշտ ձևակերպմամբ՝ խոսողն ավելի է ընդգծում այդ համոզումը: Այսինքն՝ ամենապարզ, ամենահասարակ միտքն անգամ, հաղորդվելով անուղղակի ձևակերպմամբ, այսինքն՝ ներակայվելով, հաճախ կարող է շատ ավելի համոզիչ դառնալ:

Այսպիսով՝ միշտ չէ, որ ամեն ինչ ասվում է ուղղակիորեն: Շատ հաճախ խոսքում պարունակվող տեղեկույթը շատ ավելի լայն է, քան արտահայտված է տվյալ կառույցում, ավելին՝ հենց այդ արտակայորեն չարտահայտվածը՝ ներիմաստն է կազմում խոսքի բուն բովանդակությունը: Այն հարստացնում է խոսքի ընդգրկումը: Ընդ որում խոսողը կամ հեղինակը շատ հաճախ ինքն է կանխամտածված ներիմաստ ներդնում իր խոսքում՝ ելնելով տարբեր հանգամանքներից և հետապնդելով տարբեր նպատակներ, այսինքն՝ ընտրում է հատուկ միջոցներ, խոսքը կառուցում այնպես, որ բուն ասելիքը սևով սպիտակի վրա գրված չլինի, այլ ընկալվի որպես տողատակ:

**МИРАНУШ КЕСОЯН – *Выражение преднамеренного имплицитного смысла в современном армянском языке.*** – Имплицитный смысл рассматривался в лингвистике с разных точек зрения, и в соответствии с разными критериями были выделены разные типы имплицитного смысла. В частности, в зависимости от отсутствия или наличия намерения, определенной тенденции говорящего или автора, различаются непреднамеренные и преднамеренные смыслы. В данной статье рассматривается преднамеренный смысл, в частности, то, какими обстоятельствами и тенденциями может быть вызвано намеренное внедрение имплицитного смысла в речь. В случае передачи преднамеренного смысла автор/говорящий осознанно выбирает языковые единицы: обдумав и проанализировав ситуацию, он, в соответствии с ситуацией и своей целью, выбирает необходимые языковые единицы для того, чтобы лучше имплицитно передать смысл своей речи. И даже самую простую, самую ясную мысль он может замаскировать, передав её как преднамеренный смысл.

В армянской лингвистике в целом имплицитный смысл изучен слабо, и данная статья является попыткой в некоторой степени восполнить пробел в этой области.

**Ключевые слова:** *имплицитный смысл, преднамеренный имплицитный смысл, непреднамеренный имплицитный смысл, тенденция, этика, вежливость, косвенные речевые акты, фоновые знания, манёвр, имплицитное отношение*

**MIRANUSH KESOYAN – *The Expression of Intentionally Implied Meaning in Modern Armenian.*** – The implied meaning in linguistics has been examined from various perspectives, and according to different criteria, different types of implied meaning has been distinguished. In particular, according to the intention of the speaker or author, in the absence or presence of a certain intention, unintentionally and intentionally implied meanings are distinguished. In this article, intentionally implied meaning is examined, in particular the circumstances and tendencies that can lead to the intentional introduction of implied meaning in the speech. In the case of intentionally implied meaning, the choice of the language units is considered by the author/speaker; he/she chooses linguistic units to best convey what he/she has to say, according to the situation and his/her purpose, after thinking thoroughly. The speaker/author can disguise even the simplest thought with a special intention by passing it off as a intentionally implied meaning.

In Armenian linguistics, the implied meaning has been little studied in general, and this article is an attempt to some extent to fill in that gap in this field.

**Key words:** *implied meaning, intentionally implied meaning, unintentionally implied meaning, intention, ethics, courtesy, indirect acts of speech, background knowledge, maneuver, implied attitude*

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1  
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1  
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ [journals.ysu.am](http://journals.ysu.am)  
Էլ. փոստ՝ [erhbanber@ysu.am](mailto:erhbanber@ysu.am)

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝  
Издательский редактор  
Publishing Editor

Արմեն Հովակիմյան  
Армен Овакимян  
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գայանե Գրիգորյան  
Гаяне Григорян  
Gayane Grigoryan

Թղթարկման պատասխանատու՝  
Ответственный выпуска  
Issued by

Հասմիկ Եսայան  
Асмик Есаян  
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 04. 07. 2024: